



Fungus

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌՈՒԵՍՏ

Ե. ՏՄԻՐ 1968 ԱՌՈՒԹՅՈՒՆ

digitized by A.R.C.

پاكين

مجلة شهرية ، أدبية وفنية علمية
مدير المسؤول
السيد ارئين كارنيك قرانجيات

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ

ԴՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐԹԻՍՏԻ

ՎԱՌԻՔ ՆՍՐԱԳԻՐ
Գ. ՍԱՍՈՒՆԻ
ՆՍՐԱԳԻՐ
Գ. ՄՆԱԳԵԱՆ

ՆՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ
ԱՆԳԱՄՆԵՐ
Յ. ԳԵՂԱՐԳ
Յ. ՈՍԿՈՒՆԻ
Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ
Ժ. ԱԹԱՐԵԱՆ

ՀԻՍՏՈՐԻԱԿԱՆ ՆՅԱՄՆԵՐԵՆ
† ԵԳ. ՊՅՈՍԵԱՆ

Խմբագրութեան կառուց

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban

Հեռաձայնի թիւ 296898

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Ն. ՊԵՇԻԿՅԱՆ
- Վ. ՕՇԱԿԱՆ
- Ա. ԵՐԿԱԹ
- ԱՐՇԻ
- Ա. ԶԱՐԵՆՈՒՏԵԱՆ
- Հ. ՅՈՎԻՏԵԱՆ
- ՆԵՐՍԷՍ ՎԱՐԻԱՊԵՏ
- Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ
- Ժ. ՓԼԷՆ
- Ռ. ԳԱՌՕՆԷ
- Ժ. ԱԹԱՐԵԱՆ
- Ա. ԱՐԾՐՈՒՆԻ
- Ն. ՎԻՐԱՊԵԱՆ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- Լ. ՄԿՐՏԶԵԱՆ
- Յ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
- Գ. ԹՈՐՈՍԵԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ԼՈՒՐԵՐ

Բարձր

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Ե. ՅԱՐՐ, ԹԻՒՒ 4

Ա.ՊՐԻՆ, 1969

ՊԵՐՏԻՐ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Ց Ը

ՆՇԱՆ ՊԵՇԻԿՔԱՇԵԱՆ

Երա՞զ էր թէ տեսիլ կամ տեսիլ երազախառն, տեսակ մը մաս մեղպոմենեան ողբերգութեան, որուն ընդելուզում էին կտորներ շարժանկարի: Թէ ո՞ր բաժինն էր թատրոն ու ո՞րը շարժանկար, ըսել չեմ կրնար, քանի որ իրականութեան մը առջեւ չէի, չէի նաեւ արթուն, հակառակ որ տեսածներս այնքան իրականանձան էին:

Առաջնորդուեցայ ընդարձակ սրահի մը առաջին կարգի աթոռներէն մէկը: Քո՛վս, ա՛նեակ, կը դտնուէր փայլուն տիկին մը, որ մասկոյտ ու մուշտակակոյտ էր: Աջ կողմս կը դտնուէր անտանօթ մը, որ կը հռտէր միլիոն ու մեքենայ:

Սրահը լեցուն էր, նոյնիսկ մնացածներ կային ոտքի: Շատերու ձեռքը կային զրիլ ու թուղթ:

Հանդիսականներու ղէ՛մը, դա՛ւա-

կերպ թիկնաթոռի մը վրայ նստած էր Մէկը, ղէ՛մըը դարձուցած մեզի:

Մէկը... Մա՞րդ էր թէ մարտիրոս. հերո՞ս էր թէ հոգի... Կը նմանէր նաեւ նահապետի, նահատակի... Դարերը ղէ՛մքին վրայէն անցած էին, ու զարկած էւ զարգարած գմբէթաբէ՛ր ճակատը, վարզագորշմ կնիքներով ու կնճիռներով:

Նայուածքը կու գար վերապէ ու կը հասնէր մինչեւ հոգիներու խորը ու մինչեւ երկին:

(Կը յիշեմ որ սրահէն ներս մտած ատենս, ծանօթ մը տկանիկս փսփսաց, թէ ո՞վ է թիկնաթոռի մէկը նստողը):

Արեւուն տակ երբեք տեսնուած չէր տարօրէն ստապակեայ արարած այլալիսի:

Դէ՛մըը կ'երանգափոխուէր, տարիքը նոյնպէս, կութիւնը նմանապէս:

Հուռ էր, քանզի աստուածային բան մը կար իր մէջ:

Յիսուսի ծերութիւնն էր, խոր ու խոտովիլ ծերութիւնը Ուշեային:

Աւելի կերպարանք էր, քան կեանք, քան մարմին:

Աղօտ փայլ մը կար իր վրայ. նշոյլն էր յոյսին:

Իր առջև կրնային խոնարհիլ աշխարհի բոլոր մարտիրոսները, որոնց մեծադոյնն էր: Յիսուս անգամ պիտի խոնարհէր իր առջև, քանզի իր շարժարանքները տեսչիկն Հաղիւ քանի մը օր, մինչդեռ այս Մէկինը երկարաձգուած էր դարէ վար:

Ինծի կը թուէր, թէ ժպտութիւնն էր անոր առջև նստած ըլլալը: Եւ սակայն Հայերէ բողոքացած բազմութիւնը ոչ միայն նստուկ էր, այլ շատեր կը ծիւծիին: Կային նոյնիսկ ծունկը ծունկի վրայ նետողներ: Չնստողները աթոռ շղանուելուն համար մնացած էին յոսնկայս, եւ ոչ յանուն յարգանքի, ակնածանքի:

Ուշադրութիւն ըրի որ ջրովս նստած կիկն՝ փափաք ուի չեստ խօսելու: Վերջապէս, ըսաւ.

- Ի՞նչ կը մտածէք...

- Ինչ մը մտածելէ առաջ, պիտի ելլեմ ու աղաղակեմ որ նստողները ծընրողներն այս մեծագոյն մարտիրոսութեան տեսիլին առջև: Ոտքի կեցողներն ալ թո՛ղ երկիրպաղանեն: Ան մենէ է. մեր մէջէն է. մեր լուսադոյն մասն է. մեր մտածումն է: Մեր սիրտէն սիրտ է ու մեր հոգիէն հոգի: Իր առջև ո՛չ նստիլ կ'ըլլայ, ոչ ալ կենալ ոտքի:

- Ձըլլա՛յ որ ատանկ բան մը առաջարկէք:

- Ինչո՞ւ:

- Որովհետեւ ես կին եմ, Կ'ըտին թէ շատ կը նմանիմ թաղուհիի: Ծունկերս ալ ցաւոտ են: Ինծի կը վայլէ՞ որ դամ ծունկի: Հազուադեպս ալ պիտի աղտոտին:

- Ձեր հոգին աղտոտելուն, թող մեր Հազուադեպս աղտոտին:

- Հոգիին աղտոտութիւնը չ'երեւիր: Հազարդութիւն մը կ'անեմ, կը սրբեմ

Բայց Հազուադեպս աղտոտութիւնը կ'երեւիր: Մաքրել, արդուկել տալն ալ դործ է, ծախս է:

- Ինչո՞ւ եկած էք այստեղ...

- Մեղա՛յ Աստուծոյ... Որովհետեւ Հետաքրքիր եմ: Այսինքն անտարբեր չեմ, ոչ ալ անզգայ: Որովհետեւ ազգս ու Հայրենիքս զիս կը շահադրուեն: Հանրածանօթ Հայաստանսէր մըն եմ: Սիրտս ա՛մէն բանի համար տաք է: Զոհողութեան ալ պատրաստ եմ, եթէ ինչիքնեքը ուղածիս պէս կարգադրուին:

- Անշուշտ զոհողութիւն՝ ծունկի չեկողի:

- Հատկցայ: Դուք անոնցմէ էք:

- Ես ալ Հատկցայ: Դուք ի նոցանէ էք:

Ու կարծէք սուր մը կտրեց մեր խօսակցութեան Հանդոյցը:

Խորունկէն կը լսուէր երաժշտութիւն մը, որ թէ եւ մեղմ էր, բայց՝ մասլ:

Մարդուկ մը, չըջապատուած բազմաթիւ համախոհներով ելաւ ոտքի, մերձեցաւ այն Մէկին, եւ Աւետարան կարդացողի պէս եղանակաւ ըսաւ.

- Այս Արդարին, այս Դժբախտին համար պէտք չէ դիմել օտարներուն:

Ո՛չ, եղբարք, ո՛չ. օտարներէն չկայ յոյս: Մենք Հայերս անգամ օտարացած ենք, նաեւ օտարացած ենք Հանդէպ իրարու, որով պէտք չէ դիմել Հայերուն ալ: Ո՛չ, եղբարք, ո՛չ, Հայերէն իսկ չկայ յոյս: Պէտք է միայն ու միայն դիմել մեր Երկնաւոր Հօրը: Պէտք է տիւ եւ շիշեր անվազար աղօթել: Քանզի Աստուած մեծ է: Աստուծոյ ամէն բանը մեծ է, իր մեծութեան մատաղ ըլլամ: Լոողութիւնն ալ մեծ է: Ունինք քանի մը կաթողիկոս, քանի մը հատ ալ պատկերի պէս պատրիարք: Էջմիածնայ Վեհափառը ձախից, Կիլիկիոյ Վեհափառը ալից, Հայ կաթողիկէներու կաթողիկոս-պատրիարքը առջևից, Հայ բողոքականներու աղապետը ետեից, եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները ջովերից, թո՛ղ աղօթեն ու աղօթեն: Մենք ալ իբրեւ տիրացու՝

ըլլանք մասնակից: Կառուցանենք նորանոր եկեղեցիներ, ու բարձրացնենք մեր

աղօթքները եւ լիցնենք պանծանքը Աստուծոյ: Աստուած մեծ է եւ Հօր ու որդի մած, նաեւ քաջ տեսնող աղօթողները, լաւ լսող աղօթքը, շատ հոտոտող աղօթքին խառնուած դմուռն ու կնդրուկը: Կընդունի մեր խնդրանքը, եթէ աղօթինք հոգեւին, կը դժայ ու մեր խնդրանքը կը կատարէ, թէ՛ շուտ, թէ՛ լաւապէս: Այս է միակ հելլէական, հրաշալործ ու յաւիտենական միջոցը, եւ փառք յաւիտենա յաւիտենից: ամէն: Մոռցալ ըսելու որ աղօթքին խնդրականն է խնայողական միակ միջոցը, փրկելու այս քաջընուած Մարտիրոսը:

Ոմանք ծափահարեցին, ոմանք ալ ծիծաղեցան:

Մէկը պոսաց.

- Տիրացունքեր, մտէ՛ք անկիւնոց: Անկողմս նստած մեծ միջոնատէրը հարցուց.

- Տարիքը ի՞նչ է սա ծերունիին:

- Ո՞ր տարիքը...

- Մէկը քանի՞ տարիք կ'ունենայ...

- Նայած մէկին:

- Այս մէկը կին չէ, որ ունենայ բազմաթիւ տարիքներ:

- Կին չըլլալով հանգերձ, ունի քանի մը տարիքներ:

- Վերջին տարիքը կրնա՞ս ըսել...

- Նոր տարիքովը վաթսուներեք էր մօտենայ: Իր կեանքի վերջին շրջանին տարիքը:

- Աւելի հին տարիքը...

- Իննըսունին կ'երթայ:

- Ուրիշ տարիք ալ ունի...

- Անշուշտ: Աւելի հինով վեց հարիւր տարեկան է:

- Շատ աւելի հին տարիք ալ ունի...

- Անտարակոյս: Իմ հաշուովս վեց հարիւր տարեկան մը ըլլալու է:

- Այդքան դար է որ կ'ապրի... ցոյց չի տար:

- Մանուկ մըն է ծերունի. կամ ծերունի մը մնացած մանուկ:

- Այդքան դար ապրի՞լ...

- Աւելի ճիշդ պիտի ըլլայ ըսել որ վաթսուն դար է որ ողջ է, ու կ'աշխատի անվերջ նահատակուելով: Ապրեցաւ

չինք կրնար ըսել, քանի որ ապրելուն մէջ գոնէ մաս մը կայ հանգիստի ու հանգիստի: Տառապանքին բոլոր սահմանները անցած է:

- Ուրեմն տառապանքը ոմանց տկարութիւն կու տայ, ոմանց ալ՝ տոկոսնութիւն: Բայց մինչեւ ե՞րբ պիտի քաշքըշուի...

- Մինչեւ որ աշխարհի իշխանաւորները արդարութիւն ընեն: Իրենները իրեն համար թափեցին լիներու շտի արցունք, ծոփու շտի քրտինք ու գետերու շտի արիւն: Պէտք է արդարութիւն ըլլայ մեծերուն կողմէ, որոնց օգտակար հանդիսացաւ բազմիցս, տալով կեանքի անհաշուելի, տալով ամէ՛ն, ամէ՛ն ինչ...

- Աշխարհի մեծերը ատանկ մտադրութիւն մը ունի՞ն:

- Ոմանք նոյնիսկ չեն ուզեր գիտնալ գոյութիւնը: Նահատակութիւն չազգործողներ են, ու կը խրաչին մարտիրոսներու պատճառով գիտացաւ ունենալ: Ապիտուութիւնը փոստբաշի փայլ մըն է: Մէկ վարդապետութիւն կայ չահամոյութիւնը:

- Անհաւատալի է: Հայոց հանդէպ այդքան տղէտ, այդքան տղեղ վերաբերում:

- Բայց ինչո՞ւ հետեւ երթալ: Դուն հայ ըլլալով այսօր միայն տեղեկացար հայկական հարցի մասին: Դուն քանի՞ տարեկան ես...

- Վաթսուր քիչ մը անցած եմ:

- Ի՞նչ գործ կ'ընես:

- Մեծ ճարտարարուեստեան մըն եմ:

Հինգ գործարան կը բանեցնեմ:

- Եւ անշուշտ մեծահարուստ ես:

- Ծոնքհիւ հանճարիս:

- Հանճարը որմէ՞ ժառանգեցիր...

- Աս ի՞նչ հարցում է...

- Գարիւր հարցում է: Մեր շարժարեալ ազգէն է որ ժառանգեցիր ինչք, ձեռներէցութեան ոգի, աշխատութեան եռանդ, յարատեւելու յամառութիւն, հաւատք յազթանակի: Եւ ազգիդ դատէն լուր շունչէր, այսօր տեղեկացար, դիպւածով: Եւ հիմա որ գիտես, ազգիդ համար բան մը ընելու յօժա՞ր ես...

- Կ'ընեմ՝ Աշխարհի Հինգ ցամաքա-
մասերուն վրայ տեսակ-տեսակ ռէֆլամ-
նեք կ'ընեմ: Ռէֆլամը փրոփակաճու է:
Ռէֆլամի ընկերութիւններ կ'աշխատին
օգտագործել ծովերն ալ, քաղաքներու
երկինքներն ալ: Ճապարիքներու արտա-
դրութիւնները սա Մէկուն անունով կը
հանեմ հրապարակ: Մարդիկ կը ծանո-
թանան ու կը համակրին: Բայց ինձի չը-
սիր, թէ ի՞նչ է այս Մէկին անունը...

- Հայկական Հարց:
- Ի՞նչ... ի՞նչ... Կը խենթենամ
հա՛... է՛, հիմա կը խենթենամ...
- Բայց ինչո՞ւ...
- Կը կործանիմ, աղբարս, կը կոր-
ծանիմ...
- Խենթենալով կը կործանիս, թէ
կործանելով կը խենթենաս...
- Թէ՛ մէկը, թէ՛ միւսը, երկուքը
միասին, խառն ի խառն... Ըլլալիք բան
չէ...

- Բայց բան մը չհասկցայ: Դեռ
խենթեցած կամ կործանած չես, որով
կրնաս լուսարանել դիտ:

- Արտադրութիւններու անունը
«Հայկական Հարց» դնել... Նզովքի բառ
մը, հայտնութեան բառ մը կը նախըն-
տրեմ... Արտադրութիւններս կը մնան
անվաճառելի... «Հայկական Հարց»ը վա-
ճառաչան անուն մը չէ. հին, տե՛ւտե՛,
վանողական է: Կը ստեղծէ հակահրու-
թիւն, դժգոհութիւն... Կը սնանկացնէ
զիս այդ տխուր-տրտում անունը... Կը
սնանկանամ գլուխով ու գրպանով: Այդ
անունը կրնայ անցնիլ միջուկներու տակ,
արշիւներու մէջ, զբաղարաններու խո-
րը, նկուղներու անկիւնը, բայց չի կըր-
նար երևիլ հրապարակներու վրայ...: Իմ
խենթենալէս առաջ, բոլոր սա Հա-
յերը, որոնք չըջապատած են Հայկական
Հարցը, ու ճառեր կը խօսին, առաջարկ-
ներ կ'ընեն, միութեան հրաւերներ կ'ուղ-
ղեն, խենթենալով խենթեցած են: Ին-
չո՞ւ արթնցուցին Հայկական Հարցը իր
քունէն... Թո՛ղ ձգէին որ անուշ-անուշ
քննար, ու անմահական երազներ տես-

նէր: Բայց, բարեկամ, այս Մէկին անի-
րաւուած ըլլալուն հետեանքով մենք
աշխարհ տեսանք: Իրաւ է որ Հայերս
կոտորուեցանք, կողոպտուեցանք, բայց
մեծ Չարիքէն ծնաւ մեծագոյն Բարիքը:
- Եւ ո՞րն է այդ մեծագոյն բարի-
քը...

- Հայոց ցրուելը բոլոր երկիրներու
մէջ: Հայերը աշխարհ տեսան, եղան տէ-
րերէն աշխարհի: Տէր եղան միլիոննե-
րու, եղան մասնազէտներ, դիտուներ,
պատ-սրուեստեաններ, վաճառական-
ներ, ճարտարարուեստեաններ: Ես փառ-
քի՛ններ ունիմ, եթէ ես իմ գիւղիս մէջ
մնայի, ի՞նչ պիտի ըլլայի: Չպաճ, ան-
բան չոպաճ: Իսկ հիմա միլիոններու
աէր եմ: Ունիմ կառքեր, կիներ, փող ու
փառք:

- Բայց ո՞րդ է մեծագոյն Չարիքը:
Մենք դատապարտուած ենք զոհերը ըլ-
լալու սպիտակ ջարդին: Պիտի այլասեր-
ւելնք, բարեկամ:

- Այլասերուելնք, բարեկամս, այլա-
սերուելէ չիբարալինք: Այլասերումը թո՛ղ
ըլլայ իտէալ:

- Բայց պիտի խանութինք, պիտի
ձուլուինք, հայը հայ պիտի չմնայ, հայ
պիտի չմնայ:

- Թո՛ղ չմնայ: Կարելորը հայուն
հայ մնալը չէ, հապա հայուն լաւ վիճա-
կի մէջ ըլլալն է:

- Դուք կը խօսիս փուճ մարդու պէս:
- Դուք ալ կը խօսիս նման թունա-
ւորուած ազգայականի:

- Մեր ազգային տմբոյջ ճէզը լա-
րած ենք, հայուն դիմագիծը պահելու
համար, իսկ դուք կը ժպտահա այդ դժ-
մագիծին դիմակ անցընել այլասերուա-
ծի: Կը յանդդնիս քարոզել ձուլում: Ու-
րեմն ինչո՞ւ այս հաւաքոյթին եղած ես
ներկայ:

- Կանչեցին ու եկայ: Եթէ ասանկ
ըլլալը գիտնայի, անուշտ չէի գար:

- Գիտցիր որ ամէն մէկ հայ՝ հայ-
կական Հարց մըն է: Մէկ մանրանկարն
է սա Մէկին, եթէ հայ մնացած է:

Տ՞

Մեր խօսակցութեան ընթացքին, գանազան յանձնախումբերու, խմբակցութիւններու, մասնախումբերու ներկայացուցիչներ խօսեցան: Ամէն մէկը կը պահանջէր որ իրեններուն յանձնուի Հայկական դատը հետապնդելու, պաշտպանելու, լահելու աստիճանները: Սկզբնական խօսիլ իրարու դէմ, զիրար ամբաստանել, զիրար նախատել, զիրար սեւցընել: Բարձրացաւ մէկ բան.— աղմուկը: Հայկական Հարցը նստած տեղէն՝ աջ ձեռքը դժուարաւ քէշ մը վեր առաւ:

Պահ մը տիրեց լուռութիւն: Թարձրախօսը տարին առջեւը: Հայկական Հարցը անզամալոյծ էր: Ձէք կրնար շարժել ձեռք ու սաք: Հազիւ կը տեսնէր, հազիւ կը լսէր, հազիւ կը խօսէր:

Բայց կրնար լալ: Բարձրախօսը մօտեցուցին բերնին: Եւ ան պատգամիկ ձայնով ու հայրական շնչով խօսեցաւ ու ըսաւ.
— Միրելի զաւակներս, շնորհակալ եմ արթնցած ըլլալնուդ, ինձմով զբաղելնուդ համար, սակայն զիտցէք հանուիլ անձնականութիւններէ: Գիտցէք հաւատալ, յուսալ եւ սիրել, մանաւանդ ըլլալ միաձայն, միացած, միակամ: Ապա թէ ոչ, կը կորսնցնէք դիտ, եւ դուք ալ հետս կը կորսուիք ու կը թաղուիք օտարութեան մէջ, որուն հողը աւելի ծանր է, քան քարը Հայաստանի: Հայրենիքին մէջ ձեր չղձնուիլը դասալքութիւն է սկստայ, բայց Հայոց գաղթելը դէպի Ամերիկաներ ու Աւստրալիա՝ դաւաճանութիւն է կամաւոր: Ապրեցէք մէջը կամ դոնէ մօտը մեր երկրին: Հայաստանէն ու Մերձուտը Արեւելքէն դուրս, ամենուրեք գեղեցիկ անտառն է Հայոց համար: Եւ կըրկենլով կը կրկնեմ, զաւակներս, աշխատեցէք միաձայն, միացեալ, միակամ: Խրատ մըն ալ տամ.— Հայերէն սորվեցէք, որպէսզի գոնէ ձեր խօսքերը, լեզուական տեսակէտով ուղիղ ըլլան, եթէ ձեր դաղափարները ուղիղ չեն: Ուղղադրութենէն առաջ, սորվեցէք ուղղախօսութիւն: Տեղ մը հայերէնը կը խառնակեն, տեղ մը հայերէնը կը խառնապակեն: Կը խառնեն հայերէնը: Մեր լեզուն լոյս է: Ու լոյսը՝ սրբութիւն: Մաքուր պահեցէք: Ձեզ լսելով՝ կը կործանի կորովս բարոյական: Ա՛յ անաստուածներ, հայերէն սորվեցէք: Գոնէ դուք, նախ դուք արդար եղէք հանդէպ ինծի: Հայկական Հա՞րց. ան մէն բանէ առաջ, խնդիրն է հայերէնի: Մարգարէաբար կ'ըսեմ ձեզի, Հայուն համար, ամէն, ամէն բանէ առաջ, հակառակ լեզուն է, ի՛ր լեզուն, մայրենի լեզուն, որ հիմա կ'ըսեմ է, կարգ մը վայրերու մէջ, դպրոցի լեզու, քանի որ հայ մայրերը սկսած են դաւաճանել լեզուին: Ամէն, ամէն բանէ առաջ, հայերէնը: Աստուած լակ աղաչէս կ'ուզէ: Իրմէ առաջ, իրեն տունը շինելէ առաջ, կառուցանէք տունը մեր հրաշարար լեզուին համար: Դուք որ տեսակ-տեսակ զործերու մէջ ճարտար էք ու ճարպիկ, դուք որ բոլոր լեզուներու լարերուն վրայ կը խաղաք զիրութեամբ, դուք որ վարպետներ էք, իրրեւ ուրհնասագետ, դուք որ մեծաստղանդ էք, իրրեւ արուեստագէտ, վարդապետ էք, իրրեւ դիտուն, ու սասունասագէտ էք իրրեւ անտարական, ինչո՞ւ հայերէն սորվելու մէջ կը դառնաք անձաբակ ու անձաշակ: Ինչո՞ւ սակաւաթիւ են ձեր մէջ հայերէնի գիտութիւնը կամ գեղարուեստը ունեցողները: Անվերջ ափսոս. բայց մի՛ մոռնաք միանալ գոնէ... երթաք բարեաւ... յաջողութիւն...
Հայկական Հարցը կարծեք ներքին կռիւի հրաւէր ըրած ըլլար, որովհետեւ ներկաները շարժեցան, իրարու վրայ յարձակեցան, եղան խառնարան, հրաբուխ, լաւա, խոշոր խմոր: Կը պոռային ցաւով, զայրոյթով, զինախնդրութեամբ: Կը զարնէին իրարու եւ անխայճ: Կերկաները դարձած էին միակտուր խմոր: Խառնուողին մէջ, իրարու կոտակիցները զիրար ալ կը հարուածէին:

Հաւանքէ կազմուած կոյտին մէջ կ'այրէի ու կ'երեւայի սկստայ: Յանկարծ, խօսքս Հայկական Հարցին ուղղելով՝ աղաղակեցի.

Հաւանքէ կազմուած կոյտին մէջ կ'այրէի ու կ'երեւայի սկստայ: Յանկարծ, խօսքս Հայկական Հարցին ուղղելով՝ աղաղակեցի.

- Ահա միաձայն են, ահա միացած են...

Տուամաթիկ տալու աղեխարչ ձայն մը լսուեցաւ:

Իրրեւ խմոր՝ խառնարանին մէջ միացած՝ իրարու միութեան կոչեր ուղղել կը շարունակէին, միաժամանակ գիրար ամբաստանելով, իրրեւ անմիարան:

Իւրաքանչիւր ներկայացուցիչ կ'ուզէր որ միաները միանան իրեն, ու ինք ըլլայ միութեան մենաստերը, ու ի՛ր ծրարէրը գործադրուի:

Պատնուրդին մէջէն մէկը պոռաց.

- Հէ՛յ Հայեր, քիւրտի պէս կը մըտածէք, լազի պէս կը դործէք (միայն դաշոյնը պակաս է), Բիւզանդացիի պէս կը վիճիք, Բարեկարգի պէս կը խօսիք, ու կ'ուզէք Հայկական Հարցի՞ն ծառայել...

Պատնուրդ խմորը կը տատանէր, մէկ աջ երթալով, մէկ ալ ձախ:

Իրարու խառնուած էին խանութպանը, խմորագիրը ու խաշապողը, մտաւորականն ու միլիտանտէրը, նպարավաճառն ու նազելաշուք տիկինը, ճաշարանատէրը, սափրիչը, կոշիկագարը եւ ազգային գործիչը:

Երբ յոգնասպառ խմորագունդը ա՛լ անկարող եղաւ շարժելու, լսուեցան ցաւի ու ցնծութեան հետեւեալ խօսքերը.

- Գուրբ կարեւոր է եղեր, իրրեւ օգտաշատ գործ. կուզա սափակցած, դարմանուած է:

- Վա՛խ... Հոյակապ քիթս կոտրեր է...

- Փորիս մէջի երկրագունդը շքացեր է ... Հիմա է որ մնացի անհող, աներկիր, անհայրենիք...

- Հայելի մը... Գլխուս վերնամասը ծուծն է:

Բայց ո՞ւր էր, ի՞նչ եղած էր Հայկական Հարցը, քանի որ թիկնաթոռը պարապ էր:

Ինք իրեն քայել չէր կրնար: Մունկերը չէին բռներ, ընթանալու համար: Ծամբայ չկար դուրս ելլելու: Իսկ ուրիշներ չէին կրնար զինքը տարած ըլլալ. անկարելի էր:

Զարմանաւոր էի:

Երբ վերտտին եւ ուշադրութեամբ նայեցայ թիկնաթոռին, տեսայ շուքը՝ Հայկական Հարցին: Միայն շուքը, միայնակ շուքը, որ սեւ չէր, այլ ունէր գոյնները, որուն որ կը պատկանէր: Տեսնուած կամ լսուած բան չէր. գունաւոր Շուք մը...

Ո՛չ մարմին էր, ոչ ալ ստուեր, որ իրրեւ ուրուական՝ պիտի ըլլար սպիտակ:

Շուքին գունաւորը... Եւ երբեմն ալ թոյրերը կը կենդանանային, երբեմն ալ կ'աղօսէին...

Հայկական Հարցը... Շուք շքեղաշուք...

Կրեթէ ո՛չ ոք կը նայէր այն կողմը: Պատնուրդէն ետքը, ամէն ոք զբաղած էր, կարգի դնելով ոսկորները, միտերը, հազուատները: Ամէն ոք իրմով զբաղած էր: Պահ մը եւս եւս նայեցայ ինծի: Միտերս մարմնուած, իսկ հազուատներս, ընդհակառակն, արդուկուած էին, խառնուրդին սեղմումներուն հետեւանքով:

Բայց ո՞ւր էր, ի՞նչ եղած էր Հայկական Հարցը...

Ի՞նչպէս լսածի Շուքին առեղծուածը:

Գի՛լ մը անդին, ուրիշ աթոռի մը վրայ ինկած էի, եւ ունէի ուրիշ զբաղներ:

Նախկին հարեւաններս կը շաղակարտէին իրարու հետ: Գէր Հայուհին հընդհակառակ էր, իսկ Միլիտանտէրը վերածուած էր վատեակի:

Հնդկահաւը կ'ըսէր.

- Ան ի՞նչ այլանդակ միանալ էր... Միացումը կ'ըլլայ սիրով, հաճոյքով... Միտերս խաչեցին, կամթոնեցին, առիթէն սպասողներ կային... Վստահ եմ որ մարմինս կապուտցուցին: Մե՛ղք որ հովանոցս հետս չէր. անոնց լաւ դառ մը կու տայի:

Վաթսուենոց վառեակը մտերմօրէն պատասխանեց.

- Լաւ որ հովանոցդ հետդ չէր. հիմա կուտրած պիտի ըլլար: Շարժելիք տեղ չկար. անանկ որ հովանոցդ կտոր-կտոր,

բղիկ-բղիկ պիտի ըլլար: Ո՞վ գիտէ ի՞նչ ղեղեցիկ ու նուրբ է:

- Եստ ղեղեցիկ, շատ սուղինոց, բայց տոկուն հովանոց է: Աս տարի աղ- ջեկս նուէք բերաւ ինծի:

- Ուրեմն աղջիկ մը ունիս: Ո՞վ գի- տէ ի՞նչ ղեղեցիկ է, եթէ կը նմանի քե- ղի: Քանի՞ տարեկան է:

- Եստ պղտիկ է. կանուխէն կար- ղեցի: Ես կարդուեցայ ասանըհինգիս. տն ալ տասնըվեցին կարգուեցաւ. ես ալ ղեռ երեսուննոց ղկամ: Հինգ տարի է որ ալբի մնացած եմ:

- Թէեւ հաշուէ սխալ է, բայց ըսածդ ճիշդ է: Հազիւ քսանըինը տարեկան կ'ե- բուստ:

- Հրամանքդ ալ քառասունըհինգնոց մը ըլլալու ես...

- Դեռ կէս ժամ առաջ աւելի էի: Բայց հիմա պակաս եմ:

- Կոխը քեզ երիտասարդացուց:

- Թէ՛ կոխը, թէ՛ մանաւանդ սէրը: Աւեղծուածը լուծելու համար, զացի ինկայ այնտեղ, ուր նստած էր Հայկա- կան Հարցը, ուր կը դանուէր իր գունա- ւոր Եուրը...

Ո՛չ, մարմին չկար:

Արդեօք Եուրքին վրա՞յ նստած էի, թէ Եուրը նստած էր վրաս... Ձե՞մ գի- տեր...

Յանկարծ, լսեցի խուռ ձայն մը հեծ- կըլտուքի...

Կրկնուեցաւ հազազը հեկեկանքի... Կայծակի պէս սարսուռ մը անցաւ Լուիկանս մէջէն...

Ո՞ւրիկէ կու դար ձայնը. որոշելը ե- ղաւ անկարելի: Աթուին մէջէն, շուր- ջէն, քովէն, ետեւէն թէ վրայէն:

Ձոյլ մը արցունք ինկաւ ող ձեռքիս վրայ, բայց լացողը ես չէի...

Մէկը աղաղակեց.

- Տեսէ՛ք, տեսէ՛ք, Հայկական Հար- ցը, մեր շորհիւ կենդանացաւ, աշխու- ժացաւ: Հիմակ հազիւ եօթանասուննոց կ'երևի: Եթէ կոխ մըն ալ ընենք, կ'ըր- նանք քառասուննոցի վերածել...

Ես Հայկական Հարցը կարծուած էի...

Ք՛, շատ ալ սխալ չէր: Ամէն մէկ հայ գրող, Հայկական Հարց մըն է:

Ն. Գ.

Վիլիամսյուր

Բ Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Սերմի կաթիլ
տիեզերքի պատռած, կեղտոտ սաւանին ճիշդ կեղքոնը --
եւ ինչ ճի՛գ աթոմական
պարգապէս ուրի կայնելու եւ փայելու, մէկ, երկու, վեց ֆայլ,
հեռանալու ժամ առաջ շրոգայթէն
ինքն իր ցոլիէն, ինքն իր այլանդակոյ հայելիէն
ու մանաւանդ ինքն իր ետի՞ն, թէ ցոլիին ետին
ուր մորթերու մէջ կը պահուրտին:

Լեռնակուտակ ի՞նչ պաշար,
փաղցած կարօտ, բորբոս կապած մարդկութեան
բոգանոցի անկողիին տակը լճուած՝
մինչ մենք վրան
կաթիլին տակ ու կաթիլը մայն առեն՝
դեռ կը սպասենք
խօսք մը, ձայն մը, վանկ մը, պարզ հպ՛տմ մը միայն
շուրջը ինկած, կաթկթած ու ալ չորցած
հագարաւոր հին քիծերէն:

Այսօր շուրջ ամէն ինչ
այսօր տմայն ու անթափանց, արգիլուած:
Կեանքը դեղ է
որ չըլլայ թէ օր մը յանկարծ մարդը ծնի
ինքն իր սերմին արգանդէն
ծնի առանց արձագանգի ու պատկերի
սնանկ, անգործ, անհասցէ, միս-միսակ
ինքն իր համար անմպատակ:

Օգուտ չունի --
ակռաներով սաւանին չորս կողմերէն կը փաշեն,
անկոպ աչքեր դրան ճեղքէն
սեւ լրտեսի վայրի, ժողատ խնդուէր.
ամուլ, մաշած բոզի մարմին, անդի՛ն գնա փչ մը,

թողէ՛ք շնչեմ հիւծախտաւոր թռեհբուն մէջ մէկ անգամ
 թողէ՛ք նայիմ երկվայրկեան մը ես իմ աչքիս կարութեան
 զգամ հեղ մը, թէ ի՛նչ եմ ես
 թելէֆօնը չգարկած.
 երբ ընկալուչը վերցնեմ, վերջին անգամ
 պիտի խնդայ անկասկած, կնիքը գարկած ատեն:

Պոռսպ, հայեռայն, գարնն'լ
 մոմլաթէ խանձարուրին մէջէն -
 բայց որո՞ւ, ինչպէ՞ս...:
 Զշարժիլ, չխօսիլ զմոտուած դերասանի մը նման,
 չապրիլ՝ բարկութիւնը կու տալով
 անգոր կատաղութեան ամօթին մէջ
 սուլացած:

Այլ՝
 գողնալով ինքզինքէն իր պատճենը
 գայն նմութեան, գունա շինել՝
 ու երեսին շարտել.
 ու վերջին պահուն
 իբրև վերջին, միակ ու մեծդի արարք
 բնագիրն ալ փնտցնել, կաթիլին մէջ հալեցնել
 ու մէյ մը խնդալ, իր կարգին
 յետո՛յ լռել:

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

15-2-68, Պէյրուս

ԱՐՄԷՆ ԵՐԿԱՔ

ՀԱՐՄՆԱՅԱԾ ՄԱՀՈՒԱՆ ՀԵՏ

Եւրոպական Մեռնդի Իթումն էր: Երեկոյան սովորական ժամէն շատ ուշ էր արդէն, երբ Շնորհիկ տուն եկաւ: Մայրը մտահոգութեան մատնուած՝ փութաց աղջկան քով:

- Ինչո՞ւ այսքան ուշացար, աղջիկս, օգն ալ շատ ցրտած ըլլալու է:

Շնորհիկ հապճեպով համբուրեց մայրը, զգուշանալով որ ան շտեմնէր իր աչքերը՝ որոնք լացած եւ կարմրած էին: Ան բաղնիքը հայելիին առջեւ մնաց երկար ատեն, մինչեւ որ աչքերուն կարմըրութիւնը անտեսանելի դարձաւ:

Մայրը սեղանը դրած էր ամէն իրիկուան պէս:

Հնթրիքի պիտի նստէին, երբ հարցուց երուանդին մասին:

Աղջիկը նախ շուքեց պատասխանել, բայց երբ հարցումը կրկնուեցաւ.

- Մայրիկ, ես անոր հետ խզած եմ ամէն յարաբերութիւն: Կ'ուզեմ որ քեզի համար եւս երբեք զոյուցիւն չունենայ այդ երիտասարդը: Ձեմ թողուր որ մէկը սրտիս հետ խաղայ:

- Ինչո՞ւ համար, աղջիկս: Ծն ալ կը սպասէի որ այս գիշեր պարահանդէսի մը հրաւիրած ըլլար քեզ:

Շնորհիկի սեւ աչքերուն մէջ զայրոյթի շող մը փայլատակեց:

- Ո՛չ, մամա, ո՛չ: Արդէն ամիս մը կայ որ տեսած չունիմ զինքը:

Մայրը շարունակեց, նկատելով որ

իր հարցումները սրտնեղութիւն կը պատճառէին աղջկան:

Անոնք անխօսուկ ընթերցին, ինչպէս եթէ երկու օտարականներ ըլլային ճաշարանի մը մէջ:

Երբ Շնորհիկ սեղանը վերցուց եւ սուրճը պատրաստեց, մայրը սեննակին մէկ անկիւնը նստած էր հոգեմաշ մտածումներու յանձնուած: Այսպէս երկար ատեն լռութիւն պահեցին մայր ու աղջիկ՝ մէկը միւսին հողիէն սպասելով սիրոյ ողորմածութիւն մը՝ որ կ'ուշանար:

Շնորհիկ շորս տուրի առաջ եկած էր Մոնթրէալ: Ան Եգիպտոս պարտիզպանուէի էր մանկական դպրոցի մը մէջ: Քանատա ժամանելէն ամիս մը ետք՝ մեծ վաճառատան մէջ, քաղաքին կեդրոնը, պաշտօնի կոչուած էր գոհացուցիչ թուրքիով: Միեւնոյն վաճառատան մէջ կ'աշխատէր հայ երիտասարդ մը՝ Ծրուանդ անունով, որուն ծանօթացած էր առաջին մէկ օրէն:

Ծրկուքն ալ համակրած էին իրարու: Շատ ժամանակ չէր անցած, որպէսզի անոնց հողիներուն մէջ՝ հրաշալի գարունով մը ծաղկէր փոխադարձ սիրոյ զգացումը:

Շնորհիկի երաշխաւորութեամբ գաղթած էր մայրն ալ, Կեանքը նորապայծառ Հորիզոն մը ցոյց կու տար հիմա: Օրերը կը թուէին խոստանալ երջանկա-

ւէտ թագաւոր մը՝ որուն մէջ երիտասարդ աղջիկը, գեղեցիկ երգչներու իրականացումը կը տեսնէր:

Երկարատև լուսթիւնը վերջապէս խզուեցաւ մօրը կողմէ:

- Երուանդը շատնց երեւցած չուրի: Հիւանդ է արդեօք:

- Անձ գիտե՞ր, ըսի որ չեմ իսկ հանդիպիր անոր: Հիմա նոր բաժնի մը տընորէն եղած է:

Աղջկան պատասխանը անդունդի մը պարագութեան մէջ նետուած քաջի մը կը նմանէր: Ո՛չ իսկ խուլ եւ ծանր արձագանդ մը լսուեցաւ:

Շնորհիկ մօտեցաւ մօրը եւ համբուրեց անոր արտաթաթաւ աչքերը՝ որոնք վիբրատոր եղնիկի մը աչքերուն կը նմանէին:

Մայրը փոխադարձեց անուն խնդապտանքով, երկու բազուկներուն մէջ առած աղջկան վարսազեղ դուրիճ՝ զոր աջքան կարօտով պահկուած կ'ուզէր տեսնել սիրոյ ուղեթիւղ նարտով:

- Գիշեր բարի, աղուոր աղջիկս:

- Գիշեր բարի, անուշ մամա:

Լոյսերը մարեցան տան մէջ: Զսպուած արցունքներ էին այդ լոյսերը՝ զորս լուսթիւնը խեղդեց մթութեան սեւ թաւիշով:

Շնորհիկ չէր կրնար խաղաղութեամբ հանգչեցնել գլուխը բարձին վրայ, որ թաց էր արցունքներով:

Մայրը խոտովակոծ արտով կը մտածէր աղջկան ապագային վրայ:

Աղօթքը՝ որ ցուրտ մոխրագոյն շրթերուն վրայ կը թառամէր աշնան անձրևով թաց մահաբոյր վարդի մը նման, ամէնէն ցաւատանջ պաղատանքն էր հարսնացած տեսելու իր աղջիկը:

- Գիթա՛ ինձի, Աստուածամայր...:

Գորշ, մամուսպատ քաբի մը անբուժելի վէրքէն ծորոզ անշունկ ջուրին պէս անոր արցունքները կը հոսէին գոց աչքերէն:

Ճ

Իրենց ծանօթութեան առաջին ամիսները անցած էին փոխադարձ մտերմու-

թեան դրացումներով լեցուն ջերմագին մթնոլորտի մը մէջ: Շնորհիկ մէկ օրէն միւսը կը սպասէր, որ Երուանդ ամուսնութեան առաջարկ ընէր իրեն: Բայց երեւոյթներէն դատելով՝ աղջիկը հասած էր հանգրուան մը՝ ուրիշ անմիջապէս ետք խզումը անխուսափելի կը դառնար:

- Ուրեմն, ինչո՞ւ մեր յարաբերութիւնները շարունակուին, քանի որ հաստատա որոշում մը տալու անկարելիութեան առջեւ կը գտնուէիս:

- Բայց, Շնորհիկ, - ըսած էր երկրորդ անգամ, - դուն գիտես որ ես մօրս հետն եմ, եւ մէկը չունիմ անոր նայող: Դուն ալ մայր ունիս, կը տեսնես որ երկուքս ալ անելի մը առջեւ կը գտնուինք եւ արդար չէ մեղադրել զիս վարսնելու համար: Բայց եթէ համաձայն ըլլատ որ մօրս հետ միասին բնակինք, պատրաստ եմ այս վայրկեանիս իսկ առաջարկել զեղի, որ ամուսնանանք:

- Ո՞ւր կ'ուզես որ գրկեմ մայրս: Ես ջո՛ւս կանչեցի գիշերը: Եղիպտոս հայրիկիս դերձմանը կայ միայն սեւ խաշով մը՝ որուն վրայէն արեւին կիզիչ բոցերը այրած ըլլալու են այլևս անյուշատակ դարձած անունը: Գիտե՞մ որ կ'ակնարկես եղբորս մասին: Ան դեռ երիտասարդ էր, երբ մեկնեցաւ Միացեալ Նահանգները: Ամուսնացած է օտար աղջկայ մը հետ: Երկու դասակ ունի՞ արձեք բառ մը իսկ հայերէն չեն գիտեր: Ինքն ալ մոռցած է մայրենի լեզուն. մեզի դրած նամակները, պաղթելէն մէկ քանի տարի ետք, անգլիերէնով եղան: Մայրս մէկ օր իսկ շնչել չի կրնար այսպիսի տան մը մէջ:

- Դուն հոս երկու հօրեղբայր ունիս, - շարունակեց Շնորհիկ, - մայրդ չի՞ կրնար անոնցմէ մէկուն ջով երթալ: Երուանդ չկրցաւ բացատրութիւն մը տալ: Անոնց վերջին խօսակցութիւնն եղաւ ասիկա: Անկէ ետք Շնորհիկ մէկ քանի անգամ Երուանդը տեսաւ վաճառատան մէջ աշխատող քանատացի օրիորդի մը հետ:

Հետզհետէ գունատեցաւ անոնց մը տերմութեան պատկերը, հին օրերէ մը

նացած լուսանկարի մը պէս՝ որուն մէջ
երեւցող զէմքերը մահարոյր անցեալ մը
կը յիշեցնեն: Ծնորհիկ խուսափեցաւ հան-
դիպէն մէկու մը՝ որ յուսադրած էր
զինք երջանկութեան ծիրանեմա երա-
զով մը՝ որ հիմա փոթորիկէն բզբտուած
անփառունակ նահանջի մը դրօշին կը
նմանէր:

Ամօթիւս, վարանոտ, հիւանդագին
կերպով զդուշաւոր, ամէն առիթով ան
փախցած էր ինքնամատոյց ըլլալէ, երբ
կեանքը միշտ ներկայ էր ամենուրեք, իր
չուրիք, իր անմեղ եւ ամբափակ հողիին
մէջ, մրրկայոյց, տենչայարոյց ուժգնու-
թեամբ:

Ոստարարոյ հայուհին, հակառակ որ
չոր տարի եղած էր Եղիպտոսէն ելլե-
լուն, չէր թօթափած իր էութենէն սե-
ռային հպարտութեան այն սրբանուէր
կրակը՝ որ կը մոխրացնէ յոյսերը, բայց
մաքրաշող կը պահէ արդար եւ իրաւ եր-
ջանկութիւն ցանկացող ամէն հողի:

«Սղաւոր հայուհի», կը կոչէին զինք
վաճառատան պաշտօնեաները, որոնցմէ
ոմանք փորձած էին մօտենալ իրեն եւ
նահանջած էին ցրտասարտու այդ մաք-
րութեան՝ որ այս երկրին անկոխ ան-
տառներուն մէջ դիզուած լուսաշող մի-
նին կը նմանէր:

Սղաւոր, որովհետեւ սեւ, արտա-
թախիծ էին խոշոր աչքերը: Որովհետեւ
երբեք պոռոտ զոյներ չէիք տեսներ անոր
հանդերձանքին մէջ: Որովհետեւ ձայնին
քաղցրութենէն կը զգայիր վերաւոր թե-
ւաբարումը երազին՝ որ անգամ մը ծաղ-
կած էր շուտով թօշնելու համար:

– Գիտե՞ս, աղուոր աղջիկս, ես չեմ
յուսար որ երկար ապրիմ: Ոսկորներուս
մէջ հողին կարօտը կայ:

– Ինչո՞ւ այդ խօսքերը, մամա, ես
ի՞նչ հոգիով, ի՞նչ եռանդով երթամ աշ-
խատիմ, երբ դուն ինքզինքդ այդպէս
սկար եւ յուսահատ կը զգաս:

– Քեզի համար է, ձագուկս: Կ'ու-
զնմ քեզ հարս տեսնել եւ յետոյ դերեզ-
ման իջնել:

– Տղաներուն ետեւէն վազող աղջիկ

չեմ ես... Եթէ մէկը դուռս դարնէ, կը
մտածեմ:

Ծնունդէն մինչեւ Կաղանդ, երեք ան-
գամ միւսամբրիկ բարձրացաւ քաղաքին
մրայ: Ճամբաները եւ տանիքները ծած-
կուեցան լայնատարած պատանքով՝ ո-
րուն տակ ո՛չ թէ մեռած էր կեանքը,
այլ ցաւատանջ խորհուրդներով կը լից-
ւէր: Մարդիկ պատասպարուած էին տու-
ներուն մէջ, ուր հողերը եւ վիշտերը
կարծես, ան'նք ալ, միւսին պէս մտայլ
եւ անողորբիչ երկիրքէ մը կ'իջնէն զգա-
յուն սիրտերու վրայ:

Ծնորհիկ սկսած էր լրջօրէն մտահոգ-

ւել մօրը համար:

Կաղանդէն ետք, առաւօտ մը, հի-
ւանդանոց առաջնորդեց զինք քննութեան
համար: Եղիպտոսի արար բժիշկ մըն էր
քննիչը, որուն հետ արարերէն խօսեցան
ղերութեամբ: Քննութեանց արդիւնքէն
յայտնի եղաւ, որ անուշ մամային սիր-
տը վտանգաւոր կերպով տկարացած էր:

Ամէն իրիկուն անհամբերութեամբ
սուն կը փութար, վախնալով որ մայրը
տաղնապալի վիճակի մը մատնուած կ'ըլ-
լար: Ի՞նչն էր որ կերակուրի պատրաս-
տութիւն կը տեսնէր հիմա: Առտնին բու-
լոր աշխատանքները կը կատարէր ան-
տրտունջ, միայն թէ մաման լաւանար:

– Դեղերդ բերե՛մ, – կը հարցնէր
անոր:

– Այո՛, աղջիկս, այս դեղերով պիտի
աղէկնամ շուտով, որպէսզի նորէն տես-
նեմ աչքերուդ քաղցր ժպիտը:

Բայց օրէ օր Ծնորհիկ կը նկատէր
մօրը տկարանալը: Անոր դէմքը, ձեռ-
քերը մահատիպ սպիտակութիւն մը ու-
նէին: Կարծես երակները բոլորովին
պարպուած ըլլային իրենց կարմիր գըն-
դիկներէն:

Գիշերը, մինչեւ որ քունը ծանրա-
ցընէր մօրը աչքերուն կապտորակ կոպե-
րը եւ գոցուէին անոնք աղօտայոյս բի-
բերուն վրայ, սնարին զովիկը նստած՝
ընթերցումներ կ'ընէր ունեցած հայերէն
գիրքերէն, զորս թանկագին դանձերու
պէս հետը բերած էր Եղիպտոսէն:

Հիւանդ մաման շատ կը հաճոյանար

այս պահերէն, որ կ'ուզէր թարթիչներէն աչքերուն վրայ երկտրող քունի մոխրապոյն թիւը փրցնել եւ լսել անխոնջ՝ աղըզկան ձայնը, որ քաղցր, մայրական օրօրի պէս կու դար:

Ծնորհիկին համար ալ այդ յուզումնազատ վայրկեանները ոչ մէկ բանով կրնային փոխարինուիլ: Կեանքը երջանկուձեան եւ սիրոյ իր բոլոր խոստումնորով այսքան խանդադրատապին քաղցրութիւն պիտի ընծայէ՞ր արդեօք:

Կը շարունակէր իր ընթերցումը, մեղմամայն, որ չարթնցնէր արդէն քունի լուսնաթիւ գանցին մէջ բռնուած անուշ մաման:

Ոտքի կ'ելէր անշուշտ: Լոյսը կը մարէր եւ խաւարին թեւերը կը հեռացնէին զինք փոքրիկ աղջկան մը պէս քնացած մօրը սենեակէն:

Երկար վայրկեաններով, աչքերը դոց, ծաղիկի մը շափրակներուն պէս, խորշակին տաք շունչին տակ, արթուն

կը մնար ցաւատանջ խռովքի մատնուած: - Ի՞նչ պիտի ընեմ մինակս, - կը հարցնէր ինքզինքին:

Առաւօտ մը, երբ մօրը քով փութաց, անուշ մաման մեռած էր: Բաց ապակեղէն աչքերը կը նայէին իրեն: Մահիճին եղերքը նստած՝ թոյլ մեղքերը քարացած ծունկերուն վրայ, սպասեց: Որ՞նչ սպասեց. ինքն ալ չէր գիտեր: Փրկութիւն, յարուցիչ զօրութեան մը: Յանկարծ իջած էր թանձրածալ վարագոյր մը կեանքին եւ իր խորտակուած ներաշխարհին միջեւ:

Երկու օր ետք, երբ դուռը բացին, Ծնորհիկ տրամնացած էր, միշտ անուշ մամային քով, աչքերը անարտայայտ, խելագարութեամբ մթազնած:

Կաթիլ մը արցունքով չթրջուեցան ըրերը: Բայց, երբ հեռացուցին զինք մեռելին անկողինէն, սկսաւ խնդալ բարձրամայն: Ան անխաղիւփէն հարսնացած էր մահուան հետ:

Ա. Ծ.



ՄՈՒՐԱՑՈՂ ԶԵՄ ԵՍ...

Նամակ՝ Դաքիանին

Ազգա՛տ չեմ ես,
 Ո՛չ՝ մուրացող...
 Երբ նայում ես աչքերիմ իմ՝
 Լցուած արցունք ու գարնան ցօղ, -
 Ձեռ գգում դու,
 Կամ գգում ես՝
 Ձեռ ցանկանում կամնալ էիչ
 Ողնաշարիչ նկամութեամբ, -
 Քո գգալով՝ ասես ամէն
 Չշմարտութիւն...:

Ազգա՛տ չեմ ես,
 Ո՛չ՝ մուրացող...
 Ես ունեմ շա՛տ հարստութիւն,
 Դո՛ւ էլ գիտես, -
 Բայց երբ վզիդ փաթաթել ես
 Կարմիր փողկապ,
 Ու աչքերիւդ դրել ակնոց
 Մի հրատապ,
 Սամն ես նետում
 Ձեռք չըհասնող երկվարիմ,
 Ջգում նայնիսկ՝
 Թշնամի ես էն խոհերիմ... -
 Բայց չես գրկում...:

Հարուստ եմ ես
 Իմ նզուրթեամբ,
 Հաւատճով խոր ու բազմաբան. -
 Երբ թերթում եմ
 Այրուած սիրտը մեր դարերի, -
 Տեսնում եմ լայն յաւերժութեան
 Ու խոնարհում նրա առաջ,
 Ես երկիւզած օրհներգում եմ
 Ջարմանահրաշ մեր արագերիմ,
 Որ պատերիմ ծեփել են կաւ,
 Ծեփել են գիր,
 Ծեփել ենրկեր հագաբազայն,
 Ու գոյնեղում դրել են միտք, -
 Շփոթութիւն...:

Թե՛ կարդայիր մեր գիրքն այդ էին,
 Որ կարծում եմ՝ կարդացած կաս, -
 Կը խօսէիր մշմարտօրէն:
 Դու անվարան ինն կ'ասէիր՝
 Ազգա՛տ չեմ ես,
 Ո՛չ՝ մուրացող. -
 Ունեմ բազում հարստութիւն...
 Թե՛ արձակուէր փողկապը էս,
 Որ խեղճում է հենց էս ձեռքով
 Շնչափողոց ամօթապարտ...
 Թե՛ փշրէիր այլապարգեւ
 Ակնոցը էս ստապատում, -
 Յօղ ու արցունք
 Անշուշտ պիտի ողորդէին
 Աչքերը էս իմաստութեամբ...
 Այն ժամանակ կայարտութեամբ
 Դու արեւի լոյսով պայծառ,
 Կը տեսնէիր՝
 Որ կանաչ են արտեր ու ծառ, -
 Կը տեսնէիր՝
 Հարուստ ես դու, ո՛չ մուրացկան,
 Ու պէտք չունես
 Դու օտարի
 Ողորմելի՛ ազգամութեան.
 Հիացմունքի, ակնածանքի,
 Դուրիս հասած՝
 «ՈՍԿԵՂՆԻԿ»ի ոսկին չես տայ
 Քամիներին ու կորստես...:

Ազգա՛տ չեմ ես,
 Ո՛չ՝ մուրացկան...
 Ես ունեմ շա՛տ հարստութիւն՝
 Դո՛ւ էլ գիտես, -
 Հարստութեամբ իմ կուտակած,
 Շահել եմ ես նախանն աչքեր,
 Ու տուել եմ սակարանս
 Արդարադատ յաւերժութեան...:

ԱՐՇԻ

Թե՛ կարդայիր

ԱՐԱՔՍԻ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

«ՆՆ՝ աճանց աճե՞մ մեկը
արդարութեան քայեց...»:

Առանձի քրքիլ մը շուռեցաւ դժոխքին մէջէն...:
– Հո՛ս բերէ՞ք, հո՛ս բերէ՞ք անոր հողին, – կը պոռար հրեշտակապետը թռեւորդ անդնդային պարտապին մէջ պարզելով, – անիկա ինձի կը պատկանի, Գամալ Ա. երեսուն տարիէ հարիւրաւոր անձեր փրկած է թշուառութենէ, մանուկներ ազատած է մահուան մազիկներէն, պիղերները անջուն մնացած է մահամերձներու սնորհներուն վերեւ: Այդ մարդը դրախտի արժանի է, հոն իր հողին պիտի հրճուի, արարքները պիտի վարձատրուին, յաւիտենականութիւնը պիտի դրուի անոր ճակատին վրայ, եւ սերովբէներ մոռական պարեր պիտի պարեն իրեն համար...:

Քրքիլը աւելի եւս սաստկացաւ դժոխքին մէջէն...:
– Ի՞նչ... սխալմո՛ւնք կայ արդեօք, – շարունակեց Գարիէլ Հանդարտութիւնը քիչ մը կորնցնելով, – հո՛ս նայեցէ՞ք, ոչինհ'ր... Գամալ Ա. այս առտու վախճանեցաւ... դո՛ւք ըսէ՞ք, թէ շատ բարի պարեցաւ ան, մանաւանդ կեանքին վերջերուն... սրեմն առաջնորդեցէ՞ք զայն իր տեղը, հաղցուցէ՞ք անոր սքանչելի, երկնային պատմուճան, պուրգուրացէ՞ք վլլրան, անուշահոտ իւղերով օծեցէ՞ք էութիւնը, եւ գողտրիկ մթնոլորտին մէջ ցոյց տուէ՞ք ձեր խանդաղատանքը...: Ի՞նչ ապշած կը նայիք ինձի, արդեօ՞ք...:

Հազիւ խօսքերը լրացուցած էր, երբ միջոցը վերածուեցաւ տարօրինակ պատաստի մը... փոթորկանման մուռնչով եւ զաղանային խորչանքով՝ սասանայապետը տիրականօրէն երեւցաւ անջրպետին մէջ: Անոր գլուխը կը փայլէր սսպղուն կրակներով, աչքերը լայն բացած, կարծիք

լիճերու նման, կը ցուացնէին դիմադիծին բորբոքուն վայրագութիւնը. չըթունքներէն ժանտարոյր փրփուրը կը հոսէր մինչեւ որովայնը, իսկ ահարկու եղունգներէն բարձրացող հուրը կը խանձէր օդին ծալքերը:

- Հա՛, հա՛, հա՛, - ծիծաղեցաւ սաղայէլ, - անհունօրէն զաղբատե- սիլ Քամալը դրո՞խա... այդ պահուն քեզի կը յանձնեմ ընդհանուր դժոխքը իր ամբողջ բովանդակութեամբ: Թող դժոխք գոյութիւն չունե- նայ, եթէ սա թուրքը դրախտ մտնէ, - ազադակեց, ցոյց տալով դրախտին վայելչազեղ դուռը, եւ կախարդիչ անպարարութեամբ մը սկսաւ ծաւա- լուն ձեռքերը իրարու քսելով խարոյկներ արծարծել շորագին:

- Ի՞նչ փաստեր ունիս ըսածներդ հաստատող, - Հարցուց Հրեշտա- կապետը դատաւորի մը վէս կեցուածքով, - ինչ ալ ըրած ըլլայ այս մարդը կեանքին սկիզբներուն, չեն կրնար նսեմացնել երեսուն տարուայ զոհողու- թիւններն ու բարեգործութիւնները: Դուն արդէն ամէնուն հոգին քովդ պահել կ'ուզես. կը ճանչնամ քեզ սաղայէլ, գուն էիր որ Մատթէոս Ա.ը, Հէրի Պ.էն եւ ուրիշ շատե՛ր դժոխք մտցուցիր, պատրուակելով որ անոնք հաւատք չեն ունեցած կեանքերուն մէջ: Հիմա մտիկ ըրէ զիս եւ մի՛ կատ- րիր առանց պատճառի: Իարի հոգիները կը նեղանան քեզմէ. ձգէ՛ որ քիչ ներող ըլլանք, որովհետեւ քանի մը դարերէ ի վեր, մարդկութիւնը քիչ թիւով հոգի կու տայ դրախտին եւ անմահութեան: Անոնց հաւատքը կը նուազի այնքան, որքան իրենց անկեղծութիւնը: Այնպէս կը տեսնուի, որ քիչ աստեղէն ո՛չ մէկ հոգի պիտի կրնայ սպրդել դրախտէն ներս: Գէշը կը տիրապետէ ամէնուն եւ անոնց պատճառը դո՛ւն ես, կը լսե՛ս: Դիւբաւհամ- ըրցր խոնտումներով կը յափշտակես անոնց քոստած գոյութիւնները: Քու պատճառովը զրամն ու օպանութիւնները շատցան աշխարհի երեսուն, եւ հիւր ես հիմա ինծի կ'ընդդիմանաս եւ հմտութիւնդ բանեցնել կ'ուզես վը- րաս: Սակայն դիտեմ, թէ զուր պիտի ըլլան ջանքերդ... Ամփոփէ ինք- ղինքը, եւ մի դուրս ճշմարտութեան:

Սաղայէլի շրթունքներուն վրայ արտասովոր Հեզանք մը երեւցաւ բարակ ճիւղտը ցցելով եւ ցոյց տալով պատասառը, որ կը սկսէր ընդար- ձակուիլ, զմայլելի ողեկոյութեամբ մը պոռաց.

- Լաւ նայեցէ՛ք հոս, բացէ՛ք ձեր աչքերը. ուղեղիդ կեդրոնացու- ցէք մէկ կէտի վրայ...:

Յանկարծ որոտում մը լուսեցաւ, որ զրդուց միջոցին հանդարտու- թիւնը: Պատասառը տակաւ կ'առնէր գիծեր, զոյններ եւ ձեւեր: Եւ ահա՛, երեսան եկաւ ծերունի մը. անոր խորշումած եւ ճմռթկած ունիքը՝ դեղին պատանքի մը կերպարանքը ունէր, սկզբունած ցաւերու եւ տաժանքի ող- բերդութեամբ. բերանը հազիւ կը շարժէր, իսկ շրթներուն առանցքէն լորձնոտ արիւնը կը հոսէր մինչեւ ճաթած կզակը:

- Ըսէ՛, ո՞վ ես դուն, - գոռաց սաղայէլ, - իտե՛ն, լուռ մի՛ կենար, պատէ՛ ասոնց ամէն ինչ, վկայարանութիւնդ ըրէ:

Պատաւը այլայլած նայեցաւ չորս կողմը, յետոյ փսփսուքի մը հան- զոյն բառերը սկսան թափիլ շրթներէն.

- Հայ, ծեր կին մըն եմ ես, Մատունի դիւղէն: Գիտե՞ք Մատունը. օրս հասա՛ւ, ըսէ՛ք, պիտի զա՛մ ձեր մօտ... Ի՞նչ լաւ էր Մատունը...:

- Չաւակներէդ քանի՞ հատը մեռցուց սա մորդը, - խօսք առաւ սաղայէլ ճիւղտին ծայրովը ցոյց տալով Քամալ Ա.ը:

... Պատաւը կամաց-կամաց դէպի ետ գնաց: Սարսափով եւ անբերա- կայելի ապշանքով աչքերը շփեց... նայեցաւ երկար: Հիմա կը յիշէր...

Այս այն շավուշն էր, որ իր վեց հարազատները մտած էր ուրիշ երկու հարիւրէ աւելի անմեղներու հետ, եկեղեցիին բակին մէջ:

— Ինչպէ՛ս չլիշել, — փոփոսց ահուաներուն տակէն, — ինչպէ՛ս չլիշել... վեց փոքրերուն նահատակումը...:

Պատաստը կը փոխուէր հիմա եկեղեցիի մը... տեսնուեցաւ ընդարձակ բակ մը, որուն մէջ կային բազմաթիւ տղաներ, բաժնուած իրենց ծընողներէն, անոնց աչքերը կը նմանէին բոցեղէն ջահերու, որոնք սարսափի տենդէն բռնուած, կը մթննային տակաւ: Անոնց փոքրիկ գլուխները, իրարու տնցուած, երկար եւ անբակտեի շղթայի մը կերպարանքը ունէին:

Երեւցաւ Քամալ Ա.: Պատաստին վրայ դժուեցաւ իր էութիւնը, ինչպէս որ էր... յամառ մըմունջ մը լսուեցաւ միջոցին մէջ: Քամալ քարիւղ կը ցանէր այդ դանկերուն վրայ, եւ կը վառէր զանոնք, երկար խրախանքի մը համար պատրաստուելիք ոչխարներու նման:

— Նայեցէ՛ք, — մեռուաց սատանայապետը, — նայեցէ՛ք այս ամէնուն. ես պիտի նախընտրէի զարշիլի ոճրագործ մը, որ կիրքի տարափին մէջ կը սպաննէ մարդկային էակ մը, քան այս հրէշը, որուն արտաքը սեւցուց հորիզոնը այդ օր: Եւ ըսել՝ թէ ո՛չ մէկը կը դատապարտէ աշխարհին սիրտը պղծող այս արարքը: Ինչպէ՛ս արդարութիւնը կանգուն պիտի մնայ. ինչպէ՛ս... խօսեցէ՛ք, անթիւ հողիներ... նուազցուցէ՛ք ջրայնութիւնս: Զեռքերս կը դադա՛ն գայրոյթէս:

Ամէնքը լուռ էին, ատենի մը մէջի դատապարտուածներու նման: Պատաստը մաքրուեցաւ: Սաղայէլ ուղիղ կանգնած, գէմքը հրարձակ, աչքերը յառած էր հիմա դրախտին:

— Անժէ՛լ, Աստղի՛կ, Հեղինէ՛, Սրբուհի՛, Տիգրանուհի՛, — աղաղակեց ձեռքերը զարնելով իրարու, — եկէ՛ք, երկվայրկեան մը միայն: Թո՛ւրք մը դրախտ տանիլ կ'ուզեն, կը լսէ՛ք... Թո՛ւրք մը...:

Յանկարծ, ճերմակներ հագած, խումբ մը աղջիկներ երեւցան դրախտի սեմին վրայ. անոնց էութիւններէն կ'արտացոլար արեւականման շողջողանք մը, որ պահ մը շրջուց ամէնուն տեսողութիւնը:

— Ինչպէ՛ս կըցար բերել ասոնք, — յանդիմանեց հրեշտակապետը, — անոնք սրբութիւններ են. պէտք չէ երկար մնան այստեղ:

— Խնդրե՛մ, պահ մը միայն... յետոյ քեզի թող ըլլայ ամէն բան, — պատասխանեց սաղայէլ, — մի՛ մերժեք զիս. յետոյ պիտի հասկնաս, որ ժամանակներու մէջ միայն հեղ մը սխալեցար: Դո՛ւք, — դարձաւ հինգ աղջիկներուն, — ըսէ՛ք, դուք ինչպէ՛ս մեռաք:

Յանկարծ բոլորը միաձայն աղաղակ մը արձակեցին, այնքա՛ն տառապազին, այնքա՛ն յուսահատ, որ սաղայէլ պահ մը ընկզմեցաւ տեսակ մը խոկումի մէջ: Վերախտը ասոնց համար շինուած է կարծես, — մտածեց, — վայ եկած է անո՛ր որ ձրիաբար կը վայելէ եղեմական հանդարտութիւնը:

— Մեռա՛նք Քամային լիկումներով, ան մեր մարմինները խոշտանգելէ ետք՝ հողերու տակ թաղեց ողջ-ողջ: Մենք լտեսանք կեանքը. շատ կանուխ մեռանք: Տասնրօվեց տարեկան էինք այն ատեն բոլորս ալ:

Ապա՛ իրենց ձեռքերը Քամային ուղղելով.

— Ահա՛ մեր սպաննիչը. Թո՛ղ արդարութիւն կատարուի: Ան էր՝ որ մեր եղբայրները սպաննել տուաւ լեռներու վրայ. թող մեռնի անոր հոգին: Դժոխքը քիչ է... անոր մէջ մարդիկ գային, որոնք արժանի չէին

այդ վախճանին: Քամա՛լ, Քամա՛լ... Հոս հողիք չկան մարմիններ թաղե-
րու համար... պիտի շներենք քեզի, երբե՛ք, երբե՛ք:

Եւ այդ փոքրիկ սրբութիւնները, մէկըմէկու փարած, օրօրելով Խ-
րենց երկնաման կերպարանքները, ուղղուեցան դէպի դաւաճութիւն:

~ Այս վերջինը չէ, - գոռաց սատանան թանձրաշուրթ բերանը սեղ-
մելով ձեռքին մէջ, - Հիմա նայեցէք սա արիւնի հեղեղներուն, նայեցէք
Եփրատ անունով սա զեաին, որուն մէջ կը խորտակուին անդազող մար-
միններ, կնոջական փողոտումներ, մանուկի անբարատ գոյութիւններ: Կը
տեսնէ՞ք սա փշրուած բերանները, սա սրտերու առուակը հողին վրայ...
սա ուղեղներու աղբիւրը աւազներու գոլորշիին դէմ: Ահա Քամալ Ա., որ
կը լլկէ կին մը, եւ յետոյ անոր արգանդը սուրին ծայրովը դուրս կը հա-
նէ. սա անարեկած տղան, որ մայրը կը փնտռէ ամբոխին մէջէն...: Ծանշ-
ցա՞ք զինք սա խումբ մը զինուորներուն մէջ, որոնք չըջապատած են եր-
կելոյսն եւ ամբոյն ափ մը ծերունիներ... Սա օրօրոցները, որոնց մանուկ-
ները չկան, սա կմախքէ ձեռքերը, որոնք կը շարժին մութին մէջէն... Եւ
յետոյ՝ սա եկեղեցին... Վերջինը այս թուրքին քաջագործութիւններէն...
այս ապիրատին սիրագործութիւնէն...:

Հազիւ խօսքը լրացուցած էր, երբ եկեղեցիի մը մէջ տեսնուեցաւ ծեր
քահանայ մը, որուն սքեմին տակէն վերացած էութիւնը մատուցի մը նը-
ման կը մխար: Անեւոր մօրուքը կը ջստէր մէջէն, իսկ աչքերը, որոնց
մէջ աղօթքը զերիի մը նման կը շարժարուէր, մուրտած, ուղղուած էին
քանի մը հաւատացեալներու, որոնք ծունկի եկած կը պաղատէին Աստու-
ծայ...:

Քահանան՝ ձեռքերը երկարած, կը խօսէր անոնց.

- Քրիստոնեանե՛ր, - կ'ըսէր ան, - ամբողջ դիւրը թալանուեցաւ,
հարսեր թղկտուեցան, մանուկներ փախցուեցան, երեխաներ կոխկոտուե-
ցան, ամուսիններ զնդակահարուեցան անծանօթ վայրերու մէջ, մեր հե-
րոսները ինկան լիններու վրայ, ինկան Առաքելը, Սմբատն ու Մուրատը,
մնացինք մէնք, աղօթենք անոնց հողիներուն համար, մի՛ լաք, մայրեր եւ
քոյրեր, լացը կը տկարացնէ հաւատքը. վերացէ՛ք, ապրեցէ՛ք ուրի՛շ աշ-
խարհի մը մէջ, ուր արդարութիւնը իր թաթը կը հանգչեցնէ հերոսներու
վրայ, ուր կեանքը բարի է: Սրտերու մէջ ոյս չկայ, ուր ջուրը խառնուած
չէ արիւնով, եւ երկինքը աղտոտած չէ մրուրով: Տարիներ յետոյ ապա-
դայ սերունդները պիտի իմանան մեր այս մահը, պիտի հաւատա՛ն անոր,
պիտի չմերժեն փունջ մը ծաղիկ ցանել անոնց կորսուած գերեզմաններուն
վրայ: Հուսատացէ՛ք, կինե՛ր, որ այս կտորուած ցորենները, օր մը, պի-
տի բուսնին ուրի՛շ հողերու վրայ...:

Եւ յանկարծ, լուսադսակ այս պաշտամունքին մէջ, գլուխները դար-
ձան ետին: Վախասուն մը փրթած էր դուրսէն, իսկ քանի մը թուրք զին-
ւորներ արդէն մուտք գործած էին եկեղեցիին մէջ, եւ կը ջախջախէին ա-
թոսներն ու սեղանները, կը կտորէին ապակիները, եւ իրենց սուրբերուն
ծայրովը կը ճեղքէին սուրբերու նկարները...:

- Կարգը մերն է, - գոռաց քահանան ցաւաւ կիրթով մը, - պատ-
րաստուեցէ՛ք քաջութեամբ զոհուելու, մի՛ աղաչէք անոնց, մի՛ ուրանաք ձեք
խաչը... մի՛ նսեմանաք շարին դէմ...:

Քամալ Ա. (որ Հիմա յստակօրէն կը տեսնուէր իր ամբողջ հասակովն
ու լրբութեամբը) մօտեցած էր քահանային.

— Հա՛, Հա՛, Հա՛, — պոռայ ան լպիբը քմծիծաղով մը, — աղօթք կ'ընէք վերջին վայրկեանին: Ըսէ՛ք, որո՞ւն կ'աղօթէք. եւ ինչ կ'ընէ աղօթքը ձեզի համար: Հո՛ս նայէ, կեանքը, վերջացնենք այլեւս այս կասակերգութիւնը. երկար տեւեց. ամէն տեղ նոյն գէ՛մքերը, նոյն աչքերը, նոյն աղօթքները... Ի՞նչ է այս աշխարհը. հայոց եկեղեցիի՞ վերածել կ'ուզէք զայն: Կը խոտանամ դալ տնգամ ծնելուս աւելի լաւ վարուիլ հետք, — աւելցուց անպատկառօրէն, եւ սուրին ծայրը քոկով կրօնաւորին վղին աղազակեց.

— Կեցցէ՛ հայութիւնը, կեցցէ՛ եկեղեցին... :

Կիները թրար անցած՝ խնրազարօրէն կը համբուրէին զիրար. արցունքոտ աչքերով, յանդուգն սրտով, երկնաուայ հողիով: Գիտէին՝ թէ այս է վերջը բոլոր հայերուն:

— Մա՛հ, — կը գոռար անոնցմէ մին, — մա՛հ, ո՞ւր է քու յաղթանակը:

Հիմա Քամալ Ա. կարգով կը սպաննէր այս աղօթքի եկած կիները, կը սպաննէր ժպիբհ բառերով, հեզնելով անոնց Աստուածաշունչն ու կեանքը, ծէսերն ու պատարագները... մինչ քահանային դիակը կ'արիւնէր օսալատակին վրայ... :

Եւ այդպէս անհետացաւ եկեղեցին պատուոյն վրայէն:

Սաղայէլ հիմա կը նայէր Քամալի աչքերուն մէջ՝ նախատինջի կայծերով:

— Հիմա՛, — յայտարարեց ան, — հիմա՛ պաշտպանէ ինչպիսիք, բոտ մը խօսէ՛, հակառակը ըսէ՛, ըսէ՛՝ թէ դուն չես ասոնց հեղինակը, բերանդ բաց դժո՛ւժ թուրք:

Քամալ շփեց դուրսը պայքարի սարսափէն անյատակ աչքերով. աւոր մտրարացած շրթունքները սկսան շարժիլ կղզուած բերին ներքեւէն:

— Եւ սակայն, կը մոռնաք որ ասոնք ամէնը վեց ամիս տեւեցին միտան: Այն ատեն հայերը թշնամի էին մեզի. գէնքեր կը պահէին տուներու մէջ. ղինուարներ կը պատրաստէին դաղանի ակումբներու տակ: Պատերա՛քմ էր այդ ատեն: Մարդիկ կը սպաննէին զիրար: Տեսէ՛ք, տեսէ՛ք սա Փրանսացի զինուորը, որ դրախտ է, եւ սակայն, հարիւրաւոր զերմանացի սպաննած է: Ըսէ՛ք, ի՞նչ էր յանցանքս, երբ օրէնքը այդպէս կը պարտադրէր...: Յետոյ տարինէ՛ր հիւանդանոցներու մէջ անմեղներ փրկեցի, որոնք կրնային մահուան երթալ: Մերունիներ միտթարեցի, աղաներ օրօրեցի ձեռքերուս մէջ...: Անոնց մէջ ամէն ազգի զաւակներ կային: Նոյնիսկ օր մը, հայ հիւանդ մը օւնեցայ: Ան մեռաւ ձեռքերուս մէջ, մէկ օր լացի անոր համար: Հարցուցէ՛ք ամէնուն, շատեր կը ճանչնան զիս. «Ձիս հրեշտակ», կը գոչէին. միշտ կ'աղօթէի իրենց համար:

— Հա՛, Հա՛, Հա՛, — քրջօց քաղայէլ խնդուքէն զինովցած, — ի՞նչ գեղեցիկ անուն, կարծես հոս քիչ մը պիտի փոխուի այդ անունը:

— Ապաալլահ, Ահմէտ, Այիշէ, Նիրմէ, ըսէ՛ք, ըսէ՛ք ձեզի ինչպէ՞ս չքաւորութենէ փրկեցի, կերակրեցի ձեր զաւակները, գործ գտայ ձեզ ամուսիններուն. իսկ դուն, շէլա՛լ, բերանդ բաց, մէկ-երկու բան ըսէ, բացարե՛կ ինչպէս քեզ զիչեր մը մահէն փրկեցի: Ի՞նչ, լուս էք բոլորդ ալ, խայտառակներ, սպերթախներ, եթէ զժոխք երթալու գիտնայի, ձեզ ամէնքդ կը ճգմէի ափերուս մէջ...: Եւ յիմարացած՝ Քամալ Ա. սկսաւ երգունքներովը միտերը փորել:

- Երբ ինձմէ աւելի վատերը դրախտ են, ինչո՞ւ զիս հոս կը պահէք, օրինակ ես լաւ կը ճանչնամ սա ոճրագործը, որ կը ժպտի դրախտին մէջէն...:

- Ան ոճրագործ չէ՛, մարտիրո՛ս է. սպաննեց ամբողջ ընտանիքը փրկելու համար... ոճիրներ կան մարգոց աչքին, որոնք մէյմէկ առաքել-նութիւններ են հո՛ս, երկինքի մէջ:

Քամալ գլուխը ծռեց: Ճիշդ էին անոր խօսքերը: Սաղայէլը շէր, որ կը դատէր զինք, այլ բոլոր ազլիկները, մանուկները, կիներն ու ծերունիները...: Ակնթարթի մը հեշտութեան ներքեւ՝ տապալած էին քրտնաթոր եւ ժրաշան մարդիկ, որոնք կ'ապրէին Աստուծոյ արեւը զգալով իրենց սրտերուն մէջ:

Այդ շատախոհը, ամօթապարս կեանքին ճամբուն, վերջ գտած էր հիմա: Ուրեմն, կար վերին դատաստանը. ան շէր նմաներ թագաւորի մը կամ բարձր դատաւորի մը ատեանին. հո՛ն, անմեղներ մէկական տիտաններ էին, մէյմէկ ապառիկ գոյութիւններ: Կացութիւնը կը շրջուէր այստեղ: Իրականութիւնը սեղմուած, ծալուած եւ շնչահեղձ մէկդի շէր նետուած, ինչպէս վարի աշխարհին մէջ, այլ ցցած էր իր գլուխը եւ կ'օգնէր ամէն ճշմարիտի, ամէն ինկոդի: Ինք խորէութեան մը մէջ ապրած էր տարիներ...:

- Տե՛ս, հրեշտակապետ, քեզի Քամալ Ա.ին տեղ տասը ոճրագործ կու տամ, միայն կ'ուզեմ որ ան դժոխք մտնէ, ի՛նչպէս մտան ուրիշ թուրքեր: Միւսներուն համար այսքան շտապեցիք:

- Չստապեցիք, որովհետեւ կարծեցի որ Քամալ զղջացած է, երեսուն տարուայ երկարատեւ կեանքին մէջ, եւ սակայն կը տեսնեմ հիմա որ ան բուռնքը սեղմած՝ իր յաղթանակին կը սպասէ: Ուրեմն, լրիւ չէ տառապած իր յանցանքներուն համար, այլ մերքաղատուի ուղած է խզնին բռնադատումէն: Այդպէս կը տեսնեմ, թէ թուրքը տառապել չի դիտեր. անոր շարք բռնագրօսիկ եւ արուեստակեալ է, խիղճը՝ մակերեսային է, իսկ անկեղծութիւնը, որ կը կարծէ ունենալ՝ նենդ: Ուզեցի դոնէ՛ այս սերունդէն քանի մը թուրք դրախտ մտցնել, սակայն անկարելի եղաւ: Այնքան ցեխ կայ անոնց հոգիներուն վրայ, այնքան խարդախութիւն հաւաքուած է տնոնց սրտերուն վերեւ, այնքան արատ կայ անոնց աչքերուն խորը, որոնցմէ մինչեւ իսկ սատանաները կը խորշին...: Ա՛ն, քեզի թող ըլլայ ան. խարոյկներ վատէ այսօր դժոխքիդ մէջ, ստահակներ եւ ցոփեր շարէ շարջ, ցնծութիւն մը ըրէք, կրակէ ճաշ մը սարքեցէք... Լաւանք թող կլլեն ջուրի տեղ, եւ անոնց տարտղնած եւ ցիրուցան ուղեղները թող տուայտին, թող տանջուին քիչ մը, որպէսզի մարտիրոսներուն հոգիները լըմբոստանան: Սաղայէ՛լ, իրաւունք ունեցար այս անգամ... ինչպէ՛ս կրցար հասկնալ, ինչպէ՛ս շխալեցար այս անգամ:

- Որովհետեւ Քամալ Ա. կը կոչուէր ան... եւ որովհետեւ ձեռքէդ ուզեցի յափշտակել միակ անարդարութիւնը, որ կ'ուզէիք գործադրել այս քստմենի կերպարանքին համար, այս տղձաթաթաւ հոգիին համար: Կը տեսնե՞ս որ ժամանակներուն մէջ, դոնէ՛ մէյ մը, բարձրացուցի ինքզինքս. Աստուած իսկ դո՛ւ պիտի մնայ այսօրուայ արարքէս... յոյս ունիմ որ օր մը այս ունայնամիտ եւ փուճ ժողովուրդին գաւակները, այլեւս կամաւ մտնեն դժոխք, ի՛նչ էր իմ յանցանքս, որ այսպէս եղայ. պարզ անհնազանդութիւն մը...: Իսկ ասո՞նցը... ասո՞նցը... սնտոխնե՛ր... տպուշ-

նե՛ր, ապօրէննե՛ր... օր մը... ես հոստեղէն պիտի քրքլամ ձեր անկումին կողմ:

Եւ սաղայէլ թեւերովը ամուր բռնելով Քամալ Ա.ին ուտերէն.

- Օ՛ն, երթանք, - յարեց, - միւսները մեզի կը սպասեն: Ի՞նչ աչքերդ սեւեռած ես դրախտին դրոն. զո՞վ կը կարծես տեսնել, արդեօք բարեկամներէդ մի քանին հո՞ն են...:

- Ոչինչ, - պատասխանեց մթուփեան մէջ ինկած հոգին, - ոչինչ, միայն կարծեցի տեսնել Հասանը՝ տղաս, որ մահացաւ հինդ տարեկանին. պիտի ուզէի դոնէ մէյ մը հայել անոր ճաճանչազեղ աչքերուն մէջ եւ զգալ անոր հոգիին հանդիսոր. իսկ կինս, արդեօք ո՞ւր է կինս, ըսէ՛, ըսէ՛, դուն որ ներկայ եղած ես թուրքերու գատին, վնտոէ զայն, մէյ մը տեսնեմ անոր դէմքը...:

- Մի տրտմիր, կինդ դժոխք մտաւ եւ կը վայելէ անոր բարիքները, - ըսաւ աւելի սեղմելով թուրքին կունակը եւ հրահրտա ափերով ճզմեց անոր ոսկորները...:

- Կը ցուի՛մ, կը ցուի՛մ, սաղայէլ, կը խոստանամ, որ եթէ երկրորդ անգամ ծնիմ, ո՛չ մէկ ազտ պիտի տեսնեն ձեռքերս: Կ'աղաչե՛մ, բոպէ մը միայն տուր ինծի, կոկորդս կը շորնայ, կուրծքս կը պատուի տաժանելի եւ ծանրատաղտուկ խարտոցումով մը: Կը մօտենանք դժոխքին... Մեղա՛յ... շունչս կը կտրի, աչքերս սկսան ամպտելի... Ինչո՞ւ է այս ամէնը... որքա՞ն ծանր է այս պատիժը...:

- Պատի՛ժը... հա՛, հա՛, հա՛, պատիժ չէ այս, արդարութիւն պէտք է դռնել զայն... Արդարութի՛ւն... կը լսե՞ս, հասկցա՞ր միթէ անոր իմաստը, հասկցա՞ր...:

Ա. Չ.



ՓԱՌՒՔ ՄԵՐ ԱՇԽԱՐՀԻՆ

Հուսաշող է մեր ազգային ուզին,
Յստակ ու բիրեն մեր լների պէս.
Մեր զէմ ցցուել են կարմիր ու գեղին
Բոնակալների սուրհմերն հրկէզ,
Գերելարել են, տանջել մեր հոգին –
Չէնգիզեան վայրագ ջուրներն պէս:

Արին է հոսել զարեր մեր քրտից,
Գարեր կեղեքել ու վէրք են տուել.
Մեր հոգը բերրի, յեռներն ալեկի
Բազում հորդաններ, վանդալ են տեսել,
Բայց մեր հայրենի սուրբ մոխիրներից
Նայիրին մար ծիլ, շիւղ է արձակել:

Անցել է արդէն անլուր նախնիքի,
Դաժան եղեռնի ու գարեհաւքի
Խաժամուժը սեւ ինչպէս ուրազան.
Մեր փոքրիկ ածում՝ յիցճով Արմենեան
Դարձել է նորէն սուրբ աշխատանքի
Մի յակնթաշող բազմազարդ ոստան:

Երկնել է կրկին երկինք ու երկիր,
Երկնել է վշտի ծովը հայրենի,
Ու տարերային երկուսում յաւթի,
Յեղավախութեան բացերում մարտի
Ծնուել է մի թախ, երաշք պատանի –
Փառք մեր աշխարհին, փառք հայոց ազգին:

ՀԱՅԿ ՅՈՎՍԵՓԵԱՆ

Քեհրան

ՆԵՐՍԵՍ ՎԱՐՂԱՊԵՏ

ԴԷՊՓԵՐ, ԴԷՄՓԵՐ, ԱՊՐՈՒՄՆԵՐ

1922-ի ամբան վերջերուն, Ակնայ, Արարիկի եւ Քարբերդի սրբերէն մաս մը, մեծ կարաւան մը կազմած՝ Տիգրանայի, Ռուֆուս, Ճարապուս, Հայկապոսի հասանք Անթիլիաս, Լիբանան:

Այդ օրերուն, Անթիլիասը որբանոց էր թէ զօրանոց, զօրանոց թէ բանակատեղի, զժուար է բնորոշել: Ընդարձակ բակ կամ դաշտ մը, երկու հսկայ հիւղեր, զօրծարանի նմանող զարաչէնք մը, ասոր հարակից մէկ շարք զարաչէն սենեակներ, երբորդ եւ աւելի ընդարձակ հիւղ մը՝ շինուելու վրայ: Հիւղ, շէնք ու սենեակներ լեցուած էին, մնացեալները իրենց բախտին ձգուած: Ամէն տեղ, ամէն անկիւն մի քանի փայտ իրարու միացուցած, վրան շուղ կամ փլեմէք մը քաշած, տնակներու վերածած էին: Որբանոցի մայրիներուն փունջին վրայ մեծ տղաքը թառ եկած էին իրենց բարձրագիւր թախթերով, իսկ մայրիներուն տակ, ոտք կոխելիք տեղ մնացած չէր, ամէն ծառի շուրջ բոյն մը հաստատուած էր: Մօտ 2000 որբ-որբուհիներ թիւնուած էին այդ խառնարանին մէջ:

Երբ մենք Անթիլիասի որբանոցին դարպասէն ներս աչքերին բացինք, հոն չտանք տիրուպետող երեք անձեր: Առաջինը մեր տնօրէնն էր՝ Մր. Նաթան, Նիւ Ջեյնտաջի, անգլիական բանակէն արձակուած խիստ զինուորական մը, խորապանդ ձեռքին ու իր հրամայող ձայնը ամէն տեղ: Երկրորդը Հայրիկն էր, բուն անունով Աւետիս Աճէմեան, Պարբերդցի, անգլիական բանակէն արձակուած հարիւրապետի աստիճանով: Հայրիկը կարճահասակ էր: Մէկ ձեռքին դաւազան ունէր, իսկ միւսին՝ խուզող զանգուղի մը: Ան ամէն տեղ էր, խիստ եւ տնայտ մարդ մը, որբանոցին երկաթեայ մարդը, զիշեր ու ցերեկ շարժումի մէջ: Երրորդը՝ Պրն. Վահան Մելիքեանը: Արտաքուստ շատ խելօք, շատ հանդարտ, լուռ, բայց զրտսենեակէն ներս թէ գուրս իր շուքն անլամ բաւական էր, որ իրմէ անկամէին, վախնային մեծ թէ փոքր որբերն ու պաշտօնեաները: Այս ետապետութիւնն էր, որ կը կառավարէր հաստատութիւն մը, որուն սեմէն ներս ամէն միջամայրէ հաւաքուած որբեր կային, 7-30 տարեկան: Անոնք պատերազմի օրերուն սպրած ըլլալով ընտանիքէ հեռու, այլացեղ ու այլալեզու միջամայրերու մէջ՝ շատ բուն կրօնցուցած էին իրենց հայկականութիւնն, մանաւանդ լեզուէն: Հոս էր որ պիտի քանդուէր ինչ որ օտարներէն ստացեր էին եւ պիտի կերտուէր նորը, հայկականը - նկարագրով, լեզուով, բարքով:

Անթիլիասի այդ խառնարանին մէջ, ինչ խօսք, որ ամէնէն շատ տուժողները փոքր տարիքի տղաքը պիտի ըլլային: Նւայս աւելի շեշտուած կերպով պիտի արտայայտուէր, եթէ այդ փոքրիկներուն հայրենասիրից մեծ տղաքը զիրենք չպաշտպանէին կամ անոնց վրայ մօտէն չճշակէին:

Օր մը, փոքրիկներս հաւաքեցին տնօրէնին դրասենեակին առջև: Անձկութեամբ սպասեցինք զայլիքին: Անունիս մէկիկ-մէկիկ ստուգեցին ու շարեցին: Մեր ակնաշնորհուն հասար շշուէ մը, ըստ որուն մեզ պիտի տեղափոխէին: Ո՞րք

պիտի ստնէին: Կ'անգիտանայինք: Ան-
թիխասի շորս պատէն անդին աշխարհը
մեդի համար բուրբովին անծանօթ վայր
էր: Մեծերը գիտէին եւ անոնք յայտնե-
ցին որ մեզ ժէլ-էլ-Տիպ պիտի տանէին:
Ուր կը գտնուէր սակայն այդ ժէլ-էլ-
Տիպը: Մեծերը ըսին որ մօտ էր: Շատ
չանցած նիւր Իսթ Բըլիֆի սրբանոցնե-
րուն մարդաստար հսկայ ինքնաշարժը ե-
կաւ: Մէկիկ-մէկիկ բարձրացանք վրան
եւ ձեռք ու թաշկինակ շարժեցինք մնա-
ցողներուն ու մեկնեցանք:

Ինքնաշարժը մէկ շունչով հասաւ
Անթիխասի հրապարակը: Իր ուղղու-
թիւնը լտկեց Պէյրութի կողմը: Ճամբան
չառ նեղ էր: Ճամբու եզերքին կղմին-
տորինքով տուներ, տուներէն անդին՝
զմբուխտայ կանաչութիւնը նարնջնիկ-
ներու, պանտի մեծատերեւ տունկերու:
Որքա՞ն գեղեցիկ թուեցան մեզի այդ նա-
րընջնիկները իրենց գեղնելու վրայ ե-
զող նարնջնիկով:

Երկար շտեկեց մեր ճամբորդութիւ-
նը: Ինքնաշարժը թեքեցաւ ձախ ու բարձ-
րացաւ զատիկեր ու նարնջնիկներու խիտ
ծառուղիէ մը անցնելէ ետք՝ կանոց ա-
ռու գեղեցիկ շէնքի մը առջեւ, բաւա-
կանին բաց հրապարակի մը վրայ, շորս
կողմը նարնջնիկերով պատուած: Մեր
առաջին տպաւորութիւնն իսկ շատ դրա-
կան էր:

Մեր նոր իջևանին մէջ՝ մեզ դի-
մաւորեց շատ վայելուչ, քիչ մը տժգոյն
կամ սպիտակ դէմքով, առանց շքանա-
կի ակնոցով, աղնուականի դրոյմ կրող
երիտասարդ մը: Մեր նոր տնօրէնն էր,
Պրն. ձորձ կայծակեանը, առանց խա-
րազանի, առանց զաւազանի, առանց
դանդաղի, այլ քաղցր ժպիտ մը շքնե-
րուն ու զգուտղ մատները մեր ուսերուն:
Առաջին իսկ առիթով մենք մեզ բոլորը-
վին հանելի միջավայրի մը մէջ զգա-
ցինք, հանդարտ, խաղաղ, լուս:

Առաջին օրերը բաւական անկանոն
էր կեանքը: Մեզ տեղաւորեցին վրաննե-
րու ներքեւ: Մեր այդ ննջարան-վրաննե-
րը նոյն ատեն մեր դասարաններն էին:
Լաւ պաշտպանուած վրաններ էին թէեւ,

բայց պարզ հողին վրայ էինք եւ տհա-
ճելի էր: Մեզ ըննութենէ անցուցին: Ու-
րուցեցին գտարանները: Իմ դաստիա-
րակն էր Պրն. Յարութիւն Նաշալեանը:

Իրիկունները, ընթրիքէն ետք, նո-
րեկներս կը հաւաքուէինք տնօրէնին շէն-
քին առջեւ: Հոն, նախապէս տեղաւոր-
ւած որրերը իրենց տասնեակներով յիս-
նեակ կը կազմէին ու յիսնապետի մը ա-
ռաջնորդութեամբ կարդ ու կանոնով կը
մեկնէին ծովեզերեայ ննջարան-ընակա-
րանը: Առաւօտուն նոյն շարքերով կը
փերադառնային: Գեղեցիկ ու ողբերգի
էր այս երթուղարձը: Յիսնեակները
պունդ առ պունդ կը յառաջանային ու ի-
րենց շքերթին թափը կ'աննէին ազգային
երգերով: Հոս էր որ առաջին անգամ
պիտի լսէինք «Լուսին չկար մառք գիշե-
րավ», «Խարձնալ փայլեց» ողբերգող եր-
գերը: Մերիցինք այդ բոլորը, ափսոսա-
ցինք որ մենք ալ մաս չէինք կազմեր ա-
նոնց, չէինք գիտեր ու չէինք երգեր մեր
լճացած կեանքին թոփ ու աւիւն տուել
այդ երգերը: Բարեբախտաբար, շատ
չուշացաւ մեզի համար փափաքելի օրը,
երբ մեզ վրաններէն հանեցին, ու տարին
ննջելու ծովեզերքի ննջարան-շէնքին մէջ,
որ մինչեւ այսօր ալ կը մնայ կանգուն:

Որրերու կեանքը ինչ ձեւով ալ դա-
սաւորուած ըլլար, անոնց հետաքրքրու-
թեան հիմնական առանցքը կազմուած էր
երկու բաներու շուրջ - մառան ու խո-
հանոց:

Մառանի եւ խոհանոցի մէջ աշխա-
տիլը առանձնաշնորհում կը նկատուէր,
ամէն ճարպիկի գործ չէր: Հոն աշխա-
տողները կամ ելք ու մուտք ունեցողնե-
րը կ'օգտուէին եւ այդ օգտուիլը կարե-
ւոր էր որբանոցին մէջ: Արդեօք տրուած
հացն ու կերակուրները չէին բաւեր:
Ընդհանրացած հիւանդութիւն մը կար,
որ ամէն որբի վրայ առաւել կամ նուազ
չափով կը տեսնուէր, այդ հիւանդու-
թիւնը այժմ ծակ կոչուած հիւանդու-
թիւնն էր, իրրեւ հետեւանք պատերազ-
մի օրերու անօթութեան:

Ժէլ-էլ-Տիպի որբանոցին մէջ, սա-
կայն, որբերը ձերբազատուած էին այս

Հիւանդութիւններէն - առատ հաց եւ կերակուր ունէինք: Այսուհանդերձ մառառնր տակաւին հետաքրքրական վայր մըն էր ընկողի, արժաւի, շամիչի եւ պարագ սնտուկին համար, ու մառանապետին հետ ծանօթանալն ու բարեկամանալը կարեւոր հարց էր: Մառանապետը Պրն. Գէորգ Փիլոյեանն էր: Ծատ դիւրին չէր բարեկամանալը անձի մը հետ, որ գիտէր ինքզինքը պահել, լուրջ եւ ծանրախոհ էր կեցուածքով: Պրն. Փիլոյեան աւելի շատ կը դիտէր, քան թէ կը խօսէր: Ինքզինք կը պարտադրէր իր կեցուածքով, հակառակ իր պաշտօնին, որ կ'ենթադրէր աւելի հասարակ մէկը, քան Պաւստցիչի ձեւերով, կիրթ շարժուածեւով մէկը, եւ ըսողներ կային եւ կը պնդէին, թէ կարգ մը ուսուցիչներէն աւելի զարգացած էր ան, աւելի բան գիտէր, Հաւանաբար այդ պրոյցներն էին պատճառը որ ան մեզի համար միշտ մնաց Պրն. Փիլոյեան: Իր անունը չէինք գիտեր, միշտ իր մականունը կը դործածուէր պարտով միտսին:

Երբ վրաններու հարցը կարգազըրուեցու, մեր դասարանները փոխադրեցին քարաշէն շէնքերու մէջ, մենք ինքզինքնիս դասանք մառանին պատկից դասարանի մը մէջ: Այս պարագան տախթ կուտար որ Պրն. Փիլոյեանը յաճախ տեսնէինք եւ տեղեակ ըլլալինք մառանի տնցուզարձէն: Անգամ մը Թուրքն Պապիկեանին հետ, որ իմ գրքակիցս էր, Պրն. Փիլոյեանին բարեւ տուինք, որ հազիւ աննշարեւի ժպիտով մը պատասխանեց: Թուրքնը Մամախաթունցի էր: Զինքը Արաբկիւրէն կը ճանչնայի: Կարգալու, բան սորվելու շատ երես չունէր, բախտի բերումով զինքը արդէն երկու դասարան ալ բարձր դրած էին: Ծարպիկ աղայ էր: Ամէն բանի տակէն կ'ըլլէր: Ինձի գրքակից էր նաեւ Բարդէն Մովսիկեանը: Մենք Արաբկիւրի մէջ ալ դասընկեր էինք: Ուշիմ եւ հանգաբար տղայ մըն էր: Իր հայրը ուսուցիչ կամ իրաւաբան եղած ըլլալու էր եւ ինք կ'ըսէր, թէ հայրը սպաննուած էր Ծապիկ-Գարահիսարի կռիւներուն: Ինք

Տիվրիկեցի էր: Այժմ կ'ապրի Պուէնոս Ալբէն, կարծեմ ճարտարագէտ է:

Մեր որբանոցին ապրանքները կուպային կառքով: Որբանոցը ունէր ջորի մը եւ երկանիւ կառք մը, զոր կը վարէր Գրիգոր անուն ծաղկուեր դէմքով երթատասարդ մը: Ասոր հետ ծանօթանալու տախթ ունէի եւ սակայն երբեք փորձ չէր: Մովսիկեցի ննջարան-չէնքին վերի յարկը կը ննջէի: Իմ անկողինիս ջովէն կ'անցներ իր փոքրիկ սենեակին ճամբան, աւելի ճիշդ իմ անկողինս փոռած էր իր սենեակին մուտքին: Սենեակ ըսուածն ալ զուտ շունէր, պարզ վարագոյր մը կը ծածկէր անցքը: Ինձի տնակս կը թուի, մինչեւ այսօր ալ, որ Գրիգորը շատ մաքուր նկարագրի տէր երիտասարդ մըն էր, լուկեաց ու խիստ վերապահ: Այս խիկ պատճառով կ'երեւի թէ երբեք համարձակութիւն չեմ ունեցած իրեն հետ խօսելու: Այս միտպաղաղ սրտ-ննջարանին, ուր շուրջ հարիւր հոգի կը ննջէինք, պատասխանատուն էր ուսուցիչ Պրն. Պետրոս Յակոբեանը, շատ ազնիւ եւ բարի երիտասարդ մը, որուն ներկայութիւնը արդէն բաւական էր, որ ամէն իրեկուն, միտքերան արտասանուած ձայնք մընէն ետք, շուրջ շատէր սրահին մէջ ու իյնայինք Մորփէնոյ գիւրկը:

Կառքը լու միջոց էր մառան մտնելու: Երբ անկիւ կ'անց անկէր հրապարակին վրայ, շուրջը կը հաւաքուէինք հետը մառան մտնելու յոյսով:

Կար նաեւ ուրիշ միջոց մը: Լսած էինք, որ Պրն. Փիլոյեանը աշակերտներուն ուսմունքով ալ կը հետաքրքրուի, որովհետեւ անգամ մը, երբ Թուրքնը անտուկ մը ուղելու քաջութիւնը ունեցեր է, անոր հրեսին յանդիմանական ձեւով բտեր էր:

- Դուն շատ կը խաղաս, դաս չես սորվիր, քեզի անտուկ չկայ...:

Այս յայտարարութիւնը բաւական էր որ ես միանայի Բարդէնին: Մառանի մուտքին խոշոր քար մը կար: Բարդէնին հետ սկսանք վրան նստիլ ու դաս սորվիլ, որպէսզի Պրն. Փիլոյեանը տեսնէր, թէ մենք որքան ճաշխատասէրք էինք: Մեր

ծրագրին մէջ սխալած չէինք: Օր մըն ալ մեզ ներս կանչեց: Վերջապէս Հասանք մեր նպատակին: Իր Հաշուապահի սեղանին առջեւ ձեռնածալ ու խելօքիկ մը կեցանք:

- Ո՛ւրտեղացի էք, - Հարցուց:

Ատիկա բաւական էր որ իւրաքանչիւրս իր կեանքի պատմութեան կծիկը քակէ:

Բանի մը խօսք-խրատէ եաք, այդ օր չորս սնտուկ կաթ պարպեցինք, պարսպ սնտուկները իբրբու վրայ շարեցինք, դուրս հլլիւս պատրաստուեցանք, առանց նայելու կամ ակնարկ մը իսկ նետելու շամիչի բաց պարկին կամ ընկոյզներուն:

- Դուք սնտուկ ունի՞ք, - Հարցուց Պրն. Փիլոյեանը:

- Ո՛չ, չունինք:

- Առէ՛ք այդ սնտուկները եւ դործածեցէք, ուրիշին չտաք, չծախէք...:

Իրաւունք ունէ՛ր, սնտուկին առեւտուրը բաւական ընդհանրացած առեւտուր մըն էր որբանոցին մէջ:

Ասկէ աւելի մեծ ուրախութիւն չէր կրնար պատճառել մեզի Պրն. Փիլոյեանը: Երկու հօդի, չորս սնտուկ, իրենց կախարհչներով: Հազար շնորհակալութիւնով մատանին դուրս ելանք:

Անթիլիասի եւ Ժէլ-էլ-Տիպի որբանոցներուն տնօրէնը յոյն էր՝ Մր. Նաթընը, իսկ կրթական ընդհանուր տեսուչը Փրոֆ. Պուճիպանեանը:

Ատեն մը եաք, Անթիլիասի մեծ տըղաքը տեղափոխել էին Մամըլթէյն եւ այլուր, աւելի լաւ յարմարութիւններով օժտուած տեղեր:

Այդ ատեններուն Կայծակեան Պրն. Տնօրէնը փոխարինած էր Պրն. Պետրոս Գարծայր: Իր օրով մեզ ալ փոխադրեցին Անթիլիաս: Հոն փոխադրուեցաւ նաեւ Պրն. Փիլոյեան, նոյն պաշտօնով: Հոս թէ՛ իր աշխատանքը շարտաւ եւ թէ՛ դժուարացաւ: Տակաւին բաւական մեծ տղաք կային: Մատանին պատուահանները ցած էին: Աչալուրը հսկողու-

թիւնը կարեւոր էր: Մատանը մեծ էր ու սպրանքները ինքնաշարժով կու գային: Պրն. Փիլոյեանը միշտ զբաղած էր եւ շատ քիչ անպամ կարելի էր ժպտի մը շողը նշմարել դէմքին վրայ: Միշտ ամպոտ ու խոտոտ էր: Հակառակ ասոր Բարզէնին Հեռ մենք մեր բարեկամութիւնը պահեցինք իրեն Հեռ: Բաւական մեծցեր էինք ու Հեռզհետէ խելահաս կը դառնայինք: Ինք յայտնապէս կը համարէր այն տղոցմէն, որոնք կանխահասօրէն կը լրջնային եւ որոշ ընդունակութիւն ցոյց կու տային: Երբեմն իր ժօռ կը կանչէր ու զրոյց կ'ընէր, այլ խօսքով կը քննէր մեր նորանոր նուաճումները: Իր քաջաչեքական խօսքերուն, ըստ ժամանակի եւ յարմարութեան, կը միացնէր նաեւ քիչ մը չամիչ կամ քանի մը ընկոյզ: Իմ յարաբերութիւնս, սակայն, ատեն մը իրեն Հեռ խղուեցաւ: Ամօթապարս կը դգայի, չէի ուզեր Հանդիպել իրեն. թէ ինչու՞...:

Ամազերի քննութեան մը, ուրկէ՛ ո՛ւր, Պրն. Փիլոյեանը մեր Փրանսերէնի քննութեան եկաւ ու մեր շատ յարգելի ուսուցիչին Պրն. Արշաէր Գալընեանին կողքին նստեցաւ: Բոլորիս վրայ այդ մը պտտացուց ու ժպտեցաւ: Այն ժամանակ մեր դասագիրքն էր Եռուստը ԼէՔիլը խորագրով գիրք մը, որ մեր կարողութենէն քիչ մըն ալ վեր էր, սակայն քաշելով, քաշկոտելով դասերնիս կը սորվէինք, մեր ուսուցիչը դո՛ւ ձգելու չափ: Ընթերցումէ ետք, իր պաշտօնին Հեռ կապ ունեցող փրզէ՛ (կշտէլ) բային Հրամայականը Հարցուց: Բառին հայերէնը յանկարծ խոյս տուաւ յիշողութենէս: Որքա՛ն տառապեցայ որ ուշիկ պատասխանեմ եւ զինքը դո՛ւ ձգեմ եւ իր համարումը չկորսնցնեմ. բոլոր ճիշդքս ի գործ անցան: Ուրիշ բառ չհարցուց, թերեւս վախնալով որ միճակս աւելի կը ծանրացնէր: Կարծած դէմքով, ճակտիս քըրտինքով, տեղս նստայ: Չեմ գիտեր, թէ մնացեալ ժամանակը ի՞նչպէս անցաւ, միայն գիտեմ որ ես ատկէ ետք ա՛յլ մատանին առջեւէն խուսափեցայ անցնելէ:

Չեմ յիշեր, թէ որքան ժամանակ ան-

ցած էր այդ դէպքէն, երբ օր մը, հանդէսի մը ինքնազիբ դրութիւն մը կարգացրէ: Հանդէսին յաջորդ օրը, Պրն. Փիլիպան զիս բռնեց:

- Ո՞վ դրած էր քու երէկուայ կարգացածը, - հարցուց իր զիչ մը խիստ շեշտով:

- Ես, - ըսի, - Պրն. Հէքիմեանն ու Պրն. Երամեանն ալ տեսած են զայն, - աւելցուց յանցաւորի մը պէս:

- Լա՛ւ, ապրիս, - ըսաւ ու լռեց: Իր այդ լաւէն ես բան մըն ալ չհասկըցայ, թէ եւ ուրախ զգացի, որ զոնէ մտիկ ըրած էր կամ միտքը պահած: Այդ ալ մեծ բան մըն էր տրոհին:

Ձեմ դիտեր, թէ այս լաւ մարդը, որ խիստ, անդուժ եւ աղոց հանդէպ իբր թէ անտարբեր մէկը կը նկատուէր, ի՞նչ պարագաներու տակ որքանոցը ձգեց: Իր մեկնումով անկասկած որքանոցը խղճամիտ պաշտօնեայ մը կորսնցուց, իսկ ես բարեկամ մը:

Որքանոցէն զուրս զինքը քանի մը անգամ միայն տեսայ: Օր մըն ալ լսեցի որ Պրն. Փիլիպանը ամուսնացեր էր Օր. Մանուշակ Գրայեանին հետ: Ինծի համար հետաքրքրական էր այս պարտզան, ուրիշ ո՛ւր, Օր. Մանուշակին հետ ամուսնութիւնը: Օր. Մանուշակ Գրայեան Արարկիլիի Եղեռնի ատաշին զոհերէն Վեբ. Սարգիս Գրայեանին աղջիկն է: Օր. Մանուշակ եւ իր երկու եղբայրները՝ Երևանդ - բժիշկ, Թեհրան - եւ Նեւտոն հրաշքով ազատած էին թրքական եաթազանէն: Երբ Արարկիլիի մէջ կեանքը, հայ կեանքը, զիչ թէ շատ էր բնականոն հունին մէջ կը մտնէր ու զպրոց եւ եկեղեցի կը բանային իրենց գոները, Օր. Մանուշակ, որպէս ուսեայ աղջիկ, առաջիններէն էր, որ ինքզինք կը նուիրէր իր սեռակիցներուն դաստիարակութեան՝ աղջկանց վարժարանին մէջ: Անիկա

զպրոցին սիրուած ուսուցչուհին էր: Մենք փոքրիկներս ալ փոքրիկ աղջիկներուն հետ դաս կ'առնէինք: Որքան կը փափաքէինք, որ շատ մեծնայինք, շատ բան սորվէինք, որպէսզի մենք ալ Օր. Մանուշակին ու Մանուշակին դաս առնէինք, որոնք միայն մեծերով կը դասաւորէին: Պատուելիին երկու աղաքը, Նեւտոն եւ Երևանդ, Արարկիլիի մէջ աչքի զարնուող երիտասարդներ էին: Նեւտոնը շատ ձգեց թաղաքը ու մեկնեցաւ դէպի Ամերիկա, իսկ Երևանդը տեսուչ կարգուեցաւ որբերու զպրոցին, երբ որբերը բաժնեցին Աղղ. վարժարանէն: Մեր նոր զպրոցը Մեքիքեան տունն էր: Մեր տեսուչը իր գործակից Պրն. Արամ Արթուրեանին հետ, ինչն ալ որբ մը, նախկին ուսուցիչի մը զաւակը, մեծ ճիւղափայտն, որպէսզի կարելի եղածին չափ շատ օգտուէինք մեր դասերէն: Ահա այս ամէնը հետաւոր պատահի մը վրայ կըրկին կեանք առին, երբ լսեցի մեր վարժուհիին ամուսնութիւնը, իմ բարեկամ Պրն. Փիլիպանին հետ:

Անցաւ ժամանակ: Ես Պրն. Փիլիպեանը կորսնցուցի: Օր մըն ալ լսեցի, որ այս աշխարհէն իր հաշիւը մտքեր է ու իր յաւիտենական հանգիստը մտեր, իր ետին ձգելով այրին ու երկու մանչեր՝ Լեւոն եւ Թուրէն, որոնք այսօր իր հոգաւորտին անթաւամ պսակները կը կողմէն իրենց արուեստով՝ բժշկական ասպարէզին մէջ: Անոնք պսակն են նաեւ իրենց մօր, մեր երբեմնի վարժուհիին, որ տակաւին կը պահէ իր սիրտոցը ինչպէս իմ, այնպէս ալ ինծի նման շատ շատերուն մաքին մէջ, որոնք պատերազմի սարսափներէն ու թանկագին կորուստներէն ետք, ոտարուպիկ ու կիսաքաղց, ծնրադրեցին իր եւ իրեն նմաններուն առջեւ, սորվելու Մեսրոպեան աստուածաբան դպրոցը, Հայոց Այբուբենը...:

ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Անրիխաս, Լիբանան

ՆՈՐԱՅՐ ՊԱՐԹԵՒԵԱՆ

«ՃԱՇԱԿԵՍՅԷՔ ԵՒ ԿԵՐԷՔ, ՋԻ ԲԱՂՅՐ Է...»

Ամենէ՛ն աւելի կարդացուած, ամենէ՛ն աւելի քարգնանուած ֆրանսացի գրագէտը *ժիւլ Վէրն*ն է, մէկը *Գիտա-երեւակայական* (սխանա-ֆիւսիօն) գրականութեան հիմնադիրներէն:

Կըսեն՝ թէ ոեւէ մէկը չի կրնար մարգարէ ըլլալ իր երկրին մէջ: Օրէնքը բացառութիւն չէ հանչցած այս պարագային եւս: Ֆրանսացիներուն զնահասանքը շատ ժլատ է՝ բաղդատելով օտարներուն անխտոմ մեծարանքին հետ:

«Գիտա-երեւակայական» եւ գրականութիւն:

Անշուշտ կարելի է ժպտիլ: «Մամկամիտ», «արկածային դրական» կամ «անկուրջ» մակդիրները գործածել, ժպտիլ եւ անցնիլ:

Տակաւին ա՛յս է քննադատներու մեծամասնութեան եւ մտաւորական որոշ շրջանակներու դիրքաւորումը, մահաւանդ ֆրանսայի մէջ:

Նախ կայ անժխտելի իրականութիւն մը: Գիտա-երեւակայական միլիոնաւոր հատորներ եւ պարբերաբարքեր կը հրատարակուին գրեթէ ամէն երկրի մէջ, հատարելով եւ մոլի ընթերցողներու աներեւակայելի բազմութեան մը համար: Ընթերցողներ՝ որոնք միշտ երիտասարդներ չեն:

Անշուշտ քանակը արժէի յատկանիշ չէ եւ կարելի է դիտել տալ որ ստեղծագործման, սպասման եւ ընկալումի նայն պատկերը կը ներկայացընեն նաեւ գուզտնի ռասիկանական եւ լրտեսական վէպերու լեռնակուտակ դէպքերը:

Սխալ պիտի ըլլար, սակայն, երկու ուղղութիւնները իրարու հետ շփաթելլ, կամ ալ նկատել տարբերակներ, որոնք արկածային դրական քննան կը շահագործեն այս կամ այն ձեւին տակ:

Եթէ գաղտնի ռատիկանական եւ լրտեսական գրականութիւնը ժողովրդականութիւն կը վայելէ աշուր եւ դարձած է իրական ճարտարապետութիւն մը՝ իր վաճառականական արտադրութեամբ եւ մեքոտմերով, կարգաւորուած է տակայն ստեղծագործական կենսունակութիւնը: Կայունացած է իր հիմքած քննաներուն մէջ: Անշուշտ, կարելի է թուել քանի մը քացառիկ գործեր, յեղդուած անարժէք թուղթերու դէպքերուն տակ: Այսօրէն:

Գիտա-երեւակայական գրականութիւնը, ընդհակառակն, քանի մը տառնակ տարիներու կազմաւորման շրջանէ մը ետք՝ երիտասարդական խանդավառութեամբ կը փորձէ նոր ուղղութիւններ: Պարզ ժամանցի յատկացուած մեծ քանակի մը կողմէն՝ կայ - անկարելի է չտեսնել - գրական

մտահագուսթիւններ ունեցող շարժում մը: Կան, հետզհետէ շեշտուող՝ գըրակամ արժէք ունեցող գործեր:

Երկար ատեն հեղինակները նկարագրեցին ապագայ հրաշալիքները, աւելի կամ պակաս յաջողութեամբ: Թէեւ հիմնուած գիտական տուեալներու վրայ, բայց շատ աւելի երեւակայութեան ուժով՝ հասան... Լուսին, Հրատ, աստղերը, կոստուած միգամոմները: Անոնց հերոսները հազարապնդեան անդրերկրային էակներու հետ: Գաղութներ հիմնեցին տիեզերքի ամէ՛ն անկիւնները: Պատերազմներ մղեցին ուրիշ աշխարհներէն եկած հրէշներու դէմ: Կործեցին հիւլէին գաղտնիքը: Հեռագայնութեամբ խօսեցան, հազարաւոր ֆիլմերէր հաշուող միջոցը կտրելով: Գերբնական կարողութեամբ՝ քոչեցան: Բաց գիրքի մը պէս կարողացին անցնել ու ապագան: Յազարաւորեցին հիւանդութիւններն ու մահը...:

Ապագան խուզարկելէ յոգնած՝ հեղինակները վերականգնացուցին ֆանթասթիք անցեալ մը, գերան ֆազաֆակրթութիւններ՝ որոնք փնտցան հիւլէական պատերազմներու վերջին դատաստանին մէջ, հետք չձգելով պատմութեան էջերուն վրայ: Մեր կիսավայրենի նախահայրերը, որոնք շքու էին դուրսէն եկած էակներու կիրակնօրեայ ծամանցին համար: Զարմանալիք անասուններ, ոչ-մարդկային ընկերութիւններ, եւ տակաւին ինչե՛ր...:

Անցեալէն դառնալով ապագայ, գուշակեցին մարդամեքենաներու դարը, մարդկութեան այլասերումը եւ վերջնական փնտցումը, երկրագունտին մահը, արեգակնային դուրսեան փաշխացումը: Նկարագրեցին տիեզերքին մէջ գտնուող «եակատիեզերքը», հակամիւթը, հակամարդը, հակաժամանակը, հակամիջոցը... Անոնց բախումը, պայքարն ու անէացումը...:

Ապագայէն վերադառնալով ներկային, ֆազաֆները աղաղակ միապաշար բազմութեան մէջ տեսնան հրատոցի լուսններու խմբակներ: Մեր արտաքին երեւոյթը ունեցող, բայց «ուրբէ» ցեղի պատկանող մարդիկ, որոնք կը հրահրեն պատերազմներ, կը տարածեն համանարակներ, ֆայֆայելու համար չտարական, մարդկութիւնը եւ նուաճելու համար երկիրը՝ իրենց հաշուոյն: Համարողներ, եկած հեռու անցեալէն: Անմահութեան գաղտնիքին տիրացած գիտուններ: Անդիի աշխարհին հետ սերտ կապեր հաստատած հագիներ: Աշխարհի նակառուցիչը տնօրինող ամենագոր եւ գաղտնի միութիւններ: Մարդկութիւնը փոխարինելու սահմանուած կենդանիներու նոր ցեղեր...:

Այս բոլորին հասարակ յայտարարը գիտութիւնն է, քեֆնիքն է, գիտական քեֆնիքին պանծացումն է: Ի՞նչ փայթ, յաճախ կեղծ գիտութիւն մը:

Գիտա-երեւակայական հեղինակներու շատ մը մարդարեւութիւնները իրականացան ժամանակի ըմբացիկն: Մեծ կարեւորութիւն չի ներկայացրուներ այս պարագան, որովհետեւ հեղինակները կը նկարագրեն հաւանականներ: Ուրեմն՝ արկածախնդրութիւն, հագար ու մէկ հրաշքներ, հետաքրքրական, քեթեւ պատմութիւններ, որոնցմէ բացակայ է մա՛րդը եւ իր հոգեկան աշխարհը - նոյնիսկ եթէ բազմաթիւ հերոսներ կան: Անշուշտ բուն հերոսը գիտական խաղալիկն է: Շատ հեռու ենք գրականութենէն:

Գրական ֆննդատներուն անհուն արհամարհանքին գիտա-երեւակայական հեղինակները կը պատասխանէին - եւ այսօր ալ կը պատասխանեն - գրախոսն մեծամոլութեամբ: *Եթէ ձերն է այս չինցած, այս նեղ*

Աշխարհը, էր ամէնօրեայ, մաշեցնող հողերով եւ ճղճի՛ յուզերով, մե'րն է լաջածաւալ Տիեզերքը, ուր մարդը վերջապէս կը գտնէ իր բանտուած կարեւորութիւնները լիովին իրականացնող ազատ միջնորդը» :

Բայց, ինչպէս ըսինք, փոխաւած բան մը կայ գիտա-եթեւակայական աշխարհին մէջ: «Ինծի համար գիտա-եթեւակայական գրականութիւնը բանաստեղծութիւն է», կ'ըսէ անգլիացի հեղինակ Պրայան Վ. Ալտիս: «Նոր Աշխարհներ» պարբերականին շուրջ հաւաքուած երիտասարդ գրողներ կը փարձեն ազատագրել այդ գրականութիւնը՝ գիտական առասպելին միանեծամ տիրապետութենէն: Եւ, իսկապէս, վերջին տասը տարիներու ընթացքին երեւցած վեպերուն մէջ հետզհետէ չի գործածուիր աստղամալը, գերան քաղաքակրթութիւնը, բեմնիւնիւն հրաշքը: Բիւրեղեայ Անտառը վեպը (Ժ. Ճ. Պալլարտ) գետեղուած է Ափրիկէ, սովորական հերոսներով, սովորական գիտական մթնոլորտով:

Այսպէս՝ տե՛կ կը բացուի մարդուն եւ մարդուն հոգեկան աշխարհին: Գայն հաւաքական անգիտակիցին կապող առասպելներուն: Անոր անձկութիւններուն եւ անդռեանքին, յոյսին եւ խանդավառութեան:

Մեր նպատակը չէ գիտա-եթեւակայական գրականութեան այս նոր շարժումին լրիւ մասնաւորութիւնը: Գաղափար մը տալու համար ստորեւ կը ներկայացնենք ֆրանսացի երիտասարդ հեղինակ Ժերար Փլէնի նախնականը, հայացուած եւ քիչ մը խտացուած:

Հակառակ արտաքին երեւոյթին ~ նորավեպը գետեղուած է մտաւորապէս 2200 բուականին մէջ ~ գիւրին է հաստատել, որ հեղինակը իր այսօրուայ մարդու անդռեանքն է, որ կը փոխանցէ մեզի, գրական ճաշակով մը: Ան երգիծանքին ետեւ յստակօրէն կ'երեւի մե'ր անձկութիւնը, հանդէպ վերաբուժական յառաջդիմութիւններուն, բնակչութեան տարապայման բազմացման, ապագայի անստուգութեան, աւանդական արժէքներուն փլուզման: Անշուշտ, գիտակցօրէն մտցած է ծովը եւ իր աննդական անսպառ հարստութիւնը:

Բայց ի՞նչ փոյթ: Ան չի պնդեր որ ապագան կը ներկայանայ մի'միայն եւ թի'շք այդ ձեւով: Հաւանականութիւն մըն է, որ կը բննէ: Մարգարէութիւն չ'ընեն:

Եւ արդ, «ճաշակեցէք եւ կերէք...» բայց ուշագրութիւն, քաղցր չէ, շատ դա՛նն է կատակը...:

Ե. Գ.

ԺԵՐԱՐ ՓԼԷՆ

ՃԱՌԱԹՕՍՈՒԹԻՒՆ

ԲՈՒՍԱԿԵՐՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՑԻՆԻ

ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՐԵՐՈՐԿ ՏԱՐԵԿԱՐՁԻՆ ԱՌԻՓՈՎ

Տիկիներ, օրերդներ եւ պարոններ, շատ մեծ սխալ պիտի ըլլաք ենթադրել որ քաղաքակրթութիւնը եւ մարդակերութիւնը Համընթաց զարգացած են պատմութեան ընթացքին: Եղած են նո՛յնիսկ ժամանակներ, երբ մարդակերութիւնը շփոթուած է վայրենութեան հետ: Եթէ պատմաբաններուն հաւատք ընծայենք, մարդակեր ցեղախումբերը կը յայտնաբերէին նախնական մշակոյթ մը: Կը լափէին պարտուած թշնամիները, յոսալով իւրացնել անոնց վերադրուած յատկութիւններ – քաջութիւն, խիզախութիւն – կամ ալ արդիւնաւ համար որ մեռնալներու հոգիները իրենց ջունք խանգարեն...:

Այս ցաւալի աւելորդապաշտութիւնները մեղադրանքի քողով մը ծածկեցին նոյնի՛նքն մարդակերութիւնը, եւ քաղաքակրթուած ազգերու կողմէ դատապարտել առին զայն որպէ՛ս ոճիբ: Տակաւին քսաներորդ դարու կիսուն՝ ո՛րեւէ զգալուն անձ պիտի ըստմնէր, եթէ իրեն առաջարկէին մարդկային միա ճաշակել:

Ճոմարսն Աուիֆրի () անձին մէջ կ'ողջունենք ներկայ դրութեան մեծազոյն ռասիֆիզան: 1729 թուականին, երդիծանքի դիմակին տակ պահելով մտածումին խորութիւնը, իր «Համեստ առաջարկ՝ Ալֆասո Իրլանտացիներու տղաքը գործածելու իրրել սննդամիութեան» անմահ գործին մէջ՝ ան կը ցանէր արդէն սերմերը ա՛յն սկզբունքներուն, որոնք պիտի ծլէին երկուքուկէս դար ետք: Անուշտ, այսօր իր առաջարկը բարբարոս կը*

(*) Անգլիացի գրագ: Հեղինակն է «Կրօնիկերի ճամբորդութիւնները» վեպին:

թուի: Ինչպէս գիրքին խորագիրը կ'ըսէ, ան կ'ուշիր ար աղքատներու դա-
ւակները որպէս անունը ծառային հարուստներուն, եւ վաճառման հասոյթն
ալ ծնողներուն պէտքերուն յատկացուին: Փոքրիկները այսօր ալ փնտռուած
ուտելիք մըն են, բայց որո՞ւ մտքէն պիտի անցնէր կամովին վերջ դնել
նախախնամութեան շնորհած օրերուն:

Պէտք եղաւ սպասել մինչեւ քսաներորդ դարու վերջերը, երբ, տա-
րորինակ անձ մը, Ճոզէ Սինամորիայա, ծովային բոյսերու արտադրման
եւ պտորաստութեան մէջ հարստացած, հիմնէր Մարդակներնը առաջին
Ակումբը: Մասնակցութեան պայմանները յստակ էին. անգամները պաշա-
նապէս կը կտակէին որ իրենց մարմինները ուտուին, մահէն ետք, միւս-
ներուն կողմէ:

Միութեան հիմնադրութիւնը զրեթէ աննկատ անցաւ: Ո՛չ ոք յայտ-
նապէս զգաց, որ պատմութեան էջերէն մէկը դարձած էր:

Գայթակղութիւնը պայթեցաւ քանի մը ամիս ետք: Սինամորիայի
երիտասարդ եւ գեղեցիկ կինը մահացաւ ինքնաշարժի արկածով: Բարե-
բախտաբար կատարած էր պաշտօնական բոլո՛ր ձեւակերպութիւնները: Ա-
կումբին անդամները մեծ տխրո՞ւկով կերան անոր մարմինը: Եւ, ինչպէս
զիտէք հաւանաբար, երկրորդ օրը բոլորն ալ ձերբակալուեցան եւ յանձնը-
ւեցան դատարան:

Ճոզէ Սինամորիայա՝ դորաւոր փաստարաններու օգնութեամբ՝ կըր-
ցաւ հաստատել որ ոճիւր չէր գործուած: Օրէնքներ կային գողութիւնը,
մարդասպանութիւնը, շնութիւնը, բռնարարութիւնը, բազմակնութիւնը եւ
կեղծարարութիւնը պատժող, բայց լազաւակրթուած երկիրներու մէջ
մարդակերութիւնը արգիւտ օրէնք չկար: Խորհրդարանները զանց առած
էին քուէարկելու նման օրէնադրութիւն մը, շկարեմալով երեւակայել որ
մարդակերութիւնը կրնայ պատահել անկախ ուրիշ ոճիւրէ:

Արդէն գրեթէ բոլոր սպերու կանոնադրութիւնները ընդունած էին
որ անձ մը իրաւունք ունի, ազատ է իր մարմինը կամ մարմնէն մաս մը,
մահէն ետք կտակելու: Հիւանդանոցներու կամ գիտական կեդրոններու,
որպէսզի հիւանդներ կամ հայմանդամներ օգտուին: Սովորական էր աչքե-
րը նուիրել ծանօթ կոյրի մը, սիրտը՝ աղպականի մը, լեարզը՝ ալքոլամոլ
բարեկամի մը: Օրէնքը նոյնիսկ արտօնած էր, որոչ սահմաններու մէջ, որ
այս կտակներուն փոխարժէքը հնթակային վճարուի մահուանէն առաջ, ամ-
բողջութեամբ կամ մաս առ մաս:

Ճոզէ Սինամորիայի փաստարանները, ուրեմն, շատ զժուարու-
թիւն շունեցան ամբաստանելները ազատելու: Քանի մը երկիրներու կա-
ռավարութիւնները աշխատեցան հակամարդակերական օրէնքներ հաստա-
տել: Բայց այդ օրէնքները չեղեալ նկատուեցան Բարձրագոյն Ատեաններու
կողմէ, որպէս հակասահմանադրական: Զուիցեցիտ եւ Իտալիոս միայն կը
պահեն ցարդ հակամարդակերական օրէնքներ, բայց ինչպէս պիտէք, ա-
նոնք չեն գործադրուիր: Եւ այսօր ո՛րեւէ դատախազ պիտի չհամարձակէր
ծիծաղելի դառնալ ժամանակավրէյ օրէնսդրութիւն մը ոգեկոչելով:

Դար մը առաջ միջնադէպը հաւանաբար մոռցուէր: Բայց քսաներորդ
դարու վերջերը մեր մոլորակը սկսած էր արդէն տասը միլիոս մարդ կրել:
Անշուշտ, այս թիւը համեօտ կը թուի մեր այսօրուայ իններուն միլիոս
մարդկութեան քով, մարդկութիւն՝ որով արդարօրէն կը հպարտանանք:
Բայց խճողմին անտեսական հետեւանքները սկսած էին արդէն երեւել:

Անասունի միւր դարձած էր հազուադէպ եւ անմատչելիորէն սուղ: Քաղաքները, ճամբաները, օդակայանները, տիեզերակայանները հետզհետէ ծածկած էին մշակելի հողերը: Բարեբախտաբար կային գործատուներու մէջ մշակուած հիտրոպոնիկ (*) բանջարեղէնները: Առանց այդ բոյսերուն՝ մարդկութիւնը դատապարտուած էր անօթի մեռնելու, քանի ծովն ալ տակաւին չէր տուած յուսացուած սննդական նիւթերը: Այլ անիմաստ դարձած էր քաղաքներու մէջտեղը բազմաթիւ ախոռներու մէջ մնացու անտուռները բուծանել, որովհետեւ այդ կը նշանակէր մսիկ թուսական սնունդի մը իննըսուն առ հարիւրը: 2024-ի Համաշխարհային Համաձայնութիւնը արդէն նկատի առած էր այս պարագան եւ արդիւած անասուններու բուծանումը - բացի դիտական աշխատանքներու եւ կենդանաբանական պարտեզներու համար: Խոզերը ժամանակ մը վերապրեցան, շնորհիւ իրենց ո՛րեւէ մնացորդով դո՛ւսնալու յատկութեան: Միտի այս աղբիւրն ալ ցածքեցաւ, երբ մարդիկ զտան ամէնէն անշուստ մնացորդներուն բրոթէիները զտելու եւ անոնց տանելի երեւոյթի եւ համ տալու կերպը:

Այլ որոշ էր: Որպէս մնացու կենդանի կը մնար մ'ըզը եւ միա՛յն մարդը: Եւ պատմութեան ընթացքին ո՛չ մէկ ժամանակ մարդկութիւնը իր տրամադրութեան տակ ունեցած էր նման առատ, անհատուած պաշար մը:

Այս իրողութիւնները կը բացատրեն, թէ ինչու՞ ձօղէ Մինանտրիոլայի եւ իր հետեւորդներուն զաղափորները յաջողութիւն դասն: Մինանտրիոլա ի՛նքն ալ ճաշակուեցաւ 2037 թուականին: Ճաղթական ընդունելութիւն մը կազմակերպած էին այդ առիթով, հակառակ որ միւր ծերացած էր եւ միջակէն ալ վար:

Խորքին մէջ, կիթ նկատի չառնենք եկեղեցիները՝ որոնք քանի մը աճիորնաւէնքօ ըրին, միա՛կ ընդդիմութիւնը բժշկական դասէն եկաւ: Որովհետեւ, հետզհետէ դժուարացած էր առողջ գործարաններ զտնելը, պատուաստներու եւ վիրաբուժական գործողութիւններու համար: Շատ աւելի շահաւոր էր մարմինը ծախել միտի շուկային մէջ, քան հիւանդանոցի մը կտակել, նոյնի՛սկ դրամական վարձատրութեան փոխարէն:

Ժամանակի ընթացքին շարք մը Համաձայնութիւններ մշակուեցան, որոնք սահմանեցին, թէ մարմինն այսինչ մասը պիտի յատկացուի հիւանդանոցներուն եւ այսինչ մասն ալ երթայ սպանդանոց: Կարգ մը գործարաններու համար, որոնք սննդական շնչին արժէք մը կը ներկայացնեն - օրինակ ալքը - խնդիր չեղաւ: Բայց ուրիշ գործարաններ կը քոտ վիճաբանութիւններու առիթ տուին:

Չեմ ուզեր ծանրանալ այս Համաձայնութիւններու մանրամասնութիւններուն վրայ, որոնք զարդ ի գօրու են: Ինչպէս դիտէք, կարգ մը կէտեր կրնան վերատեսութեան ենթարկուիլ Մասնագէտներու Յանձնարարութի մը կողմէ, նշանակուած Մտրդակերներու Տիեզերակամին, Բժշկական Գասիմ եւ Բուսակերներու Միջազգայինին կողմէ:

Բայց վերապահումներու շրջանը չէր անցած: Ժամանակ մը կարծուեցաւ, որ մարդկութիւնը պիտի բաժնուի - ինչպէս շատ անգամ պատահած է պատմութեան ընթացքին - երկու թշնամի հատուածներու: Մէկ

(*) Առանց կողի բոյսերու մշակում, հեզուկ միջավայրի մէջ: Ուսումնասիրութեամբ Արեթ է գրեթէ ամէն տեղ եւ մասնաւորապէս Հայաստանի մէջ:

կողմէն՝ Համազումով կամ ստիպմամբ բուսակերները (այսինքն՝ ազգատուփեան պատճառաւ)։ Միւս կողմէն՝ մսակերները։ Բուսակերները կ'արհամարհեն մսակերները, զանոնք կոչելով քաննիպալներ կամ զեւեր։ Այս վերջիններն ալ կատաղորէն կը հակադարձէին։ Պատահեցան բազմաթիւ խռովութիւններ, որոնց ընթացքին մսակերները բուսակերներ սպաննեցին եւ կերան։ Դժբախտաբար ստիպուած եմ խոտովանիլ, որ բուսակերներն ալ փոխադարձեցին, բայց անճրկեցան մսակերներուն դիակներուն առջեւ։

Վերջապէ՛ս ողջմտութիւնը յաղթանակեց։ Բանիմաց մարդիկ անզբազարման, որ խորքին մէջ՝ երկու հատուածները հակամարտ ըլլալէ առաջ՝ իրարու լրացուցիչ էին։ Անյիշատակ դարերէ ի վեր յայտնի էր, որ բուսակեր անասուններու միտը աւելի՛ հաճելի է քիմքին եւ աւելի՛ ատողաբար, քան մսակերներունը։ Նոյնպէս՝ մարդակերները շատ խեղճ մասցուներ էին, մինչդեռ բուսակերները կը ներկայացնէին հոյակապ միտի հակայական հարստութիւն մը։ Արդէն գիտական հետազոտութիւններն ալ ցոյց կու տան, որ բուսակերներու միտը տեւուպէս կը բարելաւուի, սերունդէ սերունդ։

Կողմերը հաշտուեցան եւ բուսակերներու վերջին վերապահումներն ալ չքացան, երբ մարդակերները որոշեցին իրենց մարմինները վերաբոյժներուն տրամադրել։ Այսպէսով՝ հիմնուեցաւ գործածման իրական բաժանում մը — բուսակերները՝ սեղանին, մարդակերները՝ հիւանդանոցին։

Մի՛ կարծէք որ այս արդար լուծումը անմիջապէ՛ս եւ ամէնու՛ն հաւանութեան արժանացաւ։ Տակաւին պէտք եղաւ որ սերունդ մը անցնի մինչեւ կարգ մը բուսակերներու ընդդիմութիւնը վերնայ։ Բնականաբար, երիտասարդ բուսակերները շուտով ընդդրկեցին նոր սովորութիւններ։ Թեւ լացի բարոյութիւն մը մեծապէս սպգեց հանրային կարծիքին վրայ։ Ամէ՛ն կողմ փակցուած ամփիշներ ցոյց կու տային խարտեալ, հրեշտակային օրիորդ մը՝ Մարդակերներու Համագործակցականիմ կիշէին առջեւ, հետեւեալ կարգախօսով՝ «Մարմինը դրամազուռի է, օգնուեցէ՛ք՝ կամ ալ — Եփեղեցիկ կտոր մը»։ Միւս կողմէ, բուսակերները քաջալերելու համար՝ Մարդակերներու Համագործակցականը անոնց կը նուիրէր մսթոսիքէթներ, զորաւոր ինքնաշարժներ, իբր թէ մարզանքի եւ մկանները զօրացնելու համար։ Իրականին մէջ կը յուսային մահացու արկածները բազմացնել։

Մի՛ կարծէք նաեւ որ բուսակերները հիմակուան պէս միշտ բազմաթիւ եղած են։ Քսաներորդ դարու կիսուն՝ հազար անձի վրայ հազիւ մէկ բուսակեր կարելի էր գտնել։ Փամանակի ընթացքին, եւ աստիճանաբար, մեր թիւն ու արժէքը անհամեմատ կերպով աւելցան, եւ այսօր հանրածանօթ է, որ բուսակերը աւելի՛ արժէք ունի, քան մսակերը։ Պաշտօնական վերջին դիներուն համաձայն՝ բուսակերին ջիւտն, այսօր, ութուկէս անդամ աւելի կ'արժէ, քան մսակերինը։ Փոքրաքանակի մրայ՝ տարբերութիւնը նոյնիսկ աւելի է։

Գիներու տարբերութիւնը ինքնին պատճառ էղաւ, որ Միջազգային Որիմ անդամները ալ աւելի բազմաճան եւ այն բարոյական արժէքները, որ կը պաշտպանենք, յարգուին բոլորին կողմէ։ Պէտք է գիտակցիլ որ պատմութեան մէջ բուսակերութեան ազնիւ սկզբունքը երբե՛ք այսքան մեծ ընդունելութիւն չէր դտած։

Այո՛, ազնիւ կ'ըսեմ։ Կա՞յ աւելի ազնուակտն վերջ մը՝ ուրկէ կը ծնի վաղուան մարդը։ Կա՞յ աւելի յուզիչ օրէնք մը, որ կը պարտադրէ ու-

ընդհանրապես իր անձնական միջոցները: Մենք հաւատարիմ աշակերտներն ենք անոր՝ որ հ'ընտէր «Առէ՛ք, կնրէ՛ք, ա՛յս է մարմինն իմ...»:

Մեր անդամներու բազմացումը, միւս կողմէն, պատճառ կ'ըլլայ որ զինները իջնեն: Բայց նշանաւոր փրոֆեսէօր Վաճ ժէժՆԱԷՆ ցոյց տուած է, թէ ընկերութեան մը մէջ կը բաւէ որ իննը բուսակերի զէմ մէկ մարդակեր ըլլայ: Պահանջը մատուցումէն միշտ աւելի պիտի ըլլայ, որովհետեւ, եթէ բուսակերը մէկ անգամ պիտի մեռնի, մարդակերը ամէն օր պիտի ուտէ: Յամենայնդէպս, մասնագէտները աւելորդ է, քանի ղեռ հեռու ենք այդ համեմատութենէն: Մեր Միջազգայինին մէջ արդէն պահանջներ կ'ըլլան իրենց կազմութեան բարձրորակ ընտրանքի մը, որուն հետեւեալ նախահարձերը սերունդներէ ի վեր պատատ մը միս անգամ չեն կերած: Բնականաբար ասոնց արժէքը շատ մեծ է:

Ի՞նչ պիտի ըլլայ վաղը — չենք դիտեր: Բայց զիտե՛ք, թէ ինչպէս է այսօր: Գիտենք՝ թէ մարդկութիւնը ի՞նչ հսկայական յառաջդիմութիւն արձանագրեց շնորհիւ ընկերային այս նոր հաւասարակշռութեան: Ոճիւրջ, Պրիմալի համար, չքացած է երկրագունդին երեսէն: Մեր ամբողջ բարոյականութիւնը հիմնուած է անոր բացարձակ արդեւքին վրայ: Անցեալին կը պատկանին պատերազմները, միտի այդ արիւնոտ վատնումները: Հազարաւոր տարիներ են անձնասպանութիւնները: Յաջողած է հիւանդութիւններու դէմ տարուած պայքարը, որ մարմինները անասակ կը դարձնէ օդ-տազարծումի: Երկասարդութեան երկարաձգութիւնը այլեւս երազ չէ:

Նոր մարդը, աւելի՛ հասուն, աւելի՛ տոնական, կրցած է բազմապատկել իր պատասխանատուութիւններուն զիտակցելու առիթները: Այսպէս, ի պատուի են մտանդաւոր մարգարայերը: Վերահաստատուած է մեծամարտը:

Մարդը, վերջապէս, ըլլա՛յ ստիպակ ակոսներով բուսակերը, ըլլա՛յ սուր հերձատամներով մարդակերը, վերապսած է վտանգին իմաստը:

Տիեզերքի մշտական մարտահրաշխան ան կը պատասխանէ իր ուժով, ճարտիկութեամբ, բայց մանաւանդ իր խելացութեամբ:

Բուսակերներ, եղբայրներ, սխալ պիտի ըլլար տարուել զերազատութեան զպայտներով որ մեզմէ ոմանք, զիտե՛մ, կը տածեն անցեալի մարդոց եւ մարդակերներուն հանդէպ: Մի մտնաք որ ժամանակները տարբեր էին, սովորութիւնները տարբեր: Գալով մարդակերներուն, անոնք կը զիտակցին որ մենք աւելի արժէքաւոր ենք, բայց պէտք է խոստովանիլ որ մեզմէ աւելի լաւ կը գործադրեն աստուածային յանրձեռական պտուղամը՝ «Ուրբ՛ւրջ սիրէ՛ք»:

Տիկիներ, օրիորդներ եւ պարոններ, ներեցէք որ խօսքս այսքան երկարեցաւ: Անմիջապէս սեղան անցնի՛ք ճուղակելու համար ԲԱՐԵՂԱՅԻ(*) սա սքանչելի կարկանդակը:

Փ. Փ.

Հայացումը՝ Ն. Պ.

(*) Մամբաղխական բայս մը, որ սկսած է արդէն գործածուիլ որպէս օճեկական արհիւր՝ տնտեսներուն հոմաք:

Մ Տ Ո Ր Ո Ւ Մ

Ես չգիտեմ քե՛ է ինչո՞ւ, ամէն իրիկնապահի,
 Երբ արեգակը երկրին իր հրածեղում է տալիս,
 Ազատի ակա երկիրն երբ զգեստներն է փոխում
 Եւ քաշում է սեւ շարժմ իր խիղճով լի աչքերին,
 Ամէն-ամէն իրիկուն, ուր որ լինեմ նայն պահին,
 Քեզ եմ յիշում ես կրկին, ժպտուն, կայտառ տակաւին:

Ես չգիտեմ քե՛ է ինչպէս դառնում է յուս ժամանակն
 Վազքը նրա խլացնող եւ հասկանալ չգիտեմ,
 Երկար ու սիւզ, մաշեցնող, սանջող ժամերը նրա
 Ես համբարեղ չգիտեմ, սպասում եմ խելագար,
 Մինչեւ լինի իրիկուն ու միտնս գաս դու նարից,
 Եւ արքնացնես դու իմ մէջ մեռած անցեալը տնուշ
 Որպէս մտածանը սրտիս եւ անցեալի քաղցր յուշ:

Ու ամէն օր, ամէն օր, ամէն իրիկնապահի,
 Ողջունում եմ քեզ նարից երջանկացած ու բարի,
 Մոռանում դառը ներկան, յիշում անցեալը շաղոտ
 Համբայ բացում քեզ համար լեռնու մտնուս քարոս
 Բարի գալուստ եմ տաում, բայց ահ դեռ չյագեցած,
 Յեւ ես դառնում դու շտապ, աչքս նարին դու քողած
 Սպասում եմ ես կարօտ, մինչեւ յաջորդ իրիկուն:

Ու մի օր էլ ես գիտեմ, օրերն տարի կը դառնան
 Տարիների մի շարան, բայց էլի ես ամէն օր,
 Ամէն-ամէն իրիկուն, քեզ կ'ողջունեմ նայն պահին,
 Քեզ կ'ողջունեմ ես մտնս արահետում կոշտ ու բիրտ,
 Քեզ կ'ողջունեմ ես սիրով եւ նայն խիղճը կը ստանամ
 Ինչ ստացայ առաջին իրիկուայ մեր հանգիստան,
 Ծանօթացման վայրկեանում:

ՌԻՄԱ ԳԱՌՕՆԷ

ԺԻՂԱՅՐ ԱԹՔԱՐԵԱՆ

ԳՐԵՑԷՔ...

ԲԱՑԱԿԱՅ

Պ՛չ, այլևս չէի կրնար, չէի կրնար
հանդուրժել որ Հէլկան ախպէս կենար,
խարտեալ ու արժանաւոր Հէլկան կենար,
դէմս ախպէս շփոթ ու մուր: Գժուար
կրնայի ինքզինքիս թոյլ տալ որ ան կե-
նար ախպէս դէմս, ինչպէս հարէ՞մի մը
մէջ, թահանցիկ գիշերանոցով, որ գրե-
թէ ոչինչ կը պահէր, որ իր մեկրութիւ-
նը շատ խեղճօրէն, թշուառօրէն կը
պարակէր: Մանաւանդ որ, հիմա, Հէլ-
կան կու դար կը նստէր սեղանիս վրան
ու կը սկսէր ջգայնացնող անհոգութեամբ
թուղթերս խառնշաղկել:

- Լօտցէ՛ք, - պոռացի յանկարծ ա-
նակնկալ կատազութենէ մը մղուած, -
ախպէս չ'ըլլար... Իրաւունք չունիք...
բայց սիրելի օրինորդ, այս ի՞նչ կը նշա-
նակէ, չէ՞ք կրնար ախպէս մնալ... յե-
տոյ հաճելի չէ ինծի, չեմ կրնար հան-
դուրժել որ թուղթերուս հետ խաղաք...

- Օ՛ր, իրա՞ւ, - ըսաւ ան չարածճի
չեղտով մը, - իրա՞ւ չէիք հանդուրժեր
... Բայց արդէն կարգացի, արդէն գի-
տեմ... հիմա արդէն...

Հէլկան խօսքը չվերջացուց: Ոտքի
ձայներ լսուեցան վարէն, յետոյ նաեւ
քնատ ձայնը Փրօ Ժէրթրութի, որ յա-
մարտօրէն իր աղջիկը կը փնտռէր, յաջո-
ղեցան վերջ դնել Հէլկայի անօրինակ
յամառութեան... Եւ լաւ որ այդպէս ե-
ղաւ:

Եւ այդ գիշեր բուրբովին խանգար-
ւեցայ: Ո՛չ մէկ տող, ոչ իսկ մէկ հատ

նախադասութիւն կրցայ դուրս տալ: Նե-
տեցի ինքզինքս անկողին ա՛յն յոյսով,
որ քունը կ'առնէ՛կը տանի դիս ու կա-
տազօրէն հայհոյեցի մանաւանդ տիեզեր-
քի բոլոր խարտեալ գոյութեանց:

Յաջորդ առաւօտ շատ ուշ արթն-
ցայ: Փորձեցի աշխատիլ, բայց միշտ
առանց արդիւնքի: Գլուխս սաստկօրէն
ցաւ կու տար ինծի եւ ա՛յլ աչքիս վիճա-
կը միշտ աւելի կը գէշնար: Յամառեցայ
տակաւին քանի մը էջ մտուել, բայց ա-
ռանց յաջողութեան: Լաւագոյն լուծու-
մը, ինքզինքս դուրս նետելն էր: Գոնէ
այս ձեւով հաւանաբար կարենայի վեր-
կելիլ ես ինձմէ, ամէն վայրկեան ինք-
զինքս անպէտք, անօգուտ ոչնչութիւն մը
զգայէ:

Ժամանակ անցուցի գուրսերը, դե-
ղերելով այն յոյսով որ պիտու ցաւս բաց
օդին կը փարստէր: Սլքտացի մինչեւ ի-
րիկուն պատմուածքիս հաշտին, նոր-նոր
խօսքեր որոճալով ու մտածելով նաեւ
նախորդ գիշերուայ գէպքերուն մասին:
Գապարէին կոխը նախ, յետոյ դժբախտ
նկարէչին անակնկալ խոստովանութիւն-
ները, որոնք գործիս նոր օւղղութիւն,
նոր հուանք մը պիտի տային ու վերջա-
պէս... Հէլկան:

Իսկուպէս, Հէլկան ի՞նչ ուղած էր
ըսել ինծի, ինչո՞ւ ինծի խրատներ առ-
լու պարտք կը դրար, ինչո՞ւ կ'ուզէր որ
յիսմեմ: Վերջէրս քիչ մը խմած էի, չեմ
ուրանար, բայց իմ տակուսութեանս

չափերէն երբեք աւելի եւ ոչ ալ ուրիշին նեղութիւն պատճառելու աստիճան: Երբեք այնքան, անտարակոյս, որ գիտողութեան արժանի ըլլար եւ այն ալ մինչեւ... Բարլի մը կողմէ:

Մտածումէ մտածում անցնելով՝ եզրակացուցի վերջապէս, որ Փրօ ժէր-թրուֆ եւ Հէլլա Իրենք գիրենք վարկարեկուած կրնային զգալ Իրենց յարկին տակ ինծի պէս անկանոն մէկուն արատաւն տուած ըլլալուն համար: Անկապած որ Իրենք գիրենք անարգուած կը զգային, Իրենց շրջապատին ուղիւ, որ Իրենց վարձակալը այսպէս անպէտք մէկը ըլլայ, այսպէս անվայել ընթացք ու կեանք ունենայ...

- Դժոխքը տանի զի՛նքն ալ, մայրն ալ, - ըսի իւրովի եւ մտածեցի որ քանի մը օր եւս եւ անոնք կ'ազատին ինձմէ: Սա վերջին գործս անգամ մը որ լրանայ, ոչ Հէլլան եւ ոչ մայրը այլեւս ինձմով մտահոգուելու պէտք չեն ունենար:

Եւ իմ գործս ճամբան դտած էր հիմա: Նկարիչին յայտնութիւնները նոր իմաստով ու թափով մը օժտած էին զայն: Ծնորհիւ Պէրնարին, դարձեալ, կրցած էի պատմութեան տպաւորիչ նոր վերնագիր մը եւս դտնել: Պատմութեան պիտի կոչուէր «Անտարտ Եկար»: Կը մնար միայն քանի մը պղտիկ մանրամասնութիւն դտնել, քանի մը ճարտար թխածոյ ճարել, որպէսզի «Ակարս» իր շրջանակը գտնէր:

Նոյն Իրիկունն իսկ, քաղաքէին մէջ, գացի գտայ վերջին երեկոներու բոլոր բարեկամներս, ճիշդ այդ թանկարժէք պղտիկ մանրամասնութիւնները պատմութեան տպաւորելու համար:

Այդ Իրիկուն, երեքով նստեցանք մէկ սեղանի շուրջ, Աննան, նկարիչն ու ես: Անճէլիբան լուր դրկած էր որ հիւանդ էր եւ իր բացակայութիւնը շատ պէշ կը ճնշէր դժբախտ Պէրնարին վրայ, որ, Անճէլիբայի փոխան՝ կառչեցաւ արքային ու սկսաւ անոր հետ խօսակցիլ, միայն անոր հետ եւ ինչքան ժուղաբոյժն, կ'արժէր տեսնել: Կարելի չէր ըսել որ կը խմէր ան, այլ, աւելի ճիշդ, կ'աշխատէր

ինքզինք քանդել, կ'աշխատէր ընկղմել, ալքովի մէջ խեղդուել:

Այս Իրիկուն, ոչ մէկ յոյս Պէրնարին, ոչինչ կարելի է ակնկալել այդ կողմէն: Լաւ է զէպի Աննան դառնալ: Այս Իրիկուն միակ ազդէրս է Աննան, իմ միակ յոյսս, միակ ակնկալութիւնս, ընդունիմ կամ ոչ:

- Է՛, Աննա, - կ'ըսեմ ուրեմն Իրեն, նոր խմիչք մը ապսպրելով. - դուն է գո՛ւն իտէ՛ քիչ մը, դուն է գո՛ւն բան մը ըսի:

- Հանձնըով, - պատասխանեց անյայտադ Աննան, հրապուրիչ քեզու-թեամբ, - Ի՛նչ կը փափաքէիք սակայն, ինչ կ'ուզէիք որ ըսեմ:

- Պատմեցէք միշտ... ձեր կեանքը պատմեցէք, հետաքրքիր պէտք է ըլլայ:

- Պա՛հ, - գոչեց յանկարծ, սաստիկ զարմացած, - իմ կեանքս ըսիք... հետաքրքրակա՞ն... Այո՛, Թերեւս... բայց ի՛նչ շքանի կրնայ ծառայել հիմա, բայց ի՛նչ կ'ուզէիք իմ կեանքէս... զիս ունիք, ահաւասի՛կ, արդեօք այդ չի՛ բաւեր ձեզի...:

Եւ մէկ աչքը շարճո՛ր կերպով դո-ցելով՝

- Այդ ուրիշ, որ եթէ ձեզի պարզել պէտք ըլլար... ձեր ուզածը պաղտնիք-ներուս տեղեկանալ եթէ ըլլար... շատ գիւրին է ատիկա... լաւազոյնը սնուակս է, ելէք ու կը տեսնէք...

- Ինչքան պիտի ուզէի իրաւ, հրապուրիչ պէտք է ըլլայ, - ըսի, - բայց ինչդիքը այն է՝ որ պատմութեան մը կը դրեմ... պատմութեան համար էր... գիտէք, դրական...:

- Օ՛, գրակա՞ն, դրակա՞ն, - ընդ-միջեց Աննա հեղնական շեշտով ու նսեւարհամարհոտ, - ատիկա է ուրեմն... գրակա՞ն, բայց չըսէ՛ք առաջունէ... դո՛ւք ալ ուրեմն, դրակա՞ն, ճաթեղք բան է:

- Բայց ի՛նչ ունիք, ինչո՞ւ այդպէս կը հեղնէք, - գոչեցի ես քիչ մը սքըտ-նեղած, - Ի՛նչ կայ այդքան զարմանալի, արտասոց:

- Է՛, բարեկա՛մ, գիտցած եղիք, - յարեց Աննա, պաղ ու կտրուկ, - ես կին

մբն եմ, ես կին մըն եմ, ուրիշ ամէն
բանէ առաջ եւ ... դրական, ոչ դրա-
կան... Էրիկ մարդ մը պէտք է ինծի,
ուրիշ ոչ մէկ բան: Ու յետոյ, եթէ դո-
ծիդ չի դար առիկա...

- Բայց կեցէ՛ք, կեցէ՛ք, - փութացի
պնդել ես, - բարեկամ ենք ի վերջոյ, մի
թողուք զիս միմակ:

- Այո՞... կե... կեց... էք, կե...
կեցէ՛ք, - մուսաց Պէրնար, կարծես ին-
ծի արձագանդ մը տալու համար ու յե-
տոյ վերստին ընկրմեցաւ: Իր գաւաթին
խաւարներուն մէջ:

Եւ կարծես թէ Պէրնարի այս մուր-
տոցն էր, որ Աննային բարկութիւնը կըր-
ցաւ մեղմել:

- Օ՛հ, այս խեղճը, - սկսաւ մեղ-
քանալ Աննան, - պէտք չէ թողուլ որ
խմէ, բայց հիւանդ է արդէն ան...
- Եւ ըսել որ զարմանալի չեն մար-
դիկ, - շարունակեց Աննան կարծես ինքն
իրեն խօսելու համար, - ինչքան կը սիրեն
բարդացնել ամէն բան... Աշխարհ մը
բան կը թափեն ձեր առջեւ, մինչդեռ կը
բուէ միայն որ տղեղ չըլլան... Ու եթէ
քէլ մը դրամ ալ ունեցան, շատ սուկի
լաւ... Կան տակաւին... Բայց մենք այդ
ամէնքը զրտենք, մենք լաւ կը ճանչնանք
մարդիկը... Բայց դուք...

... - Բայց դուք, - վերսկսաւ Ան-
նան ցուցամտոր ինծի ուղղած, - դուք
ամէնէն զէշ տեսակն էք... Գրականու-
թի՛ւն... Նկարչութի՛ւն, չես գիտեր
տակաւին ինչ ապուշութիւն: Բայց բա-
րեկամ, խեղճ բարեկամ, դուք մէր կեան-
քը չէք ապրիր... պէտք է կեանքը ապ-
րիլ, դրամատունը կարելի չէ պահել
զայն... կը փճանայ, կը փախչի ան...
Ու մինչ Աննա կը խօսի, ես ինքզինքս
ուրախութեամբ ողողուած կը զգամ:
Լեզուն քակեց վերջապէս, իմ սահմանիս
մէջ մտաւ... շատ հեռու չէ որ սկսի
մտերիմ խոստովանութիւններ ընել:

Ճիշդ այս պահուս, մինչ Աննան խօ-
սիլ տալու հաճոյքը կը վայելի, անո-
րոջ, անյատակ բան մը կը սկսի նշմա-
րել, տեսակ մը սղոտոր նախազգացում,
որ բաներ մը կը դառնան, անմիջապէս

իմ շուրջս: Աննայի աչքերն են, արագ
կ'անդրադարձան, իր նայուածքն է, որ
մերթ վրաս կը թառի ու մերթ կ'երթայ
կը գամուի ինչոր տաղտկալի բանի մը
վրայ, ճիշդ իմ ետիս: Բան մը՝ որ զիս
անհանգիստ կ'ընէ եւ կը ստիպէ որ վեր-
ջապէս ետիս դառնամ:

Կը դառնամ ետ ու կը տեսնեմ...
բայց չէլկան է... չէլկան կը տեսնեմ:
Ու տեղէս վեր կը ցատկեմ:

- Բայց չէլկա, - կ'ըսեմ իրեն բո-
լորովին այլայլած, - հոս ի՞նչ պործ ու-
նիք, ի՞նչ կ'ընէք դուք այստեղ...

- Ոչինչ, - կ'ըսէ ան շատ պարզ ու
պազարիւն կերպով ու զինաթափող բնա-
կանութեամբ, - հոս եմ, պարզապէս...

Ոչ, շատ էր ասիկա, շատ էր այլեւս
ինծի համար, կարելի չէր հանդուրժել:
Ձէի կրնար հաշտուիլ չէլկան այս վայ-
րերու մէջ տեսելու մաքրին հետ: «Պլանչ
Նէմը» կը յիշեցնէր, աւազակներու որջի
մը մէջ ինկած:

- Եկէ՛ք, - գոչեցի գրեթէ անզգա-
լարար եւ իր թեւէն բռնելով, - չէք կըր-
նար հոս մնալ, եկէ՛ք երթանք, երթանք
դուրս:

Հնազանդօրէն հետեւեցաւ ինծի եւ
դացինք նստեցանք քիչ մը հեռուն, մեր
հանդիպած առաջին իսկ սրնարանին մէջ:

- Ուրեմն, ճէլկա, - ըսի իրեն ան-
միջապէս որ տեղաւորուեցանք, - պիտի
կրնա՞ս ըսել ինծի, թէ ինչո՞ւ միտմի-
նակ դուրս ելած ես այս դիչեր եւ այն
ալ տղո ու ժամունս:

- Բայց այսպէս... ըսի ձեզի... ի՞նչ
կայ որ... - ջանաց կեղծել միշտ չէլ-
կա, բայց այս անգամ ոչ շատ մեծ յա-
շտութեամբ:

Եւ լուրթենէ մը ետք ու մինչեւ ա-
կանջները կարճեցով:

- ... Բայց ձեզ տեսնելու համար
էր խոստովանեցաւ յանկարծ չէլկան, -
ձեզի... ձեզի խօսելու համար...:

- Այդքան կարեւոր բանե՞ր ունիք
ուրեմն, ինծի ըսելիք, - մտահոգուեցայ
յանկարծ, - ձեր մա՛յրը արդեօք... թէ
ոչ Քարլը...:

- Օ՛ր, այո՛: Օ՛ր, ո՛չ, - շփոթեցաւ
Հէլլան, - երբեք տունը չէք դանուիր,
մտածեցի... մտածեցի, ուրեմն...:

Բայց ինքզինք որքան անյարժար
գրութեան մէջ կը գրայ, Աստուած իմ,
որքան երկոտ կ'երևի: Աչքերը գետնին
յառած՝ կը մնան ու անդադար եղունգ-
ներով կը խաղայ:

- Բայց խօսեցէք, - կ'ըսեմ իրեն, -
մտիկ կ'ընեմ ձեզ, ըսէք ամէն բան,
մտածեցէք իմ վրաս:

- Լաւ... ահաւորիկ, - կ'որոշէ խօ-
սիլ վերջապէս Հէլլան, - գիտէ՞ք որ...
գիտէ՞ք որ, կարգացած եմ... կարգա-
ցած եմ... ձեր գրածը:

- Ի՞մ գրածն, ի՞մ գրածն, ի՞նչ, ի՞մ
գրածն, ի՞նչ գրած եմ ես, - պոռացի
այլայլած, - ի՞նչ կարգացիք իմ մա-
սիս...:

- Բայց ձեր խոստովանութիւնները,
ըսաւ Հէլլա հանդարտօրէն, - սեղանին
մըջ էին... եւ ուրեմն...:

- Խոստովանութիւն, խոստովանու-
թիւն, - պայթեցոյ բարկութենէս, -
բայց վաս բան է ձեր ըրածը, աղուոր
բան չէ ատիկա... եւ ի՞նչ իրաւունքով,
ինչո՞րե՛մ, ո՞վ արտօնեց ձեզի, չէ՞ որ
առաջին իսկ օրէն պատուիրած էի որ
թուղթերու չղպնաք:

- Ինչո՞ւ կը բարկանաք սակայն, -
փորձեց հանդարտեցնել զիս Հէլլան, -
ասոր մէջ ի՞նչ կայ... ուրախ եղէք որ
կարդացի, չար ձեզի... ինչո՞ւ նախա-
պէս չուզեցիք ըսել ինծի:

- Բայց լսեցէք... Հէլլամ, - սկսայ
կակազել ամբողջովին շուարած, - ձգե-
ցէք բացատրեմ... բայց ի՞նչ կը կար-
ծէք...:

Ո՞վ ինչ կրցած է բացատրել կնոջ մը
սակայն, մանաւանդ երբ այս մէկը ամէն
ինչ ինքզինքին բացատրած է ու վերջա-
պէս, ինչպէս Հէլլան: Որոշած է այս
երկրուն համոզել զիս Հէլլան որ Քարլ
ոչինչ չի ներկայացներ իրեն համար, ո-
չինչ՝ եթէ ոչ հասարակ ու պարզ բարե-
կամ մը միայն, եւ որ...:

- Կը հասկնաք, չէ՞, - կ'ուզէ ստու-
գել ամէն վայրկեան, - հասկցա՞ք չի-

մա... սխալուած էք Քարլի վերաբեր-
մամբ, ի դուր գուց ձեզ շարշարած էք...
Այո՞, հասկցա՞ք...:

Ահաւորիկ որ ստակաւն ձեռքս կ'սո-
նէ իր ձեռքերուն մէջ, գորովի սրտա-
բուխ ժեսթով մը եւ ձայնին տալով թո-
վիչ քաղցրութիւն մը:

- Բայց վերջապէս այլեւս, - կ'ուզէ
վստահեցնել զիս Հէլլա վաղաքակցան
մտերմութեամբ, - ամէն ինչ կարդի կը
մանէ հիմա, կը տեսնէք շուտով... Գո՞հ
էք հիմա... խոստացէք միայն... խոս-
տացէ՞ք՝ որ այլեւս չէք շարշարեք գուց
ձեզ, որ այլեւս չէք խմեր... կը խոս-
տանաք, չէ՞:

Բայց ի՞նչ կացութիւն է ասիկա, Տէր
Աստուած, այս ի՞նչ տեսակ փորձանքի
մէջ եկած ինկած էի ես: Ի՞նչ ըսել հիմա
այս մանկամարդ աղջկան, որ գրածս
կարգացած է ու ինքն իրեն մտքեր հե-
ւած: Ո՞ր գոտիքէն բառեր երթալ գրու-
նել հիմա որ չըլլայ թէ արտնդութիւն
սան իրեն, վերաւորեն զինք:

- Հէլլա... Հէլլա... - փորձե-
ցի խօսիլ զանի մը անկամ, բայց չկրցայ
շարունակել:

Այո, բայց ի՞նչ սխալունք, Աստ-
ուած իմ, ի՞նչ ահաւոր թիւրիմացութիւն:
Ներքեյի՞ է միթէ, որ մարդ այսքան կոյր
ըլլայ, այսքան պատրանք թոյլ տայ
ինքնիրեն: Եւ այս Հէլլան, մանաւանդ,
այնքան ուսեալ, պատրաստուած... Ինչ-
պէս կրնայ գրական արարք մը իրողու-
թեան հետ շփոթել: Ինչպէս կ'ըլլայ որ
վերացականը իրականէն չկարենայ զա-
նազանել:

Բայց չըլլայ թէ ես ըլլամ... որ
պատմուածքս կրնայ ձերբազատուած չըլ-
լալ իրականութեան պարտադրանքնե-
րէն: Որ՞ առաջին այդ գործն՝ «գրագե-
տի մը խոստովանութիւնները» հակա-
ռակ շունդալից իր վերնագրին, ոչ միայն
հետո մնացած ըլլայ գրական նուազա-
գոյն իսկ արժէքէ, այլ նաեւ ընկզմած
ըլլայ սովորական տեղեկագրի մը ճա-
պարտութեանց մէջ:

Մինչ այս լեզի մտքերը կը կրծստեն

ուղեղս, Հէլկա իր դորովայնց ու անհատնում նոյն յանկերը կը մատուցանէ ինծի :

- Խոստացաք, չէ՞, - կը կրկնէր միշտ անսահման քնքշութեամբ, - այլեւս պիտի չչարչարէք դուք ձեզ, այլիւս պիտի... չիմէք... խոստացուած է, չէ՞... Չարքաբործ ձեզի... :

- Մտիկ ըրէ՛ք, Հէլկա, - գոչեցի այլևս հարցը միանգամ ընդմիջում փակելու մտադրութեամբ, - մտիկ ըրէ՛ք, Հէլկա, սխալմունքի մէջ էք դուք, սխալած էք շարաշար... Ես չեմ... Այդ մարդը ես չեմ, խոստովանութիւններ չեն որ կարդացած էք... Այդ ամբողջը դրուած է, միայն դրուած է... :

- Ինչպէ՞ս թէ դրուած է, - յանկարծ ինքզինք վերադարձած դաս շէշկա, - Ի՞նչ դրուած է... բայց ամէնքս կանգ ա՛յնտեղ : Մայրս կայ, ես կամ, կայ նաեւ Քարլ... Եւ այդ վարձակալն ալ... Երեսուսորդ այդ դրողը... Բայց ինչո՞ւ ամ չնայ... ամ յնայու պէտք չկայ այդ դրուածներուն համար :

- Բայց հասկցէ՛ք զիս, Հէլկա՛, փորձեցէ՛ք հասկնալ, - պարտք գրացի բացատրել, - այդ խոստովանութիւնները, որ կարդացած էք կ'ըսէք, պատմութեամբ մըն է միայն, երեւակայութիւն, վերացական բաներ միայն... Ինչպէ՞ս կ'ըլլայ որ չէք կրնար հասկնալ... Այդ աղջիկը դուք չէք, ոչ ալ ես եմ այդ տղան : ոչ Քարլը կայ հոն եւ ոչ ալ ձեր մայրը : Այդ ամէնքը վերացական, չիմուն անձեր են միայն... Կրցա՞ք ըմբռնել չիմա... :

Իմ այս խօսքերուս վրայ, Հէլկա սահմակած մնաց : Անջատուեցաւ մէկէն ինձմէ : Դէմն ցցուեցաւ յանկարծ վայրի կատու մը, ահռելի նայուածքով մը, նայուածք մը՝ որ կարծես զարչիւի առարկայ մը կը տեսնէր յանկարծ :

- Շինծո՞ւ... Շինծո՞ւ, - պոսայ յանկարծ կատարած, - ստած էք, ըսել կ'ուզէք, սուս-սուս բաներ պատմած էք... :

Եւ կարճ լուսթիւնէ մը ետք...

- Բայց չառ զէ՛շ է ձեր ըրածը, - վերսկսաւ ան վշտացած, - ձեր ըրածը

միայն չարիք կը պատճառէ, ինչո՞ւ դժբեկ այդպէս բաներ... այդ տեսակ դժբութիւնները ցաւ կու տան միայն... :

- Բայց ինչո՞ւ, Հէլկա՛, ինչո՞ւ չէք ուղեր հասկնալ, - ընդմիջեցի ես սըրտով մը, - ինչպէ՞ս պէտք է ձեզի բացատրել... Երբ մէկը կը գրէ... բայց չարիք մը հասցնելու համար չէք որ դժբեցի այդ ամէնը, իրաւ չեն արդէն, իրողութիւնը չեն ներկայացներ, ըսի որ չէն ես ձեզի, մտքեր են միայն... Ես չկամ այնտեղ, բացակայ եմ ես այդ տեղ, բոլորովին բացակայ... :

- Բացակայ... Բացակայ, - զայրացաւ յանկարծ Հէլկա, - բայց միևնրը ուրեմն, ինչո՞ւ կ'ուզէք խոտնել զանոնք ձեր կեղտոտ դործերուն մէջ, Ի՞նչ իրաւունքով... Գրեցէ՛ք միմիայն ձեր մասին, զրեցէ՛ք որ չկաք... զրեցէ՛ք... զրեցէ՛ք բացակայ... :

Հէլկան այս վերջին խօսքերը նետեց իմ վրաս անասելի ատելութեամբ : Ինք այնքան աղիւ ու այնքան բարեհաճ, տակաւին զիչ առաջ, ինչպէս այդպէս քայտեցաւ յանկարծ ու դուրս նետուեցաւ՝ նետելով վրաս նայուածքներուն ամէնէն թշնամականը, ամէնէն կծուն :

Յաջորդ ամբողջ շաբաթը չկրցայ երբեք տեսնել Հէլկան : Կը խորչէր ինձմէ, խոյս կու առչ անկասկած : Այս վայրերէն անհետացած էր կարծես, անապատի վերածուած : Գ'անտեսէր զիս բոլորովին, կը մերժէր ինքզինք ինծի ցոյց տալ, չէր զիջէր իր գոյութեան նուազապէս հետքն իսկ նշմարել տալ ինծի :

Բայց Ի՞նչ ըրած էի իրեն, զինք այսպէս իմ դէմն ցցելու համար, Ի՞նչ կըրցած էի ըսել արժանանայու համար այս ահաւոր անտարբերութեան... :

Եւ յետոյ... չիմա, Ի՞նչ չէի տար չիմա զինք անդամ մը տեսնելու համար, անդամ մը միայն, ըսելու համար իրեն չիմա... :

Շաբաթ մը անցաւ, բայց Հէլկայէն ոչ իսկ մէկ հետք : Բանտարկեցի ինքզինքս սուսը, դուրս ելայ, ներս մտայ, չուրջս աղմուկ հանեցի, սատանայական հնարքներ փորձեցի, առանց որ մէկը

իմ... անիմատ գոյութեան անդրա-
դառնար...

Փորձեցի դրել, երկրորդ պատմը-
ւածքս վերջացնել դէժ, բայց հոն ալ
մախողեցայ: Եւրջն ամբողջ կը ճարճա-
տէր, բոլորը ինձէ կը փախչէին, կը լը-
քէր զիս ամէն բան:

Բարեբախտաբար, ճիշդ այդ միջո-
ցին, հովերը դարձեալ ոտքի կանգնեցան,
մէջն դարձեալ առազաստներ ուռեցան:
Միշտ նոյն խոփքներն ու խլրտածները,
նոյն հին փոթորիկները, որոնք զիս շոքս
ծովերուն կը նետէին անդազար, յան-
կարծ դարձեալ յայտնուեցան: Ժամա-
նակ էր որ այնու խարխախներս քաշէի,
պէտք էր արդէն մեկնէի այնքան կանուխ
որբան կրնայի:

Ետքաթ իրիկուն մըն էր: Վաղեցի
կայարան, Կիրակի առաւօտեան առաջին
խիկ արագընթաց շոգեկառքին մէջ տեղ
մը ապահովելու համար, որ կը մեկնէր
արշալոյսը հազիւ ծագած:

Վերադարձայ տուն վաղիցներս
պատրաստելու ու նաեւ Փրօ Փէրթրու-
թին մեկնումս յայտնելու համար:

Պատիկ մը իսկ չդարձացաւ պատ-
ւական կինը, նուազազոյն արհեստանք մը
իսկ չմտանց: Կարելի էր նոյնիսկ կար-
ծել որ ներքնապէս կ'ուրախանար որ
կը մեկնիմ այսպէս: Միայն թէ՛ զիչ մը
չփոթած կ'երեւար առտուան վաղ ժա-
մուն համար:

- Պիտի ուզէինք ճամբու դնել ձեզ...
բարի ճանապարհ մաղթեցի:

Ոչ ոք ինձի ընկերացաւ. ոչ ոք ինձի
բարի ճանապարհ մաղթեց, երբ տունը
թողուցի Կիրակիի այդ կիսամութ ա-
ռաւօտին մէջ: Լուսթիւն էր ամէն կողմ
ու խաղաղութիւն, համատարած խաղա-
ղութիւն ու լուսթիւն մը՝ ճշող, հա-
յածող, Կիրակիի այդ տրտում առաւօ-
տին մէջ: Ոչ ոք իմ մեկնումս մտա-
հողում էր: Լաւ էր այսպէս, հաւա-
նաբար:

Մեկնումի ժամէն շատ առաջ հասայ
կայարան եւ ուղղուեցայ շիտակ դէպի...
պար: Երբեք այսքան չէի կըցած հա-
ւատք ընծայել ըմպելիին բարեկամու-

թեան: Երբեք պիտի չկրնայի հաւատալ
որ կոնեաքի այսքան պահանջը զգայ
մարդ: Այս քանի մը բաներն են արդէն,
ամէնէն գտուարը, մեկնողին համար:
Երբ ոչ մութ է, ոչ ալ լոյս, երբ տակա-
ւին չես մեկնած, երբ տակուին տեղ չես
հասած, երբ չես դիտեր ուր ես գնու,
երբ ինքզինքդ ոչ մէկ տեղ կը զգաս...:

Եւրջն ամբողջ այդ տեսակ մը
խուլ ազմուկը, այդ տեսակ մը բղղունը,
որ կայարան մը կը յատկանչէ: Երգե-
կառքեր՝ որոնք կը հասնին նուաճողի,
յաղթականի արտոբանջով: Երգեկառ-
քեր՝ որոնք մեկնումի կը պատրաստուին:
Եւ ամբոյն մը, որ կը խլրտի, որ կը
խուժէ զիչ մը ամէն կողմ: Մարդկային
ալիք մը, ահաւասիկ սա անկիւնին մէջ,
ուրիշ այլեք մը, որ կը հալի այդ միւս
քարափին վրայ: Զոյգ մը ահա, որ խ-
բարձէ կը բաժնուին: Մերուկ մարդ մը,
որ անդազար թաշկինակը կը ճօճէ: Կա-
յարանն է, կայարանն է անտարակոյս
ասիկա: Հոն՝ ուր կը ծնին պատմու-
թիւններուն ամէնէն վեղեցիկները, հոն՝
ուր կը վերջանան նաեւ ամէնէն թովիչ-
ներն ու ամէնէն տխուրները բոլոր պատ-
մութիւններուն:

Ինքզինքս իմ իրաւ միջավայրիս մէջ
պտայ, երբ իմ տեղս զբաւեցի կառա-
խումբին մէջ:

Ահաւասիկ որ կը հասնի երիտա-
սարդներու խումբ մը, իրարանցումով
ու աղմուկով: Երիտասարդ աղաք ու
աղջիկներ են, որոնք իրենց նորապսակ
երկու բարեկամները ճամբու կը դնեն:
Գիշերը ամբողջ հարանիք ըրած են, ի-
րենց յոգնած դէմքերը զիրենք կը մատ-
նեն եւ հիմա, նորապսակ իրենց երկու
ընկերները շոգեկառքին մէջ պաշտօնա-
պէս տեղաւորելէ ետք, խմբուած են վա-
կունն առջեւ ու կը պոռան, կը կանչեն:
Կ'երդեն անդազար ու չիկնեցնող կատակ-
ներ կը տեղացնեն խեղճ ամուսիններուն
վրայ:

Եւ արդէն մեկնումի ազդանանն է,
շոգեկառքը սկսած է դանդաղորէն շար-
ժիլ արդէն, մինչ երիտասարդ տղաքն ու
աղջիկները յանկարծ կը հնչեցնեն ՎՄՆԿ-

Ուսմի երգը, անդադրում յուզումով :
- Յտեսութիւն, - կը կրկնեն ամէն-
քով, - ցտեսութիւն :

Եւ մէջերին աղջիկներ կան, ո-
րոնց աչքերուն մէջ թացութիւն կայ,
մինչ իրենք կ'երգեն :

Եւ յետոյ, յանկարծ... բայց ար-
դեօք կ'երագե՞մ, ճիշդ ի՞նքն է արդեօք
... Իրաւ Հէլկան է, որ կը նշմարեմ
աշխակ, Հէլկան՝ որ վազելով կու գայ,
որ կը ճեղքէ երգողներուն շարքերը,
կը վազէ մոլեգնաբար :

Ձեռք կ'ընեմ իրեն : Կը պատասխա-
նէ ինծի երկու ձեռքերով եւ վազելով...
վազելով :

Այո, բայց ինչ օգուտ հիմա, շոգե-
կատքը իր թափը առած է աղէն եւ հե-
ռու ենք, շատ հեռու արդէն... :

Հէլկան կանգ առաւ, շնչասպառ,
ապշտ, եւ ամէն ինչ մատախուղի մէջ
թաղուեցաւ, ամէն ինչ հալիցաւ, կոր-
սըւեցաւ հեռուններուն մէջ :

Շատ սղոտը չէ, ընդունեցէ՛ք որ
շոգեկատք մը առնէ տանի ձեզ այսպէս .
հաճելի չէ երբեք որ մեկնող ըլլաք, երբ
տակաւին մնալ պէտք էր... :

Բայց հիմա, ի՞նչ օղուտ : Ահաւա-
սիկ որ մեկնած եմ դարձեալ, մեկնած
վերջնականապէս : Եւ այս անգամ ամէ-
նէն վատը այն էր՝ որ կը մեկնէի... որ
կը մեկնէի պատմուածք մը հաղիւ կէ-
սին հասցուցած եւ ուրիշ հատ մը, որ
կը դժուարանայի աւարտած համարել :

Շատ նախնական, շատ սհատ պէտք
էր հղած ըլլար այդ առաջին պատմու-
ածքս, խեղճ Հէլկան սխալներու մատ-
նելու համար : Անհրաժեշտ էր, որ վե-
րջտին գայն ձեռքս առնէի, երկրորդ
պատմուածքս վերջացնել փորձելէ ա-
ռաջ, անհրաժեշտ էր, որ լրջօրէն վերա-
տեսութեան ենթարկէի գայն, որբազրէի,
նոր կատայով օժտելի գայն, եթէ պէտք
էր արուեստ տայի քիչ մը իրեն, ար-
ւեստի մակարդակին հասցնէի :

Կտախումբը իր ընթացքը միշտ ա-
ւելի արագացուց : Տակաւ առ տակաւ
դժոխային ընթացք մը գտաւ, ինքզինք

յուսահատօրէն տարածութեանց անհու-
նին մէջ նետելու համար :

Եւ այս պահուտ, տրտունջ մը կար-
ծես, անձկութեան ճիւղ մը լսուիլ սկսաւ
շոգեկատքին մէջ : Օգնութեան յուսա-
հատ կանչ մը կարծես, որ ստիպեց սկսանջ
տամ, սթափիմ :

- Մարի-ի-ա : Մարի-ի-ա, - կը
պտտար մէկը անդադար կարծես զնաց-
քին կշտոյթին համընթաց : - Մարի-ի-
ա-ա, Մարի-ի-ա, - կը ճշար անընդհատ,
աղեխաղ ձայնով :

Ահա՛, գտայ, - ըսի ես ինծի բոլո-
րովին թնողաբար, - ահաւասիկ իմ
մարդս, ահաւասիկ իմ փնտռած Քիլիս :
Ահաւասիկ պատմուածքի նոր նիւթ մը :
Ով դիտէ ի՞նչ ցաւ, ի՞նչ ողբերգութիւն
իրեն պրոսա կու տան այսպէս : Ի՞նչ գե-
ղեցիկ նիւթ, ի՞նչ ահաւոր պատմուածք
պիտի կրնամ կորզել իրմէ... եթէ միայն
կարենայի մօտենալ :

- Մարի-ի-ա... Մարի-ի-ա-ա, - կը
լսուէր անդադար աւելի ու աւելի կատա-
ղաբար :

Երիտասարդ տղայ մըն էր, ջողի
Ֆայիմին մէջը, շուշացայ ստուգել ու
մօտենալ նսեւ իրեն, վարպետ ռազմա-
վարութիւններով :

Ձեռքին գինիի շիշ մը բռնած էր,
որմէ ու՛պ-ու՛մպ կը կլլէր անմիջապէս
որ պտույթ դադրեցնէր : Գացի նստայ
ջովը : Սկսայ իրեն սիկաբէթ հրամցնել,
յետոյ ըմպել իրեն հեռ, նոյն շիշէն :

Կտախումբը իր ընթացքը միշտ ա-
ւելի արագացուց : Կայարանն ու Հէլկան
հեռուններուն մէջ կորսուեցան : Եւ ան-
գամ մը որ համոզումս գոյացուցի, որ
իմ նոր գիւտիս վտահաւթիւնը շահած
եմ արդէն, սկսայ մտերմօրէն խօսիլ
հետը :

- Պատմէ՛, ընկեր, պատմէ՛, - ըսի
բարեկամաբար, - խօսէ քիչ մը, ըսէ
ինծի ինչ որ ունիս, գոնէ կը թեթեւսո
քիչ մը... :

Ճ. Ա.

(Շար. 3 եւ վերջ)

ԱՐԱ ԱՐԾՐՈՒՆԻ

Ա.ԿԱՏԻՐԻ ԱՆԷԾՔԸ

Մարտիկոյ նաւահանգիստը:
Ոճողո՛ւմ, ազժո՛ւկ...: Բաժանումի
ու հանդիպման մթնոլորտ: Արցունք ու
ժպիտ:

Մարդկային այդ ծովուն մէջ՝ երկ-
տասարդ ու խարտեաչ կին մը, իր ինը
տարեկան ազնաւիկն հետ: Կինը հետա-
քրքրութեամբ կը դիտէ ճամբորդները:
Մէր նայուածքները կը հանդիպին իրա-
րու, պահ մը կը դանդաղին, ու՝ կեղծ
անտարբերութեամբ՝ կը փախչին իրար-
մէջ:

Մաքսատան սրահին մէջ, առանձնու-
թիւնը շուտով մեզ կը ժտեցնէ իրարու:

- Ուրեմն պիտի ճամբորդենք միա-
սին, - կ'ըսեմ:

Կը ժպտի:

Գեղեցիկ է: Քարտեաչ մազերը ին-
կած են ուսերուն: Կապոյտ աչքերուն
խորքը արեւելեան տաք արեւին շողերը
կը տեսնեմ:

- Ծրանսուհի է՞ք, - կը հարցնեմ
քաջաւերուած իր ժպիտէն:

- Ո՛չ, մարտգուհի:

Կը նշմարէ զարմանքս ու կ'ակեցնէ.

- Այո՛, մայրս Փրանսուհի էր:

Արեւելքի ու արեւմուտքի համայն-
ները միաժող դրոշմուած են դէմքին
վրայ:

••

Նաւը կը նետուի դէպի բաց ջուրե-
րը՝

Անհողութիւն մը կ'ստատոյէ սրտիս
տակ: Ահա, փոքրացաւ ցամաքը, մե-
րսնուեցաւ կէտի մը, ու մարեցաւ հո-
րիզոնին վրայ:

Կը դառնամ ետ ու կը դիտեմ նաւը,
որուն վրայ մի քանի օր պիտի ծուլա-
նամ:

Հոն է մարտգուհին՝ կանչող ժպիտը
չրթներուն:

Կը մօտենամ:

Համարձակ է, անկեղծ՝ իր արտա-
յայտութիւններուն մէջ: Շուտով կը մը-
տերմանանք:

Հետաքրքիր է: Պատասխանելով իր
հարցումներուն, կը յայտնեմ, թէ կը
մերազառնամ տուն, կարօտցած եմ
տունս, պարագաներուս:

Կը նայի աչքներուն.

- Բուխերիկ մը ունիք, չէ՞, - կը
Հարցնէ:

- Ինչո՞ւ:

- Միշտ երազած եմ բուխերիկով
տուն մը, ուր կըսկը՝ երջանիկ երգ մը
իբր չըթնեցուն՝ տաքութիւն կը բայխէ:
Ըսէ՛, այդպէս է, չէ՞, քու տունդ:

- Իմ տունս...:

Ձեռ շարունակեր: Կը դարձնէ գլու-
խը, կը դիտէ մանիշակազոյն Հորիզո-
նը, ու կը փսփսայ:

- Վարդազոյն է կեանքը: այդպէս
կ'ըսեն կարգ մը մարդիկ: Տեսա՞ր, քիչ
առաջ վարդազոյն էր նաև Հորիզոնը,
իսկ Հիմա մանիշակազոյն, մոայլ: Ու
տակաւին պիտի շմայ այդպէս, պիտի
փոխուի...:

Նաև կողերէն փախչող ալիքներու
երգին բառերը աստիճանաբար հասկնա-
լի կը դառնան ինծի: Նաև կը սուրայ:
Միամտաբար կը Հեռանայ Հորիզոնէն,
ու թոյլ կու տայ որ Հին գոյները ծած-
կուին նոր գոյներու սուսնով:



Ընթրիքէն ետք՝ սպասեցի կամըջա-
կին վրայ: Մարտըունէին չեկաւ: Փոքրի-
կին ձեռքէն բռնած՝ անցաւ Հեռուէն:
Նշմարեց զիս, ժպտեցաւ ու մտաւ առա-
ջին կարգի բաժանմունքէն ներս:



Յաջորդ օր շտեմայ զինք:
Երեկոյեան, միտքս յանձնած Նաև
կողերէն փախչող ալիքներուն, դէմքս
տունած զով Հովին, կը դիտէի Հորիզոնին
գոյներու պարտութիւններն ու յաղթա-
նակները...: Կը մտածէի՝ թէ շուտով
ոտքս պիտի դնէի մեզի Հարազատ Հողին
վրայ, պիտի նետուէի առօրեայ պայքո-
րին մէջ, ու մոռնայի խորհուրդը Հորի-
զոնի գոյներուն...:

- Ուրեմն, երջանիկ բոյն մը կա՞-

մած ես, - կ'ըսէ մարտըունէին ձայնը
մտէս:

Կը ցնցուիմ: Մօտս է ան: Ուսը կը
ձօնեցնէ ուսիս:

- Կէս ժամ է Հեռուէն կը Հետեւիմ
քեզի: Ինչո՞ւ այդպէս երկար կը դիտես
Հորիզոնը:

- Կը դիտեմ գոյները:

Խնդաց: Խնդաց...: Բայց, մարե-
ցաւ խնդուքը՝ տօնահանդէսի մը լուսա-
ւորութեան արուեստական բոցերուն նը-
ման:

Դիտեց Հորիզոնը: Նայեցաւ ալիքնե-
րուն, ու նայուածքը մնաց Հոն:

Ես դիտեմ, լուս դիտեմ, թէ ի՞նչ
թախիծ ու տենչանք կ'արտայայտեն այդ
մեռնող ու վերածնող փրփուրները: Կը
զգամ՝ թէ երջանիկ չէ այդ փոքրիկ կե-
նը:

- Լաւ չէ դիտել ալիքները, - կ'ը-
սեմ, - անոնք կը քրքրեն Հողիններուն
խորքը ու միայն տիրութիւն կ'արթնցը-
նեն մեր մէջ:

Կը դարձնէ նայուածքը ինծի ու իբր
ծով ալքերուն մէջ տիրութեան անցեալ մը կը
տեսնեմ:



Ընթրիքէն ետք մարտըունէին մտաւ
ամերիկացի պարոնի մը խցիկը, ու լոյ-
սերը մարեցան...:



Նստած փոքրիկ սեղանի մը ժող, կը
դիտեմ Նաև գրասարահին մէջ Հաւաք-
ած մարդիկը: Զուարթ են բոլորն ալ:
Արձակուրդ է: Կր ծանօթանան իրարու,
կը մտերմանան, խոսքեր կը կազմեն՝
տարբեր եւ բժրունքներու մօտեցումով:
Ժամ մը ետք եկաւ մարտըունէին:
Նստաւ մօտս: Նայեցաւ թուղթերուն՝
իրեն անծանօթ այդ տառերուն՝ ժպտե-
ցաւ ու փսփսաց:

- Ինչդի՞նքդ կը խարես այս թուղ-

թերովը, ու կը զրկուիս կեանքի ատառ-
թիւններէն: Գոցէ՛ տեսարակդ: Յմէ՛ գա-
րեջուրդ: Ելլինք դուրս այս աղմկոտ
վայրէն:

Չընդդիմացայ:

Լիալուսին էր: Ատողներն ու հովը կը
զրգուէին մեր հողիները: Զարմանալի
փոթորիկ մը կար ներսս: Այդ փոթորիկ
կինը պահ մը տռաջ, խցիկէ մը մթու-
թեան մէջ, առանձնացած էր երիտասար-
դի մը հետ: Իսկ հիմա, կամրջակի լուս-
թեանը մէջ կ'ուզէ հետս ըլլալ:

Յանկարծ խզեց լուսթիւնը.

- Քեզի պիտի պատմեմ անցեալս՝
երջանիկ ու տխուր հանդրուանները կեան-
քիս: Կ'ուզե՞ս...:

Չպատասխանեցի:

- Տե՛ս, միացած ենք իրարու ծովուն
ու աստեղազարդ երկնքին տակ: Տարբեր
երկրներէ, տարբեր միջավայրերէ իրա-
րու մօտ եկած անձեր ենք: Տարին զանի
մը անգամ կը հանդիպեմ զեզի նման
զարմանալի անձերու, որոնք կարծես
կեանքի շուտանցէն կը ջարեն ու կը
դիտեն անցորդները: Տկարութիւն մը ու-
նեցած եմ անոնց հանդէպ, բայց միշտ
փոխած եմ անոնցմէ: Միաները ամուրի
երիտասարդներ էին, ու դիտնալով հան-
դերձ անցեալս, կ'առաջարկէին կեանքեր-
նին կապել ինծի: Դուն ամուսնացած
մարդ ես ու թերեւս տարբեր ձեւով մօ-
տենաս ինծի:

- Պատմէ՛, - փոփոսցի:

Ու ան պատմեց.

- Երջանիկ մահկութիւն մը ունե-
ցայ: Ռենթ ու անհող պատանեկութիւն
մը: Տասնրեօթը տարեկանիտ ամուսնու-
ցայ անդիւստի դիւանազէտէ մը հետ:
Զաւակ չունեցանք, բայց երջանիկ էինք:

Ու ահա Ակատիբի երկրաշար-
ժին աղէտը ցնցեց Մարոքը: Մարոք-
եան կարծիք Պաշին անդամուհիներէն
էի: Վաղեցի Ակատիբ: Անուի էր աղէ-
տը... ո՛հ, ահաւի: Մարդիկ հապճե-
պով կը փոքէին վրասահները, անոնց
տակէն աղատելու համար վերաւոր հա-
րազատները: Տան մը փրատակներուն

տակէն հանեցին ութ մեռեալներ եւ ու-
շակորոյս երկու տարեկան աղջնակ մը:
Վաղեցի, զրկեցի այդ երեխան: Նախնա-
կան ինամքներէ ետք՝ փրկեցի իր կեան-
քը ու այլեւս չուզեցի ուրիշի յանձնել
այդ անմեղ էակը: Ատուած զաւակ մը
տուած էր ինծի: Հեռաձայնեցի ամուս-
նոյս, թէ զտած եմ որբ աղջնակ մը,
կ'ուզեմ որգեղբել գայն: Ան յայտնեց իր
համամտութիւնը: Նոր կեանքի մը հե-
ռանկարով երջանիկ՝ աղջնակիս հետ
միասին վերադարձայ քաղաքս՝ Քաղա-
պլանքս:

Լոնց: Միախոտ մը հրամցուցի:
Շրթունքի յղային պրկումներով անյազ-
րէն ծիեց դլանիկը: Չխօսեցանք: Մանր
էր լուսթիւնը, ու ինծի թուեցաւ, թէ
այիքները մեղմօրէն կը խնդային իր տա-
ռապանքներուն ու պայքարներուն վրայ:

- Օտարական մըն ես, ու կը զար-
մանամ, թէ ինչու մեր ծանօթութիւնէն
երկու օր ետք զեզի կը պատմեմ իմ
կեանքս, - ըսաւ տխուր ժպիտով:

- Այդպէս է նաեւ կեանքը - ըսի,
ծովն ու անծարձեր երկինքը կ'արա-
զացնեն մարդոց մտերմութիւնները:

Նայեցաւ աչքերուս ու շարունակեց.

- Ակատիբէն Քաղապլանքս երջա-
նիկ ճամբորդութիւն մը ունեցայ: Ռ՛հ,
Ատուած իմ, երջանիկ էի: Այլեւս ոչինչ
կը պահէր ինծի: Ռենթի պէս կը սիրէի
ամուսինս: Ամէն ինչ դեղեցիկ էր ինծի
համար: Բարի էին մարդիկ: Գեղեցիկ
էր բնութիւնը: Ու ինչե՛ր պիտի ընէի
այս փոքրիկ որբուկին համար՝ իմ ազ-
ջրկանս համար: Արդէն կը տեսնէի իր
ննջասենեակը՝ մաքուր ու կոկիկ, ու ին-
քը՝ խաղալիկներուն մէջտեղը՝ երջանիկ
ժպիտ մը շրթներուն: Հասայ տուն, ա-
մուսինս տակաւին չէր եկած: Տեղաւո-
րեցի փոքրիկը անկողնիս մէկ անկիւնը
ու անհամբեր սպասեցի ամուսնոյս...:
Բայց, սիրելի պարոն, ան չեկաւ... չե-
կաւ, որովհետեւ սրտի կաթուածի հե-
տեւանքով մահացած էր իր ինքնաշար-
ժին մէջ: Ան չեկաւ, եկաւ միայն սեւ
թօթը: Աներեւակայի էր, Ակատիբի

անէծքն էր զարկեր մեր տունը... Կա-
ղցի անխնայնակ, փոքրիկը կը ջնանար:
Ձէի դիտեր ի՞նչ ընէի այդ փոքրիկը, ան
էր բերած այդ դժբախտութիւնը մեզի:
Ջողաբ էի դարձած, լացի, խնդացի,
ճշացի, անիծեցի այն ժամը, երբ փրկե-
ցի այդ փոքրիկը: Ան Ակատիրի անէծքն
էր բերած մեր տունը:

Գարձեալ լռեց: Մանրացած էր շն-
չառութիւնը: Կը տառապէր մարտըն-
չին: Շարունակեց.

— Ամիսներ ամբողջ անորոշ զգա-
ցումներու մէջ ապրեցայ: Մերթ կ'ազգի
վերադարձնել աղջկանը կարծիք ինչին,
թշնամի մը կը տեսնէի անոր մէջ. պա-
տասխանատու մը՝ իմ երջանիկ կեանքիս
քայքայման: Բայց, ան կը ժպտէր ու իր
ժպիտով կը հանդարտեցնէր շիղերս: Ա-
օր մըն ալ՝ երբ անգոյն նայուածքով կը
դիտէի վիճէ՝ ան աղաչական, վախկոտ
նայուածքով նայեցաւ ինձի ու շնջաց-
«Մամի՛...»: Յնդուեցայ, վաղեցի մօ-
աբ, զրկեցի, լացի երեխայի մը նման...
Հասկցայ՝ թէ իմ բոլոր դժբախտութիւն-
ներէս ետք՝ աւելի եւս պէտք ունէի այդ
խօսքին՝ «Մամի՛...»: Ո՛հ, պէտք է
սպրեկի քանի մը համար, մէկուն հա-
մար: Ի՞նչ անպէտք ու անիմաստ պիտի
ըլլար կեանքս, առանց նպատակի, ա-
ռանց երկրորդ անձէ մը եկած տաքու-
թեան: Այսօր կեանքէս աւելի կը սիրեմ
այդ աղջիկը: Ո՛չ ոք կրնայ զայն խլել
ինձմէ, ան միակ երջանկութիւնս է...:

Կարծէք մէկէն մոռցաւ անցեալը:
Կազդուրուեցաւ: Պատմեց փոքրիկին
մասին: Իսկ ես, իր խօսքերուն մէջէն
տեսայ մենակեաց տնակի մը անկիւնը
բոցավառող բուխերիկ մը:

— Ո՛հ, չեա գիտեր, թէ որչափ կը
սիրեմ կեանքը, — բացազանչեց մարտ-
քուհին, — ամուսնոյս մահէն ետք՝ մըն-
խեցի մեր խնայողութիւնը: Մախցի
տունը: Ճամբորդացի երկրէ-երկիր, միշտ
հետս քաշքշուով աղջիկս: Ո՛հ, ճիշդ ան-
պէտք տախտակի կտորի մը պէս, նետ-
ած ծովուն բացերը, անդեկ, աննպա-
տակ: Հոգս չէ, կ'ապրիմ այսօրուայ հա-

մար: Կ'աշխատիմ առաւելագոյն չափով
օգտուել կեանքէն, արեւէն, ծովէն, հո-
վէն ու մարդոցմէ:

Յօ

Յաջորդ օր, դարձեալ հանդիպեցանք
կամրջակին վրայ:

— Կը սիրե՞ս մարդիկը, — հարցուցի:
— Շատ քիչ անգամ: Կուսեցիք ան-
շուշտ, թէ ինչպէս կ'ապրիմ ու կ'ապրե-
ցընեմ փոքրիկս: Չարութիւն ընելով
մարդոց, խաբելով, կեղծելով, ստե-
լով...:

Չպատասխանեցի:
Խնդաց: Գոռհիկ արտայայտութիւն
մը ստացաւ դէմքը.

— Այո՛, պարոն, հիմա մարմինս կը
ծախեմ ու՛ կ'ապրիմ:

Նայեցաւ աչքերուս:
— Երկու անձեր կ'ապրին մէջը, — ը-
սի, — մին՝ բարի, խելացի, իբրտես:
Իսկ միւսը...:

Բռնեց ձեռքս, սեղմեց.
— Կու գա՞...: Տասը հազար հին
Փրանք է միայն:

Մթնշաղ էր: Մովը դարձած էր մութ
կայսրոյ: Անամպ հորիզոնին վրայ, ա-
րեւի կարմիր երակներ կը մարէին յամ-
բընթաց: Կինը կը սեղմէր ձեռքս, այլեւ-
եւերը կը կանչէին...:

— Ի՞նչ է անունդ:
— Պատուիս: Բայց Պաթի կը կոչեն
դիս:

— Պաթի՛...:
Շոյեց ձեռքս:
— Ամշկոտ ես, — ըսաւ, — կը զար-
մանամ, յետոյ, տասը հազար Փրանքը
մեծ բան մը չէ, մէկ ժամ կը մնանք ա-
ռանձին...:

Չարմացած նայեցայ աչքերուն.
— Բայց, երէկ դէշեր ըսիր, թէ տար-
բեր եմ ես ու...:

Ձգեց ձեռքս.
— Ձեմ դիտեր, — շնջաց, — ես ալ
չեմ գիտեր, թէ ինչ է ուղածս:

Աղջնակը՝ Ամալ մտիկ կ'ընէր մեզ: Զարմանքով նկատեցի որ «ձօր» արկածախնդրութիւններուն ծանօթ էր ան: Ընդվզեցայ:

- Պաթի՛, ոճի՛ր կը դործես այս փոքրիկին հանդէպ:

- Լու՛է, - ճշաց յանկարծ, - իրաւունք չունիս անձնական կեանքիս խառնուելու:

- Այս մթնոլորտէն հեռու պահէ այս էակը, Պաթի՛, - ըսի կարեկցութեամբ: Ծանթաւարող ազնաբկ մը նեանց վրաս: Սեղմեց Ամալը կուրծքին եւ արագօրէն բաժնուեցաւ ինձմէ:

✽

Հնչեց ընթրիքի զանգը, ու ճամբորդները մտան ճաշօրրակ: Հետու էին մեք սեղանները իրարմէ: Բայց կը տեսնէինք զիրար: Լուս էր Պաթին: Իր խնդուքը չէր զարնուեր սրահին մերկ պատերուն: Երկար թարթիչները մեղմ խաղերով յանախորդներ չէին կանչեր այդ զիչեր: Աչքերը սեղանին, յանցաւոր մանուկի մը պէս կը ճաշէր:

✽

Ընթրիքէն ետք Պաթի տարաւ Ամալը քնացնելու: Ես նստուն կամրջակին վրայ սպասեցի: Գիտէի՝ թէ պիտի փքնարուէր զիս ու դռնէր:

Եկաւ: Նստաւ մօտս: Ժպտեցաւ: Հտնդարտած էր:

- Օ՛, կեանքը, - ըսաւ, - ո՛չ ոք ունիմ աշխարհի վրայ բացի Ամալէն: Ո՛հ, Աստուած իմ, եթէ գիտնաս, թէ ինչ դէշ բան է առանձնութիւնը...: Կը մսխմ, կը մսխմ կեանքի առանձնութեան մէջ, ոչ ոք կրնայ տաքցնել հօգիս, էութիւնս: Պահ մը մտածէ՛, եթէ յանկարծ կենայ նաւը հոս, Միջերկրականի այս անծանօթ կէտին վրայ, դուն այլեւս չգըտնես, շտեսնես սիրելիներդ ու դառնաս

ինծի նման առանձին, կորսուած, մտածէ՛ պահ մը:

Լուց: Թոյլ տուաւ որ մտնեմ առանձնութեան սարսափելի աշխարհէն ներս: Սարսուռ մը անցաւ երակներէս:

- Պաթի՛, նորէն պատմէ ինծի բուխերիկի կարօտը...:

Երկնքին վրայ ցանցառ ամպեր կային, առատներ՝ լուսին ճերմակութեանը վրան:

Զեռքը դրաւ ձեռքիս, շեշտակի նայեցաւ աչքերուս: Հարցուց.

- Ըսէ՛, եթէ ամուսնացած ըլլայիր, կեանքդ կը կապէի՞ր ինծի հետ:

- Պաթի՛... Տխուր ժպտեցաւ:

- Բայց...: Գաղտնիքով զոգի մը ունիս, բարութեամբ ու զոհողութեամբ կրնաս կրել Ակաաիբի անէծքը...:

Ժպտեցաւ: Երջանիկ էր:

- Արդեօք պիտի կրնամ փոխել կեանքս, - շնչաց մտածկոտ, - ու թերեւ օր մը զարմեալ դռնուի երիտասարդ մը...: դարձեալ բացվաւ բուխերիկ մը...:

Երկար խօսեցանք իր ծրարներնուն մասին: Որոշեց նաեւ այն քաղաքը, ուր կրնար հաստատուիլ ու սկսիլ իր նոր կեանքին:

Կէս դիչեր էր: Իջանք մեր սենեակները: Երկար միջանցքին մէջ՝ բաժնուելէ առաջ՝ պահ մը նայեցանք իրարու: Երկարեցի ձեռքս ու փոխացի.

- Բարի գիչեր, Պաթի՛...:

Երկու ձեռքերով բռնեց ամբողջ ինքնս: Ուզեց բան մը ըսել կարծէք: Բայց, դողացին շրթները ու աչքերուն մէջ փայլեցան արցունքները:

Փախաւ մօտէս:

✽

Յաջորդ առտու, ամառնային ճերմակ ու մշուշոտ հորիզոնին վրայ գծուեցաւ մեր քաղաքին համայնապատկերը: Միբոս

արոփեց : Կարծէք տարիներով բաժնուած
էի այս հողէն , սիրելիներէս :

Յաթին ու Ամալը մօտս էին :

- Ահա , կը հասնինք , Յաթի' : Շար-
թըլայ մը համար ձեզ կը տեղաւորեմ
ծանօթ բարեկամուհիի մը մօտ :

- Ու յետոյ կը մեկնիմ ղէպի նոր
կեանք , - փսփսաց Յաթի մտածկոտ :

Նաւը մօտեցաւ քաղաքին : Մոլու
մաքուր ջուրերուն վրայ տեսնուեցան
ազոտոտ նաֆթի արատները : Անդրադար-
ձայ , թէ շուտով պիտի ձգէինք երկինքին
ու ծովուն բաց կապոյտները եւ նետ-
ւէինք կեանքի հեւքին մէջ : Նաւը մօտե-
ցաւ քարափին , նետուեցան պարանները ,
լուսեղան շղթաներու ձայները ու կա-
մուրջ մը մեզ կապեց զամաքին հետ :

Մըխասարդ մը եկած էր դիմաւոր-
ելու Յաթին :

Պայուսակներու մօտ կը սպասէի
կարգիս , երբ Յաթի մօտեցաւ ինծի : Ա-
մառնային կանաչ գլխարկ մը սեղմած
տնհանդարտ ձեռքերուն մէջ , աչքերը
դիտարկին , ցած ձայնով ըսաւ .

- Պիտի մեկնիմ հետը : Լաւ տղայ է ,
թերեւս . . . :

Բարձրացուց աչքերը .

- Տուր հեռաձայնիդ թիւը : Վաղը

կը հեռաձայնեմ :

Տուի :

- Յտեսութիւն :

- Յտեսութիւն , Յաթի' . . . :

Մեկնեցաւ :

Հարցական աչքերով նայեցայ մեկ-
նող անորոշութեան ետեւէն :

Յաթին չհեռաձայնեց :

Տ

Անցած են ամիսներ :

Չմեռնային գիշեր : Դուքսը փոթո-
րեկը կը սուչէ : Յուրտը կը սպասնայ
մտնել ներս պատուհաններու անցքերէն :
Անձրեւի ձայնը տխուր երգի մը նման կը
թրթոռայ :

Կը նայիմ շուրջս , կը յիշեմ նաւը . . . :

Աչքերովս բուխերիկ մը կը դծեմ օրա-
հիս անկիւնը , ուր կրակը իր տաք մատ-
ներով դուրսի ցուրտը կը յիշեցնէ . . . :

Այդ գիշեր անձրեւի փսփուքը իջաւ
ճերմակ թուղթերու վրայ ու ետ տեսայ
հորիզոնի գոյներուն պարտութիւնն ու
յաղթանակը :

Ա . Ա .



ՆԵՐՍԷՍ ՎԻՐԱՊԵԱՆ

Ս Ր Ճ Ե Փ Թ Ո Ր Ո Ս

«Բազմեօյի անսղին անարան աստիճան քիչն մէջ ստորագրութիւն ունեցող հարձերն է վիրապեան, որ մեր ամեագրին մէջ լոյս ընծայած շուրջ տասը պատմաւեմներուն վրայ եօքուրջ անտիպներ գումարելով՝ «Նոյն Թաղի Ժարդէի» անունին տակ կը մերկայացնէ իր աստիճան հասարը:

Երէկ, իր աստիճան հասարով Արա Արծրունին կը մերկայանայ ընթերցողին, այսօր՝ վիրապեանը, երկուքն ալ «Բազմեօն», երկուքն ալ հոս սկսած ու կազմաւորուած հարքը:

Երկու ամիս: Երկու հար աման: Երկու հար գործ:

Մեր երեսասարգներուն մօտ յայտնուած այս մտք ետանգը ոգրումնի է ու իրախուսի:

«Նոյն Թաղի Ժարդէի» մեր ճաղաքի հայաշատ մէկ կնգրանին մէջ իրապէս տարած մարդիկ են, որոնք, ինչպէս կետագայ ճանջներուն միջոցով պիտի հաստատէ ընթերցողը, պակաս կենսունակ չեն թուրքի վրայ...

Բարձրոյն հետ խանութն ալ ծերոցաւ, պարպուելցաւ: Գործերը վէշ ընթացք մը առած էին: Յաճախորդի սպասելէն ձանձրացած՝ թաւուր կը խաղար: Գրացի խանութպանները, իրենք ալ անգործ, կարգի կը սպասէին Բարձրոյն հետ խաղալու համար: Հետաքրքրական կ'ըլլար խաղը մայթին վրայ:

Սակայն այսպէս չէր կրնար շարունակել կեանքը: Գործ պէտք էր: Խանութի ցուցափեղկին մէջ ճերմակ խաւքարթի մը վրայ «Մախաւ Ե» գրեց ու ինք դնաց ուրիշ տեղ գործ փնտռելու:

Օրը անգամ մը, Բարձրոյն խանութին անջեւ կ'երևէր պահ մը ու կը մեկնէր: Օր մըն ալ ծերունի մարդու մը հետ

եկաւ: Խանութպանութեամբ սկսաւ գովել խանութը, տեղը, դիրքը: Երկուքը միասին մտան ներս, քննեցին, հոտուտեցին, սակարկեցին, համաձայնեցան:

և

Հանգստեան կոչուած մարդ մըն էր մեր նոր դրացին: Ընկերութեան մը մօտ տարիներով աշխատած էր իբրև շարժափար եւ ուղած էր հանգստեան թողակը օդտագործել: Հայ ժարդ մըն էր վերջապէս: Պարապ կենայլ գործին չէր վար:

Կղակը դուրս ցցուած էր եւ խաչափողը մըլտ կը շարժէր, կարծես օգնութիւն կը Հայցէր: Կնճիռները խոշոր էին եւ յոնքերը կամարի պէս կլոր:

Երկրորդ օրը ծանօթացայ հետը: Անունը հարցուցի:

- Թորոս, - ըսաւ Հպարտութեամբ:

Թէեւ աչքերէն վար Թորոսի կը նըմանէր, բայց աչքերէն վեր ուղիակի Եղիա էր:

Լուս մարդ մըն էր: Ինչ որ կրնար բերաւ խանութը, նպարեղէնի տեսակներ, խմիչք, սիկարէթ, զանազան զովացուցիչներ, ու պատին վրայ, առաջին օրն իսկ գրեց՝ «Արագ սպասարկութիւն»:

Տարբեր տուած էր, հողիւ շարժելու կարողութիւն ունէր, ճիշդ այդ պատճառով մինչեւ վերջ Հանելուկ մնաց իր «Արագ սպասարկութիւն»ը:

Դրացիներէն մէկը երբմէն կ'ըսէր.

- Դրացի, փեփսի մը բեր:

Ստանարանէն հանուած փեփսին մինչեւ յաճախորդին յանձնէր արդէն կը տաքնար:

- Բարեւ, պարոն Թորոս:

Իր բարեւը ժպիտ մըն է, որ կը տարածուի մինչեւ ականջներուն ծայրերը:

Վիզ չունի: Գլուխը չեղակի դրուած է ուսին վրայ:

Անձրեւտ օրերը շատ չէր սիրեր ու իր շար բախտէն, այդ տարի շատ անձրեւ տեղաց: Անձրեւը զաղբելուսն՝ խոշոր աւել մը կ'առնէր ձեռքը եւ ահագին շարժարանքով կը մաքրէր խանութին դռնառանջը: Անձրեւ չեղած օրերուն ալ, դրացիները իրենց տուները կը լուսային ու ջուրերը կը հաւաքուէին իր խանութին առջեւ: Սրտնեղած կը կանգնէր մայթին եզերքը: Այդ պահուն կզակը աւելի առաջ եկած կ'ըլլար, դիտուն մաղերը կը անկուէին, ծեծ կերածի կերպարանք կ'առնէր, ներսը կը փոթորկէր, կ'ուզէր պոռալ:

Կէս ապաշխարած մարդ է: Միախոտ կը ծախէ, բայց չի ծխեր: Շարունակ վեճի նիւթ կ'ըլլայ ասիկա իր շքեպատին մէջ: Բայց ինք լուս կը շարունակէ դործը: Շատ կը փափաքի, որ թուր մարդերը բարի եւ ապաշխարած ըլլան, ճամբաներէն անցնին լուրջ-լուրջ:

առանց աղջիկներուն նայելու: Չ'ուզեր որ անոնք փողոցին մէջ բարձրաձայն խօսին, խնչան, իսկ աղջիկներն ալ կ'ուզէ որ երկայն հազուատ հազնին: Իրեն համար պարկեշտ աղջիկ մը կ'ըլլայ ու՛ն՝ որ աչքերը դեռնէն վեր չի վերցնէր: Թեւեւր բաց ու շրթունքը ներկած աղջիկ մը եթէ տեսնէ՝ զգուսնք արտայայտող նայուածքով մը կը հետեւի անոր, կզակը նորէն առջեւ կ'երթայ ու միտքը շատ ետեւ, մինչեւ երկիրը, ուր աղջիկները ոչ միայն այսպէս անսովոր հազուատներ չէին հագներ, այլ մարդոց կրեւի նայելու յանդգնութիւն իսկ չէին ունենար: Ամէն առտու իր տղոց դիտուն մէկ-մէկ պատարագ կը կարդայ եւ անանկ կը ճամբէ զործի: Իսկ իրիկուններն ալ կ'ուզէ որ կանուխ տուն գան:

Հաճընցի պահպանողական ծերուկ մըն է: Իր բարեկամներն ալ, մեծ մասով, հաճընցի են, որոնք կու գան զուր, թէ՛ մը կը խօսին, կը կատակեն, թէ՛ մը թուզթ կը խոզան ու կ'երթան տուն:

Երբ նոր եկաւ, խանութին նախկին տէրը թնադատեց.

- Երբ շարունակ թաւու խաղայ, անշուշտ թէ պիտի վնասէ, - կ'ըսէր ու կ'աւելցնէր, - խանութպան ըսածը խանութէն պէտք չէ դուրս ելլէ:

Նախկին տիրոջ օրով, խանութը բուրովին չոր էր: Ինք լաւ երեւոյթ մը տուաւ անոր, նայլոն լապտերներ անցընել տուաւ չորս բոյրը, պատերը ներկեց, փեղկերը նորոգել տուաւ:

- Լիւքս, շատ լիւքս խանութ մը եղաւ, - կ'ըսէր:

Պաղ օրերուն, գլուխը թաղիքէ դըլխարկ մը դրած՝ անկիւնը կը նստէր, թերթ կը կտրդար ու յաճախորդի կը սպասէր, բայց յաճախորդները գալիք չունէին: Թաղին մէջ աւելի խոշոր ու անուանի խանութներ կային եւ կատարով ապրանք ծախողները միշտ ներկայ էին փողոցներուն մէջ: Ոմանք մեծ խանութներէն կ'ընէին զնուամները, ոմանք շրջուն վաճառորդներէն:

Թորոս մի քանի անգամ արգիլեց կառավարներուն այդ փողոցին մէջ գալ, բողոքեց, սպառնաց, բայց ամէն օր պատմութիւնը նոյնն էր, կառքերը կու գային եւ դրացիները կը խռնուէին անոնց շուրջը: Ձեռքերը մէջքին, կռուելու պատրաստ դիրքի մը մէջ՝ երկար կը նայէր անոնց, բաներ մը կը մըթմըթար, յետոյ իր ապրանքները կը քննէր, կ'առնէր ձեռքերուն մէջ, կը շոյէր, փռչիները կ'առնէր, ու կը զարմանար, թէ ինչպէ՞ս չեն հաւնիր իր ապրանքները եւ կ'երթան աղառա կառքերէն դնում կ'ընեն:

Կամաց-կամաց Թորոս ինքն ալ սկըսաւ թուլու խաղալ: Հիմա այլեւս չէր ինդար Բարթոլոմէ մրայ, որ Աստուծոյ տուած տաղանդը թաւու խաղալով փրճացուցած էր: Առաջ այսպէս կը մտածէր, կը կարծէր, թէ ինչ աւելիով պէտքի գործածէր իր տաղանդը ու Աստուծոյ ներկայացած ատեն գո՛հ սրտով պէտքի ըսէր:

- Տէ՛ս, շարժաժարի տաղանդիս վըրայ նպարտվածառի տաղանդ մըն ալ աւելցնելով կը ներկայանամ Քեզի, Տէ՛ր:

Բայց հանգստեան թուակին կէտը որդէն վատնուած էր եւ միւս կէտն ալ կաթիլ-կաթիլ կը սպառէր, կ'աշխատէր առաջը առնել, բայց ի գուր: Գործերը անպամ մը սկսած էին հակառակ երթալ այդ խանութին մէջ: Որոշեց ալ պարտքի ապրանք չտալ, բանջարեղէն բերելը դադարեցուց, պտուղ բերելէն ալ հրատարեցաւ: Հետզհետէ խանութը բոլորովին պարպուեցաւ, մնացին պարսպ դարակները եւ սառնարան մը:

❖

Օր մը սրճեփութիւն ընելու գաղափար մը ծնաւ մտքին մէջ: Թաղին մէջ սրճեփութիւն ընող չկար, Հալի մը ըրաւ եւ ոգեւորուեցաւ: Գոնէ՛ կ'աշխատէր, մինչեւ իրիկուն պարսպ նստելով իւր չէր կապեր մարմինը: Անմիջապէս գործի անցաւ: Ջուրի համար խուր թիթեղ մը շինել տուաւ, քովը պիւթակաղ

մը, երկու արտէս բերաւ տունէն եւ զաւաթներ դնեց:

Ամէն ինչ լաւ կ'ընթանար: Նահը լաւ էր, ծախսը քիչ: Արագ-արագ կ'աշխատէր: Գո՛հ էր:

Նոյն տարին, ուրիշ երկու անձեր ալ սկսան սրճեփութիւն ընել: Շահը երեքի բաժնուեցաւ, առաջուան թափը կորսուցուց: Ի՞նչ անիծուած էր արդեօք, թէ խանութը: Լաւ չէր հասկնար: Երանի կու տար ընկերութեան մէջ աշխատած օրերուն: Հոն հող չկար, յաճախորդներու հետ գործ չունէր, իր ամսականը գիտէր: Եւ ամսականը կը բաւէր իրեն, նոյնիսկ տարեկան արձակուրդներուն դեղերը կ'երթար, մաքուր օդ կը շնչէր, իսկ այս գործը ոչ արձակուրդ ունէր, ոչ շահ:

Քուն, հանգիստ, ժպիտ ամէնքը կորսնցուցած էր: Առաջ հայհոյել չէր գիտեր, հիմա սկսած էր հայհոյել ալ: Միակ միթիթարութիւնը թաւին էր, որուն փարած էր խնթի պէս: Կը խաղար շարունակ, ժամերով, ամէնուն ասպարէզ կը կարգար:

❖

Թորոս հաճընցի է, բայց աւելի տէօրթեուցի էր կը նմանի:

Երբ բարկանայ, գլխուն մազերը կը տնկուին, կ'ընակը կ'ուռի եւ կ'ազնու առջեւ կ'երթայ:

Սրբ խնդալ, գէճքը ծեր պատուելի էր երեսոյթը կ'առնէ:

Սրբ մաղերը երկնան, հանգստեան կուտած փրփեւէօրներու կը նմանի:

Սրբ ակնոցները աչքերուն զբան թերթ կարգայ՝ լալակը գլխուն նետած գուլպայ հիւսող հօրաքոյրներու կը նմանի:

Սրբ թաւու խաղալ, գլուխը նախամարդը կը յիշեցնէ:

Իսկ հեռաձայն ըրած ատեն, գէճքը այսպիսի՛ երեսոյթ մը կ'առնէ, որ մէկը կարծես թէ գուտած է իրեն կնոջ մահը:

Ն. Վ.

ԱՅՁԸՆՀԱՌԻԸՐԸ ՄԵՌԱ՛Ի

Ողորմած հողի մէր դործարանին մէջ
անանկ վարպետներ կային, որ ամէնքն
ալ մեծ մարդոց կը նմանէին:

Վարդիվառը համայնավար տեսա-
բան էր: Ուստա Երուանդը՝ Մոնկոմբը-
րիին կը նմանէր: Արթինը Այնընթացին
էր ճիշդ, իսկ վարպետ Շմաւոնը ուղղա-
կէ վարչապետ Իսաբն էր:

Յամի Տեան շեմ գիտեր ո՛ր թու-
կանին էր, Չորեքշաբթի օր մը, ասոնց
վրայ մէկն ալ աւելցաւ:

Եկաւ այն ատեն, երբ մեքենային
վրայ աշխատած միջոցիս, գործին մի-
րինակութենէն ախորժակէ եկած՝ կ'եր-
գէի և տաշղի կտորներ լաւ ընդունելու-
թիւն կը դռնէին բերնիս մէջ:

Մէկ ձեռքը դործիքներով լեցուն կո-
շով մը բռնած, միւս ձեռքին հին տե-
սակի սղոց մը՝ ներս մտաւ ու հազիւ
զինք տեսած՝ սիրտս թուզի անուշ ուզեց:
Մեր մարդ մըն էր ևւ քալելու ատեն
ֆետին պոչը առջեւ-հետեւ կ'երթար կու
զար:

Երբ մեքենային վրայ դրած դործերս
վերջացուցի, իրեն մօտեցայ: Կ'աշխա-
տէր սեղանի մը ետեւ: Հունած էր աղ-
նոցը, Ֆէսը, բաճկոնը ևւ թեւերը սօթ-
աած՝ կ'աշխատէր:

Այդընհատուրին կը նմանէր:

Յաջորդ օրն իսկ Այդընհատուրը վե-
րամկրտեցինք զինք: Միայն թէ՛ Այդըն-
հատուրի լիբանանեան այս տպագրու-
թիւնը թափթփած էր, աղքատ, մինչ ա-
մերիկեան տպագրութիւնը շիջ էր, մա-
քուր:

Եթէ նախագահ Այդընհատուրը սրտի
տաղնապ մը ունենայ, հինգ-վեց մաս-

նադէտ բժիշկներ շուրջը կը հաւաքուին,
կը դարմանեն: Իսկ եթէ մեր Այդընհա-
տուրը մեռնի, դրացիները անպայման
պիտի ըսեն.

- Աղատեցա՛ւ:

Նիհար մարդ մըն էր, շատ չէր աշ-
խատէր: Շատ դործ չէին տար իրեն ար-
դէն: Դուռ մը կամ պատուհան մը կազ-
մելու աշխատանքը կը յանձնէին իրեն ու
էրր վերջացնէր, քանի մը շաբաթ կ'ան-
յայտանար: Ամիսներ ետք նորէն կու դար
ևւ դործ կը ինքընէր:

Առանձին կը բնակէր ևւ տուտա-
նատ օդի կը խմէր: Բաճկոնի գրպանին
մէջ միշտ շիջ մը օդի կը պտուտէր ևւ մա-
մը քանի մը անգամ շիջը դուրսը կը քա-
չէր, ջուր խմելու պէս:

Դրամի համար Շաբաթ օրուան չէր
սպասեր: Ամէն իրիկուն կը պահանջէր
իր օրականը: Դրամը առնելէն ետք, կը
փութար դիմացի խանութը ևւ օդի կը
դնէր:

Աստու թմբած վիճակով կու դար
գործի: Առանց բարեւելու կը մտնէր
ներս, Ֆէսը կ'անցնէր տեղ մը ևւ սեղա-
նին կոթնելով՝ լուռ կ'աշխատէր:

Երբեմն, գործաւարներէն մէկը փայ-
տի կտոր մը կը նետէ Ֆէսին: Ֆէսը վար
կ'իյնայ: Միբար կը նեղուի: Կը վերցնէ
դիտնէն, փոշիները կը մաքրէ ու ձեռքե-
րը փորին վրայ հանդէտեցած՝ լուրջ-
լուրջ կը նայի, Բան չ'ըսեր: Վարի շք-
թուքը կը դողայ:

Աշկերտները կը մօտենան իրեն, կը
խօսին, կը կատակեն հետը ևւ ինք կա-
մաց-կամաց կը տարուի անոնց խօսքե-
րէն, կը մոռնայ Ֆէսին նետուած փայ-
տը ու կը մեղմանայ:

- Սա Ֆէսը նետէ, առանց Ֆէսի ա-
ւելի կը նմանիս Այգընհաուրընի, - կ'ը-
սեն, - աւելի դեղեցիկ կ'երեւաս:

Այս խօսքերը աւելի կը թեթեւցեն
սիրար:

Կէս ժամ շանցած փոյտի ուրիշ կը-
տոր մը կու գայ ու Ֆէսը դետին կը ձգէ:
Կը դանդաւոր վարպետին:

Փէսին պատմութիւնը կ'երկարի մին-
չեւ դաշթականութիւն, աքոսթ, կը հաս-
նի մինչև հայրենի տունը: Հարուստ ե-
ղած են իրենք, մեծ գործի ու խանութի
տէր եւ ինք, հօրը խանութը գտնուած
միջոցին, թաղին միւս ծայրէն թշնամին
սկսած է յարձակումը: Հայր ու տղայ,
առանց տուն կարենալ հանդիպելու, վա-
զած են կրակներու մէջէն ու ազատած:
Իրենց զիւրը այրած է ու իրենց տունն
ու հարստութիւնը զիւրին հետ: Բռնած
են աքոսթի ճամբան: Հայրը չէ կրցած
դիմանալ, մեռած է, եւ ինք, հօրը Ֆէ-
սը դուրսը անցուցած՝ կը հասնի հոս ու
կը սկսի օդի խմել:

Երբ Ֆէսը գետին իյնար, կարծես
սրբութիւն մը գետին կ'իյնար, կը վի-
րատուէր, կը յուզուէր:

Այնքան մեծ ընտանիքէն ու այնքան
ընդարձակ կալուածներէն, մնացած էր
ինք եւ Ֆէս մը:

Առաջ, միայն կերակի օրերը կը գոր-
ծածէր Ֆէսը, կը պահէր մաքուր, բայց
որքան տարիքը յառաջացաւ, այնքան ա-
ւելի կապուեցաւ անոր, սկսաւ ամէն օր
դուրսը անցընել:

Այգընհաուրըրը ամուսնացած էր,
բայց կինը ձգած էր զինք ու դացած ան-
ծանօթ երկիր մը: Առանձին, անօգնա-
կան կեանք մը կը քաշքշէր: Միայն երբ
հիւանդանար, դրացիներէն մէկը աման
մը կերակուր կը բերէր իրեն:

Անգամ մը ծանրօրէն հիւանդացաւ:
Շարաթներ անցան, բայց անկողինէն
դուրս չեկաւ: Գրացիները բժիշկ մը բե-
րին: Բժիշկը լաւատես կարծիքներ չէր
յայտնած: Ըսած էր,

- Եթէ օդին ձգէ, թերեւս լաւանայ:

(«Նոյն Թագի Մարդիկ»)

Ամէն ինչէն կրնար հրաժարել, հը-
րաժարած էր ալ, հաշտուած էր բոլոր
կացութիւններուն հետ, բայց օդին ձգե-
լու զաղափարը կը սարսափեցնէր զինք:

Ճ

Տարիի մը շափ շերեւցաւ: Մոռցանք
իւր գոյութիւնը:

Բայց ամառ իրիկուն մը, երբ դուր-
սը կայնած էինք, յանկարծ տնդուցաւ
մեր առջեւը: Բիշ մը աւելի փայլուն ե-
րեւոյթ մը ունէր: Գործ կը փնտռէր:

- Սղին ձգեցի, - ըսաւ, ու աւել-
ցուց, - դուն անշուշտ կը ճանչնաս զիս,
դիտեա ինչպէս կրնամ աշխատել: Ամէն
ինչ կրնամ ընել: Ըսէ հօրդ որ դամ աշ-
խատիմ:

Քաղաքավարօրէն ձեռնուեցաւ եւ
վնաց ուրիշ վարպետի մը մօտ: Ան ալ
ուրիշ վարպետի մը մօտ դրկեց զինք:
«Գործաւորի պէտք չունինք», կ'ըսէին
իրեն ու ճամբու կը ղնէին: Նորէն վերա-
դարձաւ մեզի: Մնաց, աշխատեցաւ, քը-
ղօցեց, յզկեց մինչև իրիկուն:

- Սղին դրամը շեյաւ տակաւին, -
հարցուց աշկերտ մը:

- Ոչ, բժիշկները արգիլեցին օդին, -
ըսաւ դառնութեամբ:

Իրիկունը երկու ոսկի ուզեց վար-
պետէն, յաջորդ օրը վերադարձնելու
պայմանով:

Գրամը ամուր բռնած՝ գնաց:

Անկէ հաք այսպէս ապրեցաւ կու
դար, կ'օգնէր, քանի մը ոսկի կ'առնէր
եւ կ'երթար:


Գործեալ սկսանք չտեսնել զինք:
Անցան ամիսներ, Ո՛ւր էր, ի՞նչ կ'ընէր:
Իրիկուն մը, իրեն դրացի արար
գործաւորը եկաւ եւ ըսաւ.

- Այգընհաուրըրը մեռաւ...:

Գործաւորները տիրութեամբ իմա-
ցան լուրը: Գործարանին մէջ, իր մօտ
աշխատող ծեր վարպետը յուզումով օրօ-
րեց դուրսը, ու՝

- Աղատուեցաւ, - ըսաւ:

Ն. Վ.



ԳՐԱԿԱՆ ԱՆԴԱՍՏԱՆ

ԵՒ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

Ուշագրու գրական հունձի մը պատկերը արձանագրուած է «Թա-
ղիկ»ի այս տարուան Մարտի թիւի վերջին էջին վրայ:

«Լոյս տեսաւ»ներու շարք մը այս տարեմուտին: Հինբու հնչեղ ա-
նուններուն քովիլը՝ նորերն ալ բնմին վրայ փայլ մը, յոյս մը կ'աւելցնեն:

Հոգեկան անհուն հրճութեամբ մըն է որ կը դիմադրեմ ամէն ստեղ-
ծագործութիւն, որ կենսունակ աւիշ մը կը ներարկէ աստուծական Հայ
ժողովուրդին: Գիրքը լուս ու անաղմուկ, անտեսանելի տեղ մը, միմակա-
թեանը մէջ, կը գտնէ հայ մարդը ու անոր հետ կը խօսի: Անշուշտ պահ
մը հայ մարդը կը կտրուի օրուան տաղտուկէն ու ժխարէն, ու մասնիկ մը
հայ հոգիէն կը փոխանցուի իրեն: Մեծ ուժ մըն է գրականութեան եւ ար-
ւեստի այս հազարգումը: Տեսականութեան եւ վերածնունդի դարբնոց մըն
է գրականութիւնը, որուն մուրհերուն ճայնը չի լսուիր, բայց հոգին կը
պաղպաստէ, եկեղծի մըն է խորհրդաւոր, որուն զանգերը չեն հնչեր, բայց
խորհուրդ խորհի մեղեդիլ կ'ըմբռնեն հոգեպէս:

«Մեր ճամբէն խաւար, մեր ճամբէն գիշեր,

Ու մենք անհասնում

էն անլոյս մըթնում,

Երկար դարերով գծում ենք շէպ վեր...»

պիտի ըսէր Յ. Թումանեանը:

Հայ հոգին, գրականութեան նմապարհներուն վրայ, միշտ աննկուն
հղած է եւ դարերու տեսողութիւն ունի:

Եստ յաճախ, գրականութիւնը անհատական ապրումի մը արդիւնքն
է, եւ հեղինակը գոհացած է մէկ օրինակ ձեռագիր միայն թողուլ իրբու

յիշատակ: Ու դարեր յետոյ՝ լոյս աշխարհ եկած է իր երկը եւ մաս կազմած մեր գրական գանձին:

Հայ գրականութիւնը հարստութեան միջոց մը եղած չէ երբեք: Հայ գրագէտը ստեղծագործած է հոգեկան բարարութեան համար, ու տառապած է, երբեմն, իր գիրքը լոյս ընծայելու նիգին մէջ:

Ահա, սեզանիս վրայ են 1967-ի վերջերուն եւ 1968-ի սկզբնաւորութեան լոյս ընծայուած գիրքերը, Ազրալեանի հատորները, Մ. Իշխանի «Տառապանք»ը, Հ. Յովսէփեանի «Հարսին կոնզը», Բ. Կասնեանի «Հայկական կատակերգութիւն»ը, Տաք. Տիգրան վարժապետեանի «Բժիշկը կեանքի ու մահուան հետ», Ս. Սիմոնեանի «Սիրանայ Քաջերը», Ա. Արփիների «Կեանքի կատակերգութիւնը», Արա Արծրունիի «Վերաւոր ծիծեռնակը», Բ. Փափազեանի «Լուսինի փրանտէլլո»ն, Լեւոն Շահոյեանի «Տիրութիւն Արփի», Գեորգ Անժնեանի «Պիտի շարձարեւ բառերը», Արամ Գառուկի «Պիտիսի երգերը»: Անշուշտ մտպուածներ կան. հեղինակները ինծի պիտի ներեն: Կան նաև պատմական եւ քաղաքական երկեր, որոնք հայ իմացական կեանքը կը հետաքրքրեն:

Ու սակաւին այստանալիք մը, համնիլի սպանալիք, - մամուլի տակ են եւ շուտով լոյս պիտի տեսնեն Յ. Գեղարդի «Մուկան»ը (պատմաւածմանը), Ներսէս Վիրապեանի «Նոյն թաղի մարդէկ» (պատմաւածմանը), Տիգր. Ս. Ալեքիանի «Յեղափոխական հայուհիները հայոց պատմութեան մէջ»... ընթերցողը կը մտայ շարունակել իմ չգիտցածները:

Ահա հոգեկան հունձքը գրական անդաստանին մէջ դիպում: Մեծ մասը այս երկերուն արժէքաւոր ու ուշագրաւ են:

Անցեալ յիսնամեակի պատկերը այժիս առջեւն է: Շարք մը տասնամեակներ անցած են: Տասնամեակ կայ, որ հագիւ տասը հատար գիրք արձանագրած է, որպէս հոգեկան հունձք: Այսօր, մէկ տարուամ ընթացքին, իմ արձանագրած հատորներու թիւը արդէն տասնընիմքը կ'անցնին:

Այս երեսուցը վկայութիւն մըն է հայ գրագէտի եւ մտաւորականի ներքին մղումին, հոգեկան բարարութեան: Ատար վրայ աւելցուցէք նաև նիւթական գոհարութիւնը, իր հոգեկան գոհունակութիւնը հատարով իրացած տեսնելու:

Եթէ անտարբերութեամբ ու թոթուելու հիւանդութիւնը չունինք, պիտի խանդավառուինք գրական բերքին ի տես:



Պատկերին առջեւ բազմաթիւ խորհրդածութիւններու կը մղուիմ, մանաւանդ երբ մտանդիչ արձագանգներ կը լսեմ գանգամ անկիւններէն մեր գրականութեան եւ իմացական խնդիրներուն շուրջ, խորունկ գիտակցութեամբ առաջարկութիւններ, որոնք հայապահպանման կը ձգտին, հայ գրականութիւնը ի մտի ունին ու անոր գարգացման թափ մը տալու առաջադրանքն ունին:

Ահա, բնադրական արտայայտութիւններու այս պատկերը, կուսակցական դաւանանքի եւ հոկումներու տարբեր բեմերէն:

Երուանդ Քասունի, «Սփիւռք»ի մէջ, իրաւացի վրդովմունքով կը մատնանշէ գրական հետաքրքրութեան պակասը: Քննադատութիւնը իր թոսքը չ'ըսեր երատարկուած գրքերուն առիթով, գրական մթնոլորտ մը

ստեղծելու համար: Կանդիդատնայ ուշագրու հարցի վրե - Մասուրական նոր սերունդը հայերէն գիրք չի կարդար, որովհետեւ իր ճաշակին եւ միտքին ստուշ առուղ հրատարակութիւնները կը պակսին:

Համաձայն չեմ յօդուածագրի բանի վր արտայայտութեանց: Սակայն գրական մթնոլորտի պակասը մտածանշուած ամէնէն եխմակամն է, հիւանդագիմ երեւոյթ մը. որ կրնայ վարատիլ, եթէ սփիւռի մամուլը, - օրաթերը, շաբաթաթերը ու ամսագիր, - գրողիմ հրատարակուած գրական, պատմական կամ իմացական երկերով, լայնցնելով ծանօթութեան սահմանը մեր ցիրուցան ժողովուրդին, եւ գայն մղեն հայ գրական ապրումներու:

Միջնակարգ եւ համալսարանական նոր սերունդ վր հասակ մետած է վերջին տասնամեակին, եւ անանց թիւը միայն Պէյրութի մէջ բանի վր հազարը կ'անցնի, բայց այդ սերունդի չնչին տոկոսը միայն հայերէն գիրք եւ թերթ կը կարդայ: Երկրակառի առնեմ որ այդ մտաւարական երկտասարդութեան մեծագոյն մասը հայերցի միջնակարգ կրթութիւն ունի, իննննիմ արդէն մեղադրական արտոն վրայ նստած կ'ըլլայ, երբ բացակայ է գրականութեան անդատամէն:

Այդ սերունդը պէտք ունի սթաիելու, պէտք ունի վերադառնալու հայ երակին, որ բարսխուն է, պէտք ունի ուղեմնալու հայ գրական եւ պատմական խորունկ ծանօթութեամբ, վաղուան հայ կեանքի դեկավարութիւնը ստանձնելու համար: Գրական եւ իմացական միջագգային ճարտքիւններուն կրնայ ծանօթամալ իր գիտցած լեզուներով: Բայց իր գիտցած հայերէն լեզուով՝ քիչ մըն ալ հայ գրականութիւն կարդալու մղումը պէտք է ունենայ:

Ինչ որ յաւադրիչ է, Ե. Գասունիի ընդվզումն է այն լուսութեան դէմ, որ հայ մամուլը (օրաթերթ, շաբաթաթերթ կամ ամսագիր) կը պահէ: Մինչդեռ աւագ պարտականութիւն ունի այդ մամուլը լրբութեամբ եւ օրը օրին մեր գրական, իմացական եւ արուեստի շուրջ արտայայտուելու, մթնոլորտ ստեղծելու:



Ուրիշ անկիւնէ մը, նայմամ մտահոգիչ պատկերի մը ցուցադրութիւնը:

Յովի. Աղպաշեան «Թառաջ»ի մէջ «Յօսք Լիբանանահայ մամուլի եւ ընթերցողներու մասին» վերնագրով յօդուածի մը մէջ թերթերը դադարեցնելու խնդրանքներուն բանի մը նմայշներ կու տայ: Այդ դադարեցման խնդրանքներուն նմայշները հայ թերթերը բալորն ալ ունին իրենց գորացնելուն մէջ:

- Բազմագրադ եմ, թերթ կարդալու ժամանակ չունիմ...
- Ժամանակս հագիւ կը բաւէ ինծի՝ հասած օտար թերթերը կարդալու...

- Ամուսինս մեռաւ, տան մէջ հայերէն կարդացող չմնաց...

Այսպիսի ցուցակ մը հրատարակելով Յ. Աղպաշեան կը մատնանշէ

«Մեր մամուլին աստիճանական կծկումը» ... ու կ'աւելցնէ.

«Մամուլի համատարած առուարականացման ներկայ պայմաններուն մէջ, երբ թերթերուն մեծ մասը խարդախուած միտքերու, եւ այլասերող

ու մուրեցնող հասկացութիւններու վաճառատան է վերածուած՝ իսկապէս հրաշքի համազօր բան է հայ թերթին անվարձ ու անսակարկ զոհողութիւնը, ի ծառայութիւն հայ դիրքին ու գրականութեան»:

Յօդուածագիրը անդրադառնալով քերթերու սպառումին, համեմատած ազգաբնակչութեամբ իւրին, անմխիթարակամ կը գտնէ:

Սակայն գրական է իր եզրակացութիւնը հայ մամուլի դերի մասին: *«Հայ մամուլը, ի հնուէս իր բոլոր թերացումներուն, ընկերումներուն եւ կարելիութեանց սահմանափակութեան, կը մնայ սփիւռքի մէջ ազգայնականութիւն եւ հայ մշակութի ու գրականութեան զարգացման ամենահիմնական խթաններէն մին»:*

Շեշտելով այս կենսական դերը հայ մամուլին եւ գրականութեան, յօդուածագիրը հետեւեալ իրաւացի քննադատմէր կ'ընէ.

«Ընթերցող հասարակութիւնը, իր կարգին, պէտք է ներթափանցի, բարոյապէս եւ յանձնարար թելադրանքներով անկացութիւն ընձեռէ հայ մամուլին, զայն դնելու համար օրուան պահանջներուն համապատասխան բարձրութեան վրայ»:

Հայերէն կարգալու, հայ գրականութիւնը տեսական դարձնելու սրտնաչ մտնտաւք մը այդ բեմէն:



Նայն մտանգութեան մէկ քննադատմէն է ընկեր Ռուբին Գարրիանանի մէկ յօդուածը *«Հայրենիք»* օրաթերթին մէջ, - *«Ժնշ ենք պարտական մեր մամուլին»* վերնագրով: «Ազատամարտի եւ «Հայրենիք» ամսագրի էրբերն Ռ. Գարրիանան յայտնի ու կարկատուն դէմք մըն է:

Վաքսանմանակի մը մտաւոր շշխատմէի բռն իր ուսերում, հայ մամուլի հանդէպ եղած անտարբերութիւնը կը մատնանշէ, շեշտելով որ հայ մամուլը այն գերագոյն գէնէն է այսօր, որ մեր բոլոր հաստատութիւններում կ'օժանդակէ, կենսունակ գործունէութիւն մը ունենալու: Սակայն ամէնուն ծառայող հայ մամուլը ճիշտապէս որեւէ օժանդակութիւն չի ստանար:

Մամուլի դերը գանազան երեսներով պարզելն ետք, կը գրէ.

«Մամուլը, հայ սփիւռքի ազգայնականման ու հայ մշակութի զարգացման գորավիւլ կը հանդիսանայ, վառ կը պահէ սփիւռքի հայութեան հետաքրքրութիւնը մայր Հայաստանի հանդէպ եւ վերջապէս, իրեն միայն յատուկ ազդու միջոցներով կ'օգնէ հայ դատի հետապնդման»:

Հայ մամուլի դերը մեր իրականութեամ մէջ շատ մեծ է հայ գրականութեան եւ պատմութեան տարածման համար, եւ ըստ Գարրիանանի, իր ամէնօրեայ քափանցումով, հայ եկեղեցիներէն, դպրոցներէն եւ այլ հաստատութիւններէն աւելի դեր մը ունի: *«Եւ, սակայն, հայ հասարակութիւնը Սփիւռքի մէջ ո՞րքան քիչ կը ղնահատէ իր մամուլը, ո՞րքան քիչ կը հասկնայ մամուլի դերը մեր հանրային կեանքի մէջ»:*

Յ. Ազգայնանի մտանգութեան մէկ պատմաաւարանուած ճեւղերպումն է Ռ. Գարրիանանի յօդուածը, որ կը վերջանայ հետեւեալ քննադատմով...

«Մեր մամուլը իրեն տրամադրելի միջոցներով կ'օգնէ մեր բոլոր կազմակերպութիւններուն եւ ամէն իրաւունք ունի սպասելու, որ ակիր-բռնակալութիւնը պէտք եղած նիւթական օգնութիւնը Հասցնէ նաեւ իր պահ-պանման եւ բարգաւաճման Համար»:

Իրաւացի մտահոգութիւն, որ հայ գրականութեամբ եւ մշակայթով գրադուող ամէն հայ ի մտի պէտք է ունենայ:



Մտածում եւ առաջադրանք ուրիշ ճակատէ մը:

Նշան իտշափեան «Միփուք»ի մէջ ընդարձակ ու պատնասարանուած յօդուածով մը (Հայ մամուլը), ուշագրաւ վերլուծում մը կ'ընէ եւ աւելի առաջ երթալով, գործնական քայլ մը առնելու թելադրանք կ'ընէ: Ժա-մանակին պիտի անդրադառնայի այդ յօդուածին, յայտնելով իմ համա-մըտութիւնը եւ հանդիպումով մը, իրականութիւն դարձնել մամուլի ներ-կայացուցիչներու յանձնարարական խորհրդակցութիւնները, գրական ու մտա-ւորական հաւաքական մթնոլորտ մը ստեղծելու համար: Անցած երկու ամիսուան ընթացքին հայ գրականութեան եւ մամուլի ներկայ դերի մասին քննարկ մը տարրեր բեմերէն նայն մտահոգութիւնը ուշադրութիւնս գրաւեց:

Նոյն մտահոգութիւնները համադրեցի այս էջիմ մէջ, յոյս ունենա-լով որ այս պատկերին առջեւ, բոլոր ծակատներում պատկանող մամուլը այս խնդիրներու բնութիւնը ոչ միայն յանձնարարական պիտի ընէ, այլեւս ար-ձագանգը պիտի դառնայ դիմացի քեմին, հայ ժողովուրդը հաւաքական մտածումի մղելու համար:

Նշան իտշափեան մամուլի մասին խօսելէ առաջ, կարճ յատարանք մը ունի, որ այնքան սրտառուչ անդրադարձում մը կ'ընէ հայ գրքի մասին:

«Միփուք»ի մէջ զբառ էինք Հայ գիրքին վիճակուած տխուր ճակա-տագրին մասին: Աշխատած էինք ցոյց առալ թէ Հայ մտաւորականութիւնը ինչպիսի ինքնամատոյց նուիրումով Հաւատարիմ կը մնայ իր կոչումին, առհասարակ շրջապատին կողմէ ցոյց տուած անբաղձալի անտարբերու-թեանց: Ուզած էինք մատնանշել թէ այս կացութեան դարձան մը մտա-ծելու պատասխանատուութիւնը առաւելաբար կը ծանրանայ ազգային բո-լոր կազմակերպութեանց ուսերուն վրայ, որոնք գիտակցաբար կամ անգի-տակցաբար, շատ քիչ անդամ կը դառնան Հայ մշակոյթի անդաստանին կողմը, որուն ակօսներուն մէջ Հագիւ ծիւ ուրձակող տունկեքը, արեւ եւ լոյս շտեմած՝ կը խամբին»:

Ն. իտշափեանն նիշդ ընթրոշումը կ'ընէ հայ Սփիւտքի ներկայ կացու-թեան եւ անվարան կը գրէ:

«Գիրք ու մամուլ: Մէկը միւսէն անբաժան, մէկը միւսին կողքին, Հայ մշակոյթի ճամբով սիրտ-օրտի սեղմած՝ իրարու կը Հաղորդեն ցեղի մը դզացումները ու կենսունակութեան շունչը»:

Աւելի շեշտուած ու աւելի համոզիչ է իր խօսքը մամուլի դերի մա-սին:

«Հայ մամուլին դերը մեծ է նաեւ այսարհացիւ Հայութեան Հոգե-կտն միութիւնը կերտելու մէջ, տեսակ մը շտապակամար ծառայելով դա-նազան գաղութներու միջեւ ազգայապահպանման ճիգերուն»:

Գործնականին անցնելով, Ն. հռչակեան կ'առաջարկէ կազմել մամուլի խորհուրդ մը: Եթէ *Մահախոս* մը կազմելը դեռ վաղանաս է, բայց պարբերական խորհրդակցութիւններ, զանէ ամիսը անգամ մը, հաւաքական մտայնութիւն մը կը ստեղծեն ու կրնան մզում տալ հաւաքական գիգերու:

Մենք պիտի ուզէինք որ մամուլի մերկայացուցիչները համագումարային իրենց կոչումին, եւ ըմբռնէին, բէ հայ մամուլը հայ մարդուն խզին ձայնն է, ինչպէս կ'ուզէ հաւատալ Ն. հռչակեան:

Եթէ հայ մամուլը արթում եւ գիտակից պահակը դառնայ հայ մշակութիւն, կասկած չկայ որ հայ տունը պիտի ունենայ իր հայ թերթը եւ հայ գիրքը՝ իր պատուոյ դարակը:

•

Գրական այս Անդաստանի արարողութիւնը կը փակենք հրգին վերջին տողովը.

ՊՏՂԱՏԵՐՈՒԹԻՒՆ ԵՂԻՑԻ...

Թելուգրամն մը հայ մամուլին: Շարաքը քանի մը անգամ, պողունց մը խունկ ծխէ հայ գրական անդաստանին մէջ:

Ու պատուէք մը հայ մարդուն՝ որ գրական Անդաստանի պտուղները վայելէ արժանապատուութեամբ:

Աշխարհքը իր ճամբով, մենք մեր ճամբով:

Մենք դեռ շատ երկար ճանապարհ ունինք մեր առջեւ...:

Կ. ՕՍՍՈՒՆԻ

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՔ

Բունիաթովը գրում է.

« Հետագայում հայ եկեղեցին աղուանական հոգևորականութեանը դուրս մղեց նրա գրաւած դիրքերէց եւ սկսեց երկրի՝ արարներին անժառնչելի լեւնային վայրերում ազրող աղուաններին ուժեղ կերպով գրեգորեանականացընել: Հայ հոգևորականութիւնը աստիճանաբար ոչնչի հասցրեց Արանի եկեղեցու աղեցութիւնը այդ բնակչութեան մէջ եւ արաբական իշխանութիւնների ձեռքով ոչնչացրեց աղուանների բոլոր գրական յուշարձանները, այն ամէնը, ինչ որ կարող էր գէթ աննշան շարիով յիշեցնել աղուանական մշակոյթի մասին: Դա արուել է, կրկնում ենք, նախ խալիֆաթի օգնութեամբ, իսկ հետագայում էլ՝ ուրիշ նուաճողների օգնութեամբ ու դիտութեամբ: Արանի գրական յուշարձանները ոչնչացնելով, գրեգորեանական եկեղեցականները գրանք նախօրօք թարգմանել են գրաբարի: Դա արուել է մասնաւորապէս Մովսէս Կաղանկատւացու «Աղուանից պատմութեան», ինչպէս եւ, ի դէպ, աղուանների գրական շատ յուշարձանների հետ: ...Մեր կար-

ծիրով, ճիշդ չէ որոշ գիտնականների այն «հաստատ համոզումը», թէ Մ. Կաղանկատուացին հայ պատմաբան է հղել:»

Այս առթիւ Բունիաթովը վիճում է նաեւ Վաչէ Նալբանդեանի հետ: Յիշեցնենք, որ Բունիաթովի սրտաուշ համակրանքի եւ զուրկ առարկայ՝ «գրեգորեանացուած ու հայացուած աղուանները» իրականում ի յառաջագունէ հայեր են եղել, որոնք ոչ գրեգորեանացուելու եւ ոչ էլ հայանալու կարիք ունէին: Բայց սա ի միջի այլոց, Բունիաթովը չի բուարարում Կաղանկատուացուն աղուանացնելով եւ դիպկապտոտի հոգեբանութեամբ նոյն ձեւով ուղում է իւրացնել նաեւ Դաւթակ Քերթոզին, Մխիթար Գոչին, գրեւով, թէ՛ «Գոչի «Դատաստանագիրքը», Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւնը», ինչպէս եւ Արանի պատմութեան վերաբերեալ միջնադարեան շատ ուրիշ աղբիւրներ զլալի շարիով պէտք է համարել գրաբարով գրուած աղուանական գրականութեան յուշարձաններ: Եւ Աղբիւրէլանում Արանի (Աղուանքի) պատմութեան ջրխտոնէա-

կան ժամանակաշրջանի Հեռագրողներ շունենալն է որ Հնարաւորութիւն է տը-
ւել այդ զրականութիւնը Հայկական
Համարել, թէեւ զրա Համար լիպուից
բացի ոչ մի հիմք չկայ»:

Բունիաթովի Հայ մշակոյթի
կարկառուն ներկայացուցիչներին տղ-
ւանացնելու առթիւ յիշեցնենք, որ նոյն
«Նեղինակը» 64 թուին տպուած իր «Ա-
զըբէջանի պատմութեան աղբիւրների
տեսութիւն» զրքում նոյնիսկ... Թուր-
քեր է դարձրել զտարիւն Հայեր՝ Սմբատի
որդի Սահակին, Համամ Արեւելցուն,
Ատեփանոսի որդի Ծալուն, Համամի
որդի Ատրներսեհին եւ ուրիշներին: Իսկ
ինչ վերաբերում է նրա այն գանգատին,
թէ մշակոյթի յիշեալ գործիչները Հայ
են Համարուել սոսկ այն պատճառով, որ
Ազըբէջանում մինչեւ Հիմա մարդիկ
քնած են եղել եւ Համապատասխան գի-
տական անձնակազմ չկար, որպէսզի
պատմական ճշմարտութեան անաղար-
տութեան վրայ հսկէր, ապա զա ձեւով
ու խորով յինքան գարմանալիորէն Հա-
մահնուն է այս ուսումնասիրութեան
մէջ մի անդամ արդէն յիշատակուած
տիրահռչակ թուրք պատմաբան» կըր-
ցիողուի խօսքերին, որը բարբառում է,
թէ 1717 թուին վենետիկում հիմնուած
Մխիթարեան միաբանութեան Հայ դիտ-
նակները եւ ուրիշները իրենց Հայերէն
ու օտարալեզու զրքերով կտրողացել են
եւրոպացիներին խելքից Հանել ու Հա-
ւատացնել, որ սելվուկների արչաւանջ-
ներից առաջ Հայաստանը պարզապէս
Հայաստան է եղել, եւ թէ՛ պատմու-
թեան քնազաւատում սեփական կաղբեր
շունենալու Հետեւանքով՝ այդ զրքերը
մեզ վախ են ներշնչել ու ստիպել նահան-
ջիլու»:

Եւ Հիմա այդ զսեփական կաղ-
բերը իրար գտել ու գրկախառնուել են:
Բունիաթովի Հայերին վերաբերող ամէն
մի տող անողսք կրակի արժանի ցնդա-
բանութիւն է, բայց մենք միշտ սահմա-
նօրինակում ենք նուազագոյն մէջըրում-
ներով:

Ահաւասիկ եւս մէկը. «Թէեւ Ա-
րանի լեռնային մարզերի ու լրջանների՝
Սիւնիքի, Արցախի, Խաչենի, Շաքիի,
Գարդմանի եւ Ազըբէջանական ՍՍՀ-ի
այժմեան կիրովարագի, Իսմայիլու,
Կուտկաշէնի, Վարդաշէնի եւ մի շարք
այլ լրջանների մի քանի այլ դիւղերի,
ինչպէս եւ Հայկական ՍՍՀ-ի Սիւնիքի,
Բասարգեղաբի եւ ուրիշ լրջանների բը-
նակչութիւնը ներկայումս Հանդիսանում
է Հայկական, այդ բնակչութեան մօտ
սովորոյթներն ու բարքերը բուրովին
նոյնն են, ինչ որ նրա կողքին տարող
աղբէջանցիների մօտ, որոնց պապերը
այս կամ այն պատճառով դարձել են
ժուտուրմաներ: Այդ լրջանների բնակչե-
ները Հենց նրանք են, որոնց նախահայ-
րերը զյարել են Հայ դաւանանքի եկեղե-
ցուն եւ ձուլուել Հայերին»:

Այստեղ այնքան արտառայ սուտ
է խտացում, որ այն լրիւ բացայայտե-
լու Համար թերեւս մի ամբողջ զրքի
կարիք զդացուի: Մի կողմ դնենք «Հայա-
ցած աղուանների» առասպելը: Բայց
պակաս տարօրինակ չէ իբր կողք-կողքի
ապրող Հայերի ու ազըբէջանցիների
բարքերը Համեմատելու անճարակ փոր-
ձը:

Կարծես թէ Հայերն ու աղբէջան-
ցիները կողք-կողքի ապրում են դեռեւս
ն-Ս-րդ դարերից սկսած, եթէ ոչ աւելի
վաղուց, քարացած, անշարժ, անփո-
փոխ: Կարծես թէ բնակչութեան, թէ-
կուզ նոյն ազգի ներսում, ոչ մի փոփո-
խութիւն՝ արտազաղթ ու ներգաղթ տեղի
չի ունեցել: Եւ կամ ժողովուրդները քիչ
թէ շատ նման կենցաղ ու փոխադարձ
յարգանք ունենալու Համար ինչո՞ւ պէտք
է անպայման ցեղային նոյն ծագումն ու-
նենան: Իսկ աղբէջանցիներին «բնիկ»
ներկայացնելը «լեռնային լրջաններում»
աւելի է զուրկ հիմքից: Թէ Արցախում
ե՞րբ և ինչպէ՞ս աղբէջանցիները սողոս-
կեցին լեռնավայրեր եւ մասամբ նստա-
կեաց կենքի վարժուեցին, կարելի է
իմանալ պէ՞տք Բաֆֆու «ՈՒՄՍՍԵՅԻ ՄԵ-
ԼԻՔՍԻԹԻՆՆԵՐԸ» զրքից: (Բաֆֆու

այլ զբքի առնչութեամբ ընդարձակ ուսումնասիրութիւն ունի Արշակ Զամախանը)։

Քրքական թիկունքային որչ Շուշայ բերդի կառուցումը ընդամէնը 200 տարուայ պատմութիւն ունի։ Իսկ «Հայկական ՍՍՀ-ի շրջաններէ» մէջ տեղաւորուած աղբթէջանցիների նստակեացութեան ժամանակի ու պարագաների մասին որոշ տեղեկութիւններ կարելի է բողբի թէկուզ Ռայաուուր Աւգալբէկեանի «ՀՊՂԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1801-1917 թ. թ.)» գրքի համապատասխան էջերից (11-28), կամ, ասենք, Ռայաուուր Աւգալբէկեանի «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՔՆԱԿԶՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ 40 ՏԱՐԱՒՄ (1920 - 1960)» գրքովի որոշ տողերից։ Սրանք սուեալ հարցի վերաբերեալ յատկապէս դրուած մասնագիտական ու առաջնակարգ զբքեր չեն, ի հարկ է, բայց ուսանելի մասնակի եւ պերճաբոս վկայութիւններ են պարունակում։

Մորելի նման Հայաստան խուժած Քրքաղիների լեռնային վայրերում քիչք խմբերով նստակեաց դառնալը վերջին դարերի երեւոյթ է, յաճախ էլ սաղմակաւ յատուկ նպատակով կազմակերպուած՝ պարսկական խաների ու սարղարների նախաձեռնութեամբ։ Բայց փաստական անհեթեթութիւնից բացի, Բունիաթովի յայտարարութիւնը պարունակում է եւ անբարոյական ստորմիտում։ Նա բացէիբայց ուզում է Փոքր կովկասեան լեռնաշխարհի հայութեանը ձօնաւորապէս յուշել՝ թէ զուք հարազատներն էք որնեում. այլ հարազատը մենք ենք՝ աղբթէջանցի թուրքերս, իսկ հայերը մեր նախահայրերի թշնամիներն են եղել, նրանց բռնութեամբ հաւատափոխ ու լեզուափոխ արել, դեռեւս շատ դարեր առաջ ցեղասպանութեան ոճիրը գործել։

Մի խօքով, ուզում է ասել, թէ՛ «Տ՛ուր ինձ քու ձեռքդ, եղբայր եմք մէք, որ մրբկաւ էինք զատուած»։ Քրքստանեայ ժողովուրդների անմեղ մահուկ-

ներին խլող, նրանց իրենց շնով ենիչերիներէ ձեռքով նոյն քրքստանեաների միւր կրծող թուրքերի աւանդական մեթոք այժմ փորձուած է եւ Բունիաթովի կողմից։ Եւ ոչ միայն վերոյիշեալ յայտարարութեամբ։ Բունիաթովի գրքի աղբթիւրների ու զրականութեան ցանկում յիշում են եւ երկու հայկական անուններ՝ Տ. Ի. Տէր-Գրիգորեան եւ Ա. Ս. Վարդապետով, «չհրատարակուած աշխատութիւններ» բաժնում։ Այսինքն, նրանց կողմից դրուած հինգ այնատութիւն չեն սպուել, այլ որպէս համարակալում զուք պահուած են ձեռքը։ ՍՍՀ ԳԱ պատմութեան ինստիտուտի արքիվումս եւ որոնցից առատօրէն «օգտուած» է Բունիաթովը՝ իր հակահայ դրոյթները «հաստատելու» համար։ «Ճիշդ է ասուած այսինչը...»։

Մենք շատ լաւ դիտենք, թէ ինչ անպատեհութիւնների հետ է կապուած ոեւէ հեղինակի երկից այս կամ այն քաղուածքը մէջբերելը, երբ անզգոյշ վարուելու դէպքում կարող է նոյնիսկ բուրբովին խեղաթիւրուել հեղինակի միտքը։ Եւ դա մանաւանդ Բունիաթովի ձեռքում, որի մտածելակերպն ու վարքը կասկած չի թողնում, թէ հեղինակների ո՛ր դասակարգին է պատկանում։

Ուստի չենք ուզում բացառապէս այս կամ այն քաղուածքի վրայ յենուելով կանխակալ կշտամբանքի խօք ասել յիշեալ հայ հեղինակների հասցէին։ Նըրանցից մէկը, օրինակ, հանդուցեալ Տէր-Գրիգորեանը, դատելով մի շարք տուեալներից, դրաբար եւ ուսուերէն իմանալու շափ որոշ պատրաստականութիւն ունեցել է։ Նրա ուսումնասիրութիւնները զէթ հետուից այնքան էլ անպարտան հակադիտական ու վնասակար չեն երեւում։

Բայց ուրիշ է Վարդապետովը, որն ուղղակի դանձ է Բունիաթովի համար եւ տեղի-անտեղի վկայակոչում է՝ հայ եկեղեցին «ջախջախելու» նպատակով։ Նրանցից մէջբերուող

նախադասութիւնները, ի՞նչ կապակցութեամբ էլ որ դրեմածուելու լինեն, ուղղակի խայտառակութիւն են հայ անուիւր կրող ունէ անձի գրչի օակ: Բունիթովը իրեն ցոյց է տալիս եւ գրքի ճիշտագին խնդիրը 8-9-րդ դարերի Ազրբէջանում թատի մէջ, առաջ քաշելով գետեւ արարների նուաճումից առաջ, 5 եւ 6-րդ դարերում, Աղուանքում եւ Ատըրպատականում թրքական հոծ դանդաղաներ տեղաւորուած լինելու գրոյթը: Հարկ չկայ ընդգծելու այդ գրոյթի իմաստը, քանի որ Բունիթովն ինքն է ասում, թէ՛ «Այսպիսով, Ազրբէջանի ու Արանի թրքացման ընթացքը սկսուել է ղեռու քաղաքական բեմի վրայ արարների երեւալուց առաջ, Սասանեան կայսրութեան ընդերքում»: Չանտգան գրաւոր այդբերներ յիշատակելուց եւ իր միտքը «փաստարկելուց» յետոյ՝ նա դիմում է Հեքիթիների օգնութեան, գրելով. «Էստ ասանդութեան, օմեյյեան խալիֆ Մուաւիան մի անգամ հարցրել է հին պատմութեան գիտակ եմնցի Աբուդիր Շարիֆին, թէ՛ «ի՞նչ բան են թուրքերը եւ Ազրբէջանը»: Աբուդիր պատասխանել է. «Ազրբէջանը վաղուց ի վեր թուրքերով բնակեցուած մի երկիր է»: Բունիթովը վկայակոչում է նաեւ 1120 թուի պարսկական մի անանուն փաստաթուղթը. «Ազրբէջանը մի երկիր է, որը վաղուց դանուած է թուրքերի ձեռքին»:

Այս իմաստութիւնները քաղուած են յայտնի թուրանականներ Տոզանի եւ Կըրդիօլլուի գրքերից: Աղուանքի հայ դասուաններին վերաբերող հարցերի շուրջ Բունիթովը շատ է խօսում նաեւ 4-րդ դիւտում, Մահլ Մըրատեանի, Համամ Արեւելցու, Եսայի Արու Մուսէի եւ այլոց կապակցութեամբ: Ի դէպ, նշենք, որ այդ ժամանակաշրջանի մասին Յ. Գիւրտեանը ժամանակին յօդուածներ է գետեղել «ԲՍՁՄԱՎԷՊ»-ում (1958 թուի երեք յաւորական գրքերում՝ «Բարակ եւ Մահլ Իպն Մերատ», եւ 1959 թուի թիւ 1-2-ում՝ «Քանի մը փոքր յաւելում»:

ներ «Բարակ եւ Մահլ Իպն Մերատ» մե- նագրութեան» վերնագրով): Բունիթովը անդրադառնում է նաեւ այդ յօդուածների որոշ գրոյթներին՝ առանձին հարցերի առթիւ, բնականաբար, միշտ ժխտելով հանրայայտ հայ իշխանների հայ լինելը:

Բունիթովը մեծ տեղ է տալիս «Արանի ընկերային շարժումներին»: Նախ ջանում է հաւատացնել, թէ պաւլիկեան աղանդաւորական շարժումը ծագել է Աղուանքում ու այնտեղից տարածուել, այլ ոչ թէ Հայաստանում, ինչպէս ընդունուած էր մինչեւ հիմա: Իայց սա իր Հերթին: Բունիթովն, ըստ երեւոյթին, իր կեանքի նպատակն է դարձրել նաեւ պանդախելու Բարեկի անձն ու նրա հակաարտազան շարժումը, ուստի վիճարանում է արար, իրանցի, հայ եւ օտար Հեղինակների Հեա, Բարեկի անձն ու ապստամբութեան կուպակցութեամբ: Ենթադրում է, թէ վիճարանները պատմութեան մէջ առաջին անգամ կարծիք գոյնքն ու որոշները օղտագործել են որպէս օտար նուաճողների դէմ պայքարի խորհրդանշան: Երկրակցում է, թէ՛ «Բարեկի ղեկավարութեամբ խուրամեան ապստամբութիւնը Ազրբէջանի պատմութեան պայքարածառ էջերից մէկն է»: Եւ այլն: Ինչպէս յայտնի է, Բարեկի շփում է ունեցել եւ հայկական գաւառներէ ու հայ ղեկավար զործիշների Հեա, ունեցել է կողմնակիցներ եւ հակառակորդներ: Վերջապէս, ապստամբութիւնը ճնշուելուց յետոյ, փախել է Հայաստան եւ Մահլ Մըրատեանի կողմից բռնուել ու արարների յանձնուել:

Բարեկի ձերբակալման մանրամասնութիւնները տարբեր Հեղինակների մօտ որոշ տարբերութիւններով են արձանագրուել: Այդ վկայութիւններից մէկի համամայն, երբ Մահլ Մըրատեանը շղթայ է դրել Բարեկի ոտքերին, միաժամանակ բացակայել է. «Դու՛ ոչխարների եւ կովերի Հովիւ, քո ի՞նչ գործն է պետութիւն ղեկավարելը եւ քաղաքակա-

նուրբամբ զբաղուելը: Այստեղ Բարեկէ
կապակցութեամբ ուրիշ բան կ'ուզենա-
ինք նշել:

Բունիաթովը ակադեմիկոս Ե-
րեմեանի հետ վիճելիս, թէ ինչու հայ
իշխանները երես թեքեցին Բարեկէց,
զբուժում է:

— «Ձանդըդառնաւով այն բա-
նին, որ Ս. Տ. Երեմեանի տեղեկութիւն-
ները Միւնիքի եւ Արցախի մասին, որպէս
Բարեկէն հասցահատիկ մատակարարող
բազաների, ազբերների տունայնորով
չին հաստատում, մենք պէտք է նշենք,
որ Բարեկէ զաշնակեցներ շունչի հայ էշ-
խանների շարքում: Այդպիսիք միայն
աղուան իշխաններն էին՝ Միւնիք, Ար-
ցախ, Շաքի, Բայազան եւ այլ մարզերի
կառավարիները, որոնք, ինչպէս ճիշդ
կերպով ցոյց է տուել Հ. Մ. Ռոթմայ-
եանը, «Բարեկէի շարժման մէջ սոցիա-
լական վտանգ տեսնելով իրենց դասա-
կարգային շահերի գէժ, խզում են կո-
պերը Բարեկէց, դադարում են թարկուել
նրան, եւ այն: Թէ Ռոթմայեանը եւս
Միւնիքն ու Արցախը Աղուանք է համա-
րում: Մինչդեռ իրականում այդպիսի
բան չկայ եւ եթէ Բունիաթովը հայերէն
ի վիճակի չէ կարգալու, զէթ զբքի ու-
սերէն ամփոփումը կարող էր եւ պէտք է
որ ուշադիր կարգար: Եւ զանազան կար-
կասան մէջըրեւմներով Բունիաթովն
աւհա այսպէս է ամէն գէպըում կառու-
ցում իր գրքի խաբուտ շէնքը: Մենք մի-
այն ընդհանուր պատկեր տուինք գրքի
մասին: Այս բոլորին տեղեկանալուց յե-
տոյ՝ թող ով ուզում է Բունիաթովին
զիտնական համարի, իսկ նրա հրամար-
բած տպագիր խուլիգանութիւնը՝ գիտու-
թիւն:

Հայրենասիրութեան մասին իւրա-
յատուկ պատկերացում ունեցողները
Թերեւս նոյնիսկ հետուից-հետու հայրե-
նասիրութիւն յիշեցնող ինչ-որ բան տես-
նեն Բունիաթովի զատանցանքների մէջ,
քանի որ նա արտաքուստ, իբր, փառա-
բանում է «իբր» ժողովրդի անցեալը եւ
պատկերում «իբր» հայրենիքի մեծու-

թիւնը: Սակայն կենդանի Հայաստանի
ու հայութեան հաշուին ծաւալուն Աղբը-
րէջան երեւակայնիւ իսկական հայրենա-
սիրութեան հետ ոչ մի կապ չունի: Այս
պարագայում իսկական աղբրէջանցիու-
թեան նշույլ անգամ չի երեւում, այլ ա-
մէն զայսփոխի թրջութիւնն է կղզիու-
նեք ցցում: «Աղուանասիրութիւնն» էլ
ճառայեցում է բացառապէս թրջական
նպատակների:

Գ.

Բունիաթովի «Աղբրէջանը Դ-Թ-րդ
դարերում» գրքի հրատարակ գատուց մէկ
տարի անց Երեւանում լոյս տեսաւ Առ-
Մնացականեանի «Աղուանից աշխարհի
գրականութեան հարցերի շուրջը» վեր-
նագրով հարկւ 300 էջանոց, բայց վերին
տասնամանի խիստ բովանդակութեւն ու-
նեցող աշխատութիւնը: Պէտք է կրկին
յիշել, որ հայկական Արցախ-Ուտիք
երկրամասերի պատմութեան վերաբեր-
եալ վերջին ամբողջական գրքերը որպ-
ւել են մօտ 70 տարի առաջ: Վերջին
տասնամեակների ընթացքում հայ պատ-
մաբան դիտնականների ցուցարեքած ա-
նուշադիր վերաբերումը Արցախ-Ու-
տիքի պատմութեան հանդէպ՝ կէս առ
կէս հասկանալի եւ անհասկանալի է: Հայ
հեղինակները չէին կարող, անուշա-
անընդհատ ծածմնել տարրական ու ան-
վիճելի, այրբնական ճշմարտութիւն-
ներն այն մասին, թէ հայերը հայեր են
եւ իրենց պապերի ժառանգները: Վեր-
ջին 10-15 տարում Աղբրէջանում ծաւալ-
ւած կեղծարարական շարժմանը հակադ-
րելու գործն էլ դիտականից ասելի զա-
ղաքական արարք էր համարում եւ ան-
դամալուծում ճիշդ դիրքերից միջամտե-
լու ամէն մի կամք, ասպարէզը թողնե-
լով զարողչական մարմինների անպա-
տասխանատու պաշտօնեաներին: Եւ այդ-
պէս տարիներ անցան՝ մինչեւ համբո-
րութեան բաժակը լցուելը:

Մնացականեանի հիմնական նպատակն

է ներկայացնել Ե-18-րդ դարերի Հայ Աղուանքում, այսինքն Հայոց Արեւելից կողմանքում, մշակուած գրականութիւնը: Բայց որովհետեւ «Աղուանք» հասկացողութեան շուրջ զանազան թիւրմբբունումներ կան ընթացիկ գիտական աշխարհում, նա իր հեղինակային թառցիկ բացատրութիւններից յետոյ 80 էջ է յատկացնում հանգամանալից ներածութիւնը: Եւսի կանչ է առնում աղուանական գիր ու գրականութեան հարցի վրայ:

Բոլորին յայնն է, որ Մեթոդ Մաշտոցը ստեղծել է գիր նաեւ աղուանների համար: Եւ քանի որ այն ժամանակ հայրենակ Ուտք եւ Արցախ նահանգները եւս արդէն մտցուել էին Աղուանքի մէջ, ուստի սխալմամբ կարծողներ են եղել եւ կան, թէ այդ գիրը իբր ընդհանրական է եղել ամբողջ Աղուանքի համար: Մինչդեռ Մնացականեանը հեշտութեամբ աւելի քան սպացուցում է, որ Մաշտոցը աղուանական գիր ստեղծեց աղուանների, այսինքն երկրի բնակչութեան կէտի համար միայն, իսկ հայկական գաւառների բնակչութեան համար գործածութեան մէջ դրեց զոյութիւն ունեցող հայկական գիրը: Հետագայ դէպքերի բերումով, աղուանական գիրն ու թերեւս նաեւ սաղմոսային գրականութիւնն ունեցան աղուան ժողովրդի ճակատագիրը, այսինքն վերագան, իսկ Հայ Աղուանքում հայերէն մշակոյթը ծաղկեց՝ որպէս առհասարակ հայ մշակոյթի մի ինքնատիւնքեան հասկանալի եւ բաղկացուցիչ մաս: Ուրեմն, զուտ աղուանական զարգացած գրականութիւն չի եղել. ինչ որ Աղուանքի անունով մեզ է հասել՝ ձեւով ու խորքով ամբողջովին հայկական է, որովհետեւ Աղուանքում թուով, ուժով եւ որակով միշտ էլ հայերն են վճռական գեր խաղացել: Մնացականեանն իր աշխատութեան մէջ պարզում է մի շատ կարեւոր հարց, որը մինչեւ հիմա բարձրագույն էր մատնուած եւ թիւրյիմացութիւններէ մեծ մասի աղբիւր էր հանդիսանում: Դա պատմական Հայաստանի հիւսիսարեւելեան սահմաններ

րի հարցն է:

Շատ պատմաբաններ, միեւնոց առածին պարզապէս հաւատալով եւ առանց փաստերն առուգելու, այն տեսակէտն էին արմատաւորել, թէ 387 թուին պարսկա-բիւզանդական ճամաճայնութեամբ Հայաստանից պոկուած եւ Աղուանքին միացուած Արցախն ու Ուտիքը նախապէս արդէն, 6 դար առաջ, պատկանել են Աղուանքին եւ Արտաշէս Մեծն է խել նրանից ու կցել Հայաստանին, թէ իբր այդ նահանգներէ բնակչները սկզբում աղուաններ են եղել ու միայն հետագայում հայացել: Դրա համար առաջին հերթին վկայաբերում էին Ստրաբոնին ու Խորենացուն: Մնացականեանն սպացուցում է, որ ոչ Ստրաբոնը, ոչ Խորենացին, ոչ էլ ոեւէ մէկ ուրիշը այդ խմատով ոչ մի վկայութիւն չունի: Բոլոր վկայութիւնները ճիշդ հասկառու են առում, որ Կուր գետը Արտաշէս Մեծից դարեր առաջ սահման էր հանդիսանում Հայաստանի ու Աղուանքի միջեւ: Ստրաբոնը շատ լաւ էր պատկերացնում Կովկասի աշխարհագրութիւնը եւ յստակօրէն տարբերում էր այնտեղի երկրներն ու ցեղերն իրարից: Այդպէս էլ յունա-հռոմէական միւս հեղինակներն ու հայ պատմիչները: Իսկ ըստ Խորենացու, Արտաշէս Մեծը Ուտիքը եւ չրջկայքը խլեց ոչ թէ աղուաններից, այլ իրեն նախորդող նոյնպէս հայոց թագաւոր Երեւանդից՝ Երուանդեանների տոհմի վերջին թագաւորից: Այնպէս որ Ուտիք-Արցախը Հայաստանի կազմաւորման սկզբից եւեթ հայկական է եղել, բնակչները հիմնականում հայ եւ նրանց մայրենի լեզուն՝ հայերէնը:

Դեռ աւելին: Մնացականեանն իր ստումնասիրութեան ընթացքում բացայայտում է պատմական մի իրողութիւն եւս: Նա փաստերով համոզում է, որ ժամանակին Հայաստանին են պատկանել ոչ միայն Արցախն ու Ուտիքը, այլեւ Կուր գետի ձախափնեայ որոշ տարածութիւններ՝ մինչեւ Կովկասեան լեռնաշղթայ: Դա կամբեման դաւառն ու նրան արեւելիցից յարող որոշ շրջաններն են,

որոնք պայմանականորեն կոչում են Անդրկուրեան Հայք: Ուշագրտան այն է, որ ոչ միայն այդ շրջանները Հայաստանին մաս են կազմել, այլևս բնակչութիւնը եղել է հայ եւ հայախօս, թէեւ որոշ վերացի հեղինակներ չեն ուղում հաւատալ դրան:

Այդուհանդերձ, Մնացականեանը հաւատում է, որ «Կամբենան-Հերթի Հայութիւնը Հայաստանից անբաժան մընաց ու դիմացաւ մինչև 11-րդ դարը, որից յետոյ, վրացական եկեղեցու ազդեցութեամբ, սկսեց ձուլուել վրացիներին հետ»: Անդրկուրեան Հայքի առեւտրութեամբ, Մնացականեանը լայն բացատրութիւններ է տալիս եւ նրա մասը կազմող Փոքր Հայքի մասին (չլիտիւն եփրատեան Փոքր Հայքի հետ), վկայակոչելով նոյնպէս Պոմպիւրի արշաւանքի հետ կապուած իրողարձութիւնները, հայ պատմիչների հաղորդած տասնմին պերճախօս տուեալները: Այդ փաստերին իրազեկ էր եւ Չամչեանը:

Մնացականեանն այնուհետեւ կանգ է առնում Հայ Աղուանքի բնակչութեան հաւատալիքների, ծէսերի, կրօնական պատկերացումների եւ այլնի վրայ, մի անգամ եւս համոզելով, որ այդ բնակչութիւնը մինչև ուղիուծուծը հայկական էր: Յիշատակում է Արա Գեղեցիկի եւ Շամիրամի զրոյցները, Կուբ զետի փին դստուող «Անահիտեան սրբազան դաւանն» ու պաշտամունքը, «Աստղաբլուզ» սրբավայրը, Աղուանից աշխարհի նահատակուհու՝ Քազուհու վերաբերեալ զրոյցը եւ այլն:

Այստեղ մէջբերենք մի պարբերութիւն.

«Ընդհատելով փաստերի վկայակոչումն ու մեկնաբանութիւնը, — գրում է Մնացականեանը, — այժմ կարող ենք համոզուած ասել, որ Անդրկուրեան Հայքը, Ուտիքը, Արցախը եղել են պատմական Հայաստանի հնազոյն զաւանները: Երանց թուին է պատկանել նաեւ հետադարձ Արտաշէսեան նուաճումների մէջ մտնող եւ մարերից առնուած Կասպիանէ դաւառը: Վերջինս յաճախ է անցել ձեռ-

քից-ձեռք, մինչդեռ Ուտիքն ու Արցախը, չհաշուած տասնմին դէպքերը, եղել ու մնացել են Հայաստանի օրգանական մասը՝ մինչև 387 թուականը: Թէ՛ Ե՛րբ է Հայաստանից անջատուել Անդրկուրեան Հայքը, այդ մասին որոշակի տուեալներ չունենք: Հաւանական է, որ այն մի քիչ աւելի վաղ բռնադրուած լինէր, քան Ուտիք-Արցախեան երկրամասերը»:

Ապա շարունակում է. «Այժմ անդրադառնանք 387 թուականից յետոյ ընկած ժամանակների ամփոփ պատմութեանը՝ կապուած հայկական վերոյիշեալ զաւանների բնակչութեան հակատագրի հետ»: Մնացականեանը պատմում է Աղուանքում Արշակունիների մինչև 6-րդ դարի սկիզբը մնալու ժամանակաշրջանի (30-ական թուականներ) քաղաքական իրադրութեան, Աղուանքի հայերի դիրքի ու սրամազրութիւնների, պարսիկ Միհրան զորավարի՝ 30 հազար ընտանիքով Հայոց Գարդման դաւառում ամբողջում մասին:

Գարդմանը հայազն Առանշահիկ կամ Երանշահիկ տոհմի զաւառն էր: Միհրանեանները ամբողջ Աղուանքին տիրելուց առաջ յարձակման թիրախ էին դարձրել Գարդմանը, որի Առանշահիկ իշխանները ոչ միայն հայ բնակչութեան փաստական առաջնորդն էին, այլևս պաշարում էին ամբողջ Աղուանքի ինքնուրոյնութիւնը պահպանելու ուղղութեամբ: Ինչո՞ւ Միհրանը միջոցների մէջ խտրութիւն չէր դնում իր նպատակին հանեղու համար: Ծառ լանցած նա իր մօտ հրաւիրեց 12 հայ իշխանների եւ նենգօրէն զլխատեց նրանց: Նրա գործը շարունակեց ծոռը՝ Քաջ Վարդան անունով, 60 հայ իշխանների խնճոյքի հրաւիրելով, նրանց թուաւորելով ու զլխատելով, խնայելով միայն մէկին՝ Չարմիհրին, որ Միհրանեան տահմի փեսայ էր: Չնայած Առանշահիկների զլխին իջած հարածներին, նրանք, իրենց թիկունքում ունենալով հայ բնակչութեան ուժն ու համակրանքը, չեն վերանում, այլ ընդհակառակն, ժամանակ առ ժամանակ գլուխ են բարձրացնում եւ մարտահրա-

ւէր կարգում միւրանհաններին: Միւրանհաններն էլ իրենց հերթին ժամանակի ընթացքում կրօնափոխ, ազգափոխ եղան եւ լուծուեցին տեղական հայ բնակչութեան մէջ, վերջապէս դուրս մղուելով քաղաքական ասպարէզից: Մընացականները կանգ է առնում մանաւոր անձանց գործունէութեան վրայ՝ Սահլ Սմբատեանի, Յովհաննէս Իշխանի, Աբու Մուսէ Եսանշահի, Կարինի: «Ուշագրասն այն է, - ընդգծում է նա, - որ այդ հայրենիքը բոլորովին դուրս են գանում բուն աղանները: Նրանց անունն ի սպաս չկայ: Եւ դա պատմական իրողութիւն էր, որովհետեւ նրանք այդ ժամանակ արդէն, էթնիկական առումով համարեա՛ լրիւ վերացել էին, իսկ դրանից առաջ, սկըսած Վաչագան Զ-րդի մահից, դուրս էին գնում պետական գործունէութեան ղեկավար դիրքերից»: Զ-րդ դարում Աղանից Թաղաւորութիւնը նորոգած Համամ Բազրատունի Արեւելցու (նաեւ Յովհաննէս անունով), նրա ժառանգորդներ Փելլիպէի, Ատրնէրսեհի, Իշխանիկի գործունէութեանը անդրադառնալուց յետոյ՝ Մնացականները գրում է. «Շուրջ երկու դար, որոշ ընդհատումներով, տեւող այդ Թաղաւորութիւնը վերանալով իսկ, տեղի տուեց հայկական առան-

ձին իշխանութիւններին, որոնք զանազան ձեւերով յարատեւեցին մինչեւ 19-րդ դարը եւ որոնց ներկայացուցիչներն էին Ղարաբաղի մելիքութիւնները: (Ի դէպ, Սահլ Սմբատեանի եւ Համամ Արեւելցու ժամանակաշրջանի մասին բաւական նիւթ կայ եւ ն. Աղանցի «Բազրատունեաց փառքը» ուսումնասիրութեան մէջ՝ «Բազրատունիք Աղուանքում» եւ Վարցախի Բազրատունիքը բաժիններում: Տես՝ «Պատմական ուսումնասիրութիւններ», Փարիզ, 1948 թ., էջ՝ 125-151): Այնուհետեւ Մնացականները շարադրում է իր ասելիքը ոչ-անձանօթ Բունիաթովի խելաթիւրումների վերաբերեալ:

Ինչպէս ժամանակին յիշուեց, Հայ Աղուանքը մեր մասնագիտներին երկիրում կրում է տարբեր անուններ, որտեղ յաճութիւն է հոլովում «Արեւելք» բառը: Մնացականները ուշադրութիւն է դարձնում այդ կէտի վրայ եւ իրաւամբ ճշդում, որ այդ երկրամասը Հայաստանի նկատմամբ իսկապէս Արեւելք է եւ հայ հեղինակները այլ կերպ չէին կոչել, մինչդեռ Աղուանքի համեմատութեամբ հարաւարեւմուտք է ընկնում: Ուստի միանգամայն օրինական է Հայոց Արեւելից կողմանք արտայայտութիւնը, որպէս Անդրկուրեան Հայքի, Ուտիքի եւ Արցախի ամբողջութիւնը ընթացող իրական հասկացողութիւն:

Լ. Մ.

(Շար. 4)

Յ. Խ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

ԼՈՒՍԱԲԱՂՁ ԳՐԱԳԵՏԸ

Ու մեկնեցաւ կեանքէն, հաստատելով վերջնական ճիշդագոյնութիւն մը: Գ. Ս.

Իբր իմացութեան բերքի դաշտերէն հնձած՝ շարան մը հատորներու բերքը տեղաւորեց հայոց փոքր Աժուրն մէջ, ու անժամանակ եւ անվերադարձ մեկնեցաւ «ծուռ աշխարհ»էն...

Միթէ այս չէ՞ կոչումն ու նպատակը իմացական արտակարգ կարողութիւնով օժտուած մարդոց, որոնք զկու գան ու կ'երթան, իրենց ետին թողելով յիշատակելի եւ ուսանելի գործ մը:

«Վեց օրուան մէջ ամէլէ ու ծուռ շինուած աշխարհի ծուռ բաները» զննուլ, կեանքի եւ մարդոց թերիները ձաղկումի ենթարկող լուսարագ մը զօյանանը, ինքն ալ ամէլէ մեկնեցաւ, հրք իր բեղուն միտքն ու պայծառ տաղանդը տուածէն աւելին տալու տրամադիր եւ ընդունակ էր:

Հայ կեանքի փոթորկոտ շրջանի մը մէջ, տակնուվրայ եղած աշխարհի մը վրայ իր աչքերը լոյսին բացած Սդ. Պօյանեան բանաստեղծը, ընթացաւ այն ուղիէն՝ ուրիշ անցնող հայ մտածումին ընտիր մշակները ծաղիկ մը անեցուցին, լուսատու մտ մը վառեցին հայ դպրութեան խորանին առջեւ ու պլպլացող տառերը դարձան «յաւելուլ հրկնից»...

Ժամանակակից մտածողութիւնը՝ աւանդութիւն դարձած ըմբռնումներու աներկրայարէն հաւատալու տրամադիր չէ՛: Ինչ որ անցեալը բնորոշած ու աւանդած է յաջորդական սերունդներու, այսօրուան իմացական տարրերու օրոնում-

ներուն ընթացքին, զանցումներու կ'ենթարկուի յաճախ:

Երկնքի անասնաձանձութեան մէջ թւածող մարդը, տնքմունքի տարակուսանք մը կը սնուցանէ անյիղի՛ հաւատալիքներու մասին ու եթէ բացարձակապէս գանձը չի կրնար հրքի՛, ապա նաեւ հաւատքին խախտումը կը խլիտի իր մէջ:

Այս վերաբերումը միայն Սդ. Պօյանեանին ստեղծագործութեան մէջ չէ որ նշմարելի:

Վաղամեռիկ Պետրոս Դուրեանն էր, որ յանդգնեցաւ ձօնաբերիմ անուանել Աստուածը, ու իր պաղատանքին ու ցատումին արդիւնքն է հայ գրականութեան մէջ դասական դարձած իր Տրտումը:

Ու սպասելի էր, որ պայծառամիտ Պօյանեանը «Վեց օրէն ամէլէ ստեղծած աշխարհը» ծուռ տեսէր ու այդ աշխարհին մէջ ծուռ մարդոց հոգեվիճակը քննարկէր ախտաբանական ճարտարութիւնով, ու լիզուական խորագանումի ենթարկէր շարութիւնը, նենդութիւնը, նախանձը, ատելութիւնը, ու այն բոլոր նկարագրային պակասութիւնները, որոնց պատասխանատուն՝ արարչութիւնը կը համարէ...

Մուսսատիի յեռնալանջէն տեղահանուած ու դառն կեանքի յորձանուտին մէջ ձգուած գրագէտը, «Աստուածափորձ» կը կատարէ երկնայինին դէմ յանդիման, որ մեր համապարփակ ցաւին ու արիւնին ի տես, Պիղատոսի դերին մէջ մը նայ:

Իր հերոսներէն թուման է խօսողը — շն կը հայհոյեմ: Սասանան զործս զէջ կը ասնի, յետոյ զեղի կու գամ, տունը շնս ըլլար, ո՛ր կ'երթաս արդեօք Աստուած... Անգամ մը որբի մը համար եկայ, անգամ մը իմ շունս Ծեծած էին եկայ, անգամ մըն ալ մեր ժողովուրդը կը հանէին զիւզէն, եկայ. դուն բնաւ ասնոյ մէջ չես ըլլար»:

Ու բանաստեղծը, յուսահատ տնօրինուած կարգ ու սարքէն, կը վերադառնայ իր Հոգեկան ու ներգործօն ուժին, եւ կ'ուզէ նորը կերտել որ ըլլայ աւելի կատարելու ու լրիւ:

«Շարժել անշարժութիւնը, տեղափոխել, մղել, հանել, շրջել, քանդել, ու վերստեղծել ամէն բան, Հողի, երեւոյթ, բմբուռի»:

Երազարազ թանաստեղծին որտի ցանկութիւնն է, որ կեանքը վերանորոգելի ու գէշը վերափոխուի լաւի, չարութիւնը՝ բարութեան, ասելութիւնը՝ սիրոյ, խաւարը՝ լոյսի, եւ սրգարութիւնն ու ճամբարութիւնը տեւաբար շողան մարդու կեանքին վրայ:

Ասկէ աւելին չեն ուզած, մարդով ու կեանքով ստեղծագործ հանաքները:

Պօյանեանի զբաղանջութեան մէկ ուրիշ արժեքաւոր յատկանիշը, իր մշակած ու գործածած հայերէնն է:

«Ամենասուկալի ժողովանդութիւնով» ստեղծագործող բանաստեղծին միտքը կը յորդի զաղափարներու ներմղումով, ու ան՝ իր բնիկը աւելի ազգու դարձնելու համար, կը մղուի նոր բառեր կերտելու, նոր դարձուածքներ գործածելու իր երկնումին ցայթքը լրիւ արտայայտելու համար:

«Հողը»ին հեղինակը, բարի, մեր սերմնացանի նման, իր Հոյակերտ բառերը բուռ-բուռ կը նետէ մեր մշակոյթի արտի տարածքին, որոնք կողուած են կենսաւորուելու մեր լեզուի բուրաստանին մէջ:

Մասնաւորապէս արեւմտահայերէնի

փոփոխութիւնն ու կեղեցկութիւնը, ճարտարապետած են մեր տաղանդաւոր գէժ-գերը, սկսած ինտրոյսէն, Մեծարենցէն, Վարուսանէն, Սիամանթոյէն, Զարդարեանէն, Տէրեանէն, Օշականէն մինչեւ Գուրգէն Մխիթարեանն ու Պօյանեանը: Բանաստեղծ Եզ. Պօյանեան, իր նորակերտ բառերու պաշարով, արտայայտութեան նոր դարձուածքներու ինքնատիպ ճոխութիւնով, ընթերցողը կը մղէ ինքնարեւարար կարգալ իր ստեղծագործութիւնը, հիացումով ու հոգեկան տառնձին բաւարարութիւնով:

Եւ այս պարագան՝ հեղինակի մը յատկանշական արժանիքը կը հաստատէ ու ընթերցողը կը հետեւի անոր երկնումի բացումներու գմայլանքին:

Երբ մեր յետնորդ սերունդները ուզեն Ծանօթանալ փոթորիկի բռնուած ու տեղաշարժեցան զանուութիւնը ճաշակած սերունդի մը հոգեվիճակին, անպայման պիտի կարգան վաղաժամ մեկնած բանաստեղծին ստեղծած զբաղանջութիւնը, մասնաւորապէս անոր Յամար Տարագրին:

Ճ

«Հող»երգու բանաստեղծ, ինչո՛ւ այդքան աճապարանքով մեկնեցար յորդերով ու մտածումներով լեցուն կեանքէն, չէ՞ որ զիւղին սայլերը ցորենով բեռցուած ու ծոցուոր հարսներու նման նորէն պիւղ պիտի վերազառնան, ու ամբարները լեցուն ջրտինքի ոսկիով, սարբիններէն կախուած խաղողը նորէն պիտի քամուի ու հեղու գինու կարասներուն մէջ, ու եռլիզ հուժկու մշակները պիտի բոլորուին նահապետական սեղանին շուրջ, վերացումով երգելու համար Հացից երգը, զոր լուսատիպ զբնիկբայով՝ անաւարտ ճոյս իր կեանքի կէս ճամբուն:

Շիտակ զբաղէտ, շիտակ մարդ, «նեկայութիւնը այստեղ է, իսկ դուն չկաս, ինչո՛ւ»...:

Յ. Խ. Մ.

Հար Գիրքեր



«Ա. Արփինէ հեղինակութիւն մըն է եւ յիմ իր ընթերցողները: Մեծ պիտի սպասեմք իրմ ստորագրումը մեր ստեղծագործութիւններու: Իրեն կը սըմայ մարտնոր հետազոտութիւններով լայն աշխարհ համել մարդկային հոգիի ծախնբու այլևայլ երեսները, որ իր մասագիտութիւնն է»:

« ԿԵԱՆՔԻ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ »

(Ա. ԱՐՓԻՆԷ)

Ամէն մէկ գործ, Ա. Արփինէէն, առաւելած հոգիի մը պատմութիւնն է: Ամէն մէկ տիպար՝ հոգեկան վիճակի մը պատկերը: Քէն. քանի մը թեթև գիծերով տրուած են, բայց հոն կ'ուրուազծուին մարդկային ընկերութեան զոհերուն ահորինակ վիճակը, անոնց սիրտը ալեկոծող ցաւերը, իրենց ամբողջ խառութեամբ:

Լուսկիաց, բարի, իրենց իրենց ճակատագրին հետ հաշտ մարդիկ են Արփինէի տիպարները, ո՛չ յանդուգն, ո՛չ ըմբոստ, ո՛չ շար, մանաւանդ ոչ շար: Այս վերջին տիպարը չենք տեսներ որպէս գործող անձ, կը զգանք գոյութիւնը, իր ետին ձգած աւերովը:

Արփինէի հերոսները այնքան մարդկային են որ հեշտօրէն հաղորդակից կ'ըլլան ընթերցողին հետ: Անոնց մասին կարելի չէ չմտածել ընթերցումէ յետոյ,

նաեւ, հեղինակի մէջտեղ նետած հոգեբանական հարցերու մասին: Կարգ մը մեկնութիւններ կրնան համողիչ չթուիլ, ընթերցողներէն ոմանք հակառակ կարծիքներ կրնան ունենալ, սակայն այդ բոլորը մեր միտքը զրազեցնել չեն զաղբիւր:

Պատմելու ամենապարտաւոր ձեւն է յուշագրութիւնը: Ետեւ կը հետեւին այդ ձեւին, բայց շատ թիչ են այս մարդին մէջ յաջողութիւն գտնողները: Գուցէ ճամբուն ձեռնտու ըլլալը հեշտ կը թուի եւ ընթացքը՝ շացուցիչ: Սակայն, Արփինէ իր յուշերը կը պատմէ ո՛չ թէ իր անցեալէն քան մը ըսած ըլլալու, այլ իր ճամբու ընթացքին գտած տիպարներու Գարսէփ-Էրիսփիւ վիճակը պատմելու համար:

Այս ձեւը, նաեւ անոր ոճն ու լեզուն, պատմութիւնը կառուցելու կամ գործո-

զուգորդուն մը առաջ անհետու համար
 ստեղծուած վիպական էնթրիքներու ե--
 ղանակը, երբեմն ի նպաստ երբեմն ի
 վնաս հեղինակին՝ վկայութիւն մը կըր--
 նան ըլլաւ, սակայն այս գրողը ինքզինք
 կը պարտազրէ, երբ հարցը կը վերաբերի
 տիպարներ զտնկերուն կամ ստեղծելուն:

Մէկը, օրինակ, կը կսովածի իր
 կնոջ հաւատարմութենէն եւ իր միակ
 զաւակը ապօրինի կը նկատէ: Տղան ե--
 յիտասարդ է արդէն, ու ամուսնացած,
 ծանօթ՝ հօրը տրամադրութեանց: Երբ
 «հօրը» մահուան լուրը կ'առնէ ու կ'եր--
 թայ իր մարդկային պարտականութիւնը
 կատարելու՝ կը նկատէ իր դէմքին նոյ--
 նանման պատկերը մահուան անկողնին
 վրայ հանդիւած հօրը անկենդան դէմքին
 վրայ:

Պարզ կտակածամտութեան զս՛շը ե--
 ղող սա ընտանիքին երեք անդամներու
 պարզան՝ շա՛տ մը պատճառներ ունի
 ընթերցողին մասծնել տալու: Թէեւ մենք
 ալ պիտի չկարենանք եզրակացութեան
 մը յանդիւ, բայտարութիւն մը տալ
 ինչորին: Մտք մը՝ որ իր աչքին առջեւ
 ունի մանուկ մը, զոր իրը չի նկատեր,
 բայց իրն է: Կին մը՝ որ անհաւատարիմ
 կը նկատուի իր ամուսնէն եւ հանրու--
 թենէն, նոյնիսկ իր հարազատ զաւկէն,
 որ չի կրնար իր անծեղութիւնը հաստա--
 տել: Երիտասարդ մը՝ որ ինքզինքը ա--
 պօրինի զաւակ մը կը կարծէր ու հեռա--
 ցած էր իր ծնողէն, եւ, օր մըն ալ,
 հօրը մահէն ետք, ճշմարտութիւնը կը
 տեսնէ, երբ հայրը արդէն դիակ մըն է:
 Երկրորդ նմոյշ մը.

Ա. Ընդհ. պատերազմին, երիտա--
 սարգ մը զինուոր կ'երթայ Թուրք բա--
 նակին, ու նշանածէն կը բաժնուի փո--
 խազարձ խոստումներով ու երդումնե--
 րով: Տարիներ կ'անցնին: Տղան հետքը
 կը կորսուի: Մեռած կը կարծեն: Երի--
 տասարդութեան հմայքը կը հեռանայ
 աղջկան դէմքէն: Օր մըն ալ տղան երե--
 ւան կու գայ... սակայն աղջիկը կը
 մերժէ անոր բարեկամեցողութիւնը ու
 իր այնքան սպասած նշանածը կը զիջի
 իր կրտսեր քրոջը:

Ուրիշ պատմուածքի մը մէջ՝
 Ուրիշ աղջիկ մը ամուսնական ամէն
 առաջարկ կը մերժէ, իր մեռած նշանա--
 ծին հանդէպ շփեցանչելու համար: Տա--
 րիներ յետոյ կը հանդիպի իր նշանածին
 նմանակը եղող երիտասարդի մը: Դժ--
 բախտ աղջկան հողիին մէջ անակնկալս--
 ընէ կ'արթննայ սիրոյ զգացումը ու ան--
 զուսպ պահանջով մը զինք կը մղէ դէպի
 այդ անծանօթ տղան, որ, կը պարզուի,
 թէ արդէն ամուսնացած է:

Մեռած տղուն սէրը, որ տարիներով
 պահուած էր մեծ գուրգուրանքով այդ
 աղջկան մօտ, անոր նմանակին առջեւ
 ունեցած յուսախաբութեամբ կը փըլ--
 ուրէի, կ'ոչնչանայ, կ'անէանայ: Աղջիկը
 կը զառնայ դէպի բնական կենք ու, ի
 վերջոյ, կ'ընդունի իրեն ծանօթ երիտա--
 սարդի մը առաջարկը:

Առնուազն յանդիւնութիւն կ'ուզէ
 հոգեբանական նման վիճակ մը մէջտեղ
 դնելու փորձը ու Արփինէ զուրկ չէ այդ
 յանդիւնութենէն:

Հետաքրքրական խորք մը ունի նոյն--
 պէս «Հա՛յ» քէ օտար» պատմուածքը:

Հայ աղջիկ մը, մօրը պնդումներուն
 անտարժ, կը մերժէ իր օտարազգի բա--
 րեկամին ամուսնական առաջարկը եւ
 հայ երիտասարդի մը հետ կը կապէ իր
 բախտը: Տղան կը դաւէ նշանածին եւ
 օտարուհիի մը հետ կ'ամուսնանայ: Տա--
 րիներ յետոյ, աղջիկը կը տեսնենք ա--
 մուսնացած, սակայն չենք զիտիր ա--
 մուսնին ազգութիւնը,-- «Հա՛յ» յէ օ--
 տար»:

Քանեկերկու նմանօրինակ պատ--
 մուածքներ կը կազմեն Ա. Արփինէի
 «Կեանքի կատակերգութիւնը» անունը
 կրող հատորը, ուր յաճախ կը հանդի--
 պինք յախոյ ստեղծագործութիւններու:

Մենք ծանօթ ենք ժխտական տի--
 պարներու զործած սեփրներուն: Դրա--
 կան տիպարներու մօտ ռճրագործութիւ--
 նը անհարազատ է. իսկ Ա. Արփինէ կը
 յանդիւնի հասնել մինչեւ հոս ու նոյնիսկ
 կը յաջողի:

«Ատուածոյ շա՛նչին տակ» հորո--
 ւջըրուած է մէկ պատմուածքը, որուն

հերոսը, Մթաթ, «վերջին ծայր սովաւա- յօս», սօւր, քափանցող աչիւրով, նիւար սու բարձրահասակ», շարքաւորէն աշխատող ու երկարօրէն թերթ կարդացող ազարակապան մըն է :

Վերի ստորագիծները սուինք՝ աւելցնելու համար, թէ Արփինէի, ըսենք իր հերոսահիներուն, սիրած, ակնածած այր մարդու տիպարը կը ներկայացնէ Մթաթ, որ, գէշ մարդ մը չէ, ընդհակառակն :

Իր կնոջ մահէն թիչ ետք, Մթաթ կը վերամուսնանայ իր աղջկան ընկերուհիին հետ : Այս անյարմար ամուսնութենէն դժուար՝ միակ աղջիկը ազարակը լքած՝ կը հեռանայ անծանօթ ուղղութեամբ :

Արփինէ մեզի չ'ըսեր, յատկօրէն, թէ ինչպիսի պայմաններու մէջ իրարու մօտեցած են այդ երկու սրտերը, զլուխ անել կարենալու համար նման անյարմար ամուսնութիւն մը : Կայ, նոյնիսկ, որոշ ճիշդ մը ընթերցողին միտքը զէպի անորոշութեանց տանելու համար :

Արփինէ կը սիրէ նման խաղեր : Երջանիկ չէ, սակայն, Մթաթ, զուտապաղ մարդու աչիւր ունի : Նման պայմաններու մէջ ամուսին մը իր բովանդակ միջոցները ի գործ պիտի դնէ իր երիտասարդ, չչքնաղ կողակիցը առաւելադոյն զոհացնելու, երջանկացնելու, տարբեր տարբերութիւնը, ազնիւ վերաբերումներով, փայտայանքներով ու զոհողութիւններով ծածկել կարենալու համար, ի զին նոյնիսկ շփացնելու այդ երիտասարդ աղջիկը, փոխադարձաբար ինքն ալ իր կողմէն, կնոջը խանդովը գինով, իր կոտորած երիտասարդութիւնը վերապրելու համար :

«Իմս է այդ քանկագին արարածը, բայց գայմ կրնամ խիլ ինձմէ...» :

Կը մասհոգուի տեսարար Մթաթ : Գործող շար անձ մը չկայ հոս, սակայն շարութիւնը կը ծնի ոչինչէն, տուանց պատճառի :

Գեղանի աղջիկը, որ միս միտակը, լքուած էր քաղաքի մը չքաւորութեանը մէջ, ազարակի մը տիրուհին կ'ըլլայ :

Ոչինչ ունի իրեն պակասող, սակայն իր սէքը կը կապուի կատուի ձագուկներուն : Իրեն համար կենսական զգուսանքն ու սէքը չի գաներ ամուսնէն, որպէսզի կեանքին իմաստը եզրը ապրումներով գինովնար անոր թեւերուն մէջ եւ իր հելտանքովն իսկ գինովցնէր զայն :

Մթաթ այդ կատուի ձագուկներուն ցոյց տրուած դուրզութեանքէն նախանձիկ կը սկսի ու մէկ-մէկ կը խնդէ գանձնք իր իսկ մասններովը եւ կը նետէ իր օգնականին՝ Մայքի ոտքերուն առջեւ՝ յանձնարարելով որ տանի եւ ազարակին մէկ անկիւնը թաղէ մարմինները :

Կարեկցութիւն մը կը նկատուի այս տղուն մօտ զէպի իր տիրուհին, Լօրան, որ անտանելի կը դառնայ, ի վերջոյ : Կ'որոշէ ձգել գործը եւ հեռանալ այդ տաւաղէն :

Մինչ այդ՝ Լօրան, մանուկի մը նման անմեղ, բոլորովին անտեղեակ է իր շուրջ անցած դարձածէն :

Նախանձի վզացումը այլք աւ այլք բարձրանալով՝ ազարակտպանը կը մղէ որ իր կինը խնդէ... սակայն իր փորձին մէջ կէս կը մնայ, որտի տալանապ մը զինք գետին կը տապալէ : Կը մեռնի :

Չենք զիտեր շարունակութիւնը : Լօրան միտակ է նորէն :

Մայք համակրութիւն մը ունի այդ խեղճ կնոջ հանդէպ, իր մեկնումի ծրարէն կը հրաժարի՝ անպայման :

Ընթերցողը չի կրնար կարգաւ ու անցնիլ այս պատմութեանը, որ Չլ էջերով մեղի կը արուի, սակայն վեպի մը բովանդակութիւնը ունի :

Եզրակացութիւն մը չի կրնար ըլլալ հոս :

Արփինէ հեղինակութիւն մըն է եւ ունի իր ընթերցողները : Մենք պիտի սպասենք իրմէ ստորագրուած նոր ստեղծագործութիւններու : Իրեն կը մնայ նորանոր հետազոտութիւններով լոյս աշխարհ հանել մարդկային հոգիի ծաղեւուն այլիւսլ երեսները...

Որ իր մասնագիտութիւնն է :

Պ. Թ.

ԱԼԵՔՍԱՆԴՐ
ԿԻՆՋՊՈՒՐԿԻ
ԵՒ
ԻՐ
ԸՆԿԵՐՆԵՐՈՒ՜
ՊԱՐԱԳԱՆ



ԱԼԵՔՍԱՆԴՐ ԿԻՆՋՊՈՒՐԿ

Սորհրդային երկիրներու մտատրականութեան համար, վերջին տարիները, Սինեալսկիի եւ Դանիէլի դատավարութենէն ու դատապարտութենէն ազդին ժանաւանդ, ուզողակի մղձաւանջային տարիներ եղան: Լուս կամ բարձրաձայն զանգատներ սկսան լսուիլ կայսրութեան բոլոր ծագերէն: Առ այդ, ծանօթ դէմքեր, ինչպէս Սոլժենիցինը, Վոզնեսենսկին, Կովերինը եւ ուրիշներ, ընդարձակ պրութիւններով դիմեցին զրոզներու միութեան շարժումներին, Սորհրդային կեդրոնական թերթերուն ու կառավարութեան, պահանջելով անոնցմէ ստեղծագործական ազատութիւն, մամուլի ազատութիւն եւ զրաքննութեան վերացում, յանուն ժարգ էակին արժանապատուութեան, անհատական արժանիքներու ծաղկման, թոխներուն, արուեստին:

Յայտնուած այս բաղձանքները նկատի շունուեցան: Ընդհակառակն: Իշխանութիւնները աւելի խստացուցին իրենց սեղմումները: Պատահեցան ծանրակշիւ նոր դէպքեր, հետեւեալները.—

Սինեալսկին ու Դանիէլը համակեդրոնացման ջամբարները առաջնորդելէ անմիջապէս ետք՝ քաղաքացիական իրաւունքներէ զրկուեցաւ Վալէրի Թարսիսը:

Յանուն ստեղծագործական ազատութեան տարած իր պայքարին համար՝ իսպախութիւն մը շղթայազերծուեցաւ Անտրէ Վոզնեսենսկիի դէմ: 1967 Նոյեմբեր 15-ին, երեք տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ 29 տարեկան լրագրող մը՝ Վիաչեսլաւ Չերնովիլին, որ բողոքած

էր 1965-ին բանտ նետուած ուքրանացի մտաւորական 20 ներկայացուցիչ-նհրուն ի խնդիր:

Նոյն տարուան Մարտ 25-ին, քանըհինչ այլ գրողներ ձերբակալուեցան, որոնցմէ 11-ը Հոկտեմբերեաննհրու մէջ թիմուեցան եւ միւսները սզատազրկուեցան կրկին:

1967 Սեպտեմբերին, իր կարգին, երեք տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ բանաստեղծ Բուկոփոկին:

Անշուշտ, կան տակաւին մեզի անծանօթ ուրիշներ, ուրիշ ըմբոստներ, որոնց հանդէպ ցուցութեամբ վերաբերումը տարբեր չեղաւ:

Սինեափոկիի եւ Դանիէլի դատաւարութենէն ետք, սակայն, ամէնէն աղմկալի պարսպան եղաւ Կինզպուրկի եւ իր ընկերներուն դատաւարութիւնը: Հակառակ անոր որ երկու ամիս անցաւ Մոսկուայի մէջ կատարուած վերջին այս դէպքին վրայէն, համաշխարհային մամուլը տակաւին կը շարունակէ սիւնակներ յատկացնել անոր:

Կինզպուրկի եւ իր ընկերներուն առիթով պարզուած երեւոյթին մենք չանդարդարմանք: Արձանագրենք դոնէ փաստը:

1966-ի վերջերուն, Մոսկուայի մէջ լոյս տեսաւ «Ֆենիքս 66» անուն ընդլատարկեայ տարեկէրքը: Անոր մէջ դրուեցիննհրու ունէին բացատրար երիտասարդներ:

Տարեկէրքին ընդհանուր մթնոլորտը դժգոհութիւնն էր, դժգոհութիւն՝ իշխանութիւններուն դէմ, ստեղծագործական ազատութիւնը կաշկանդող օրէնքներուն դէմ, նախասիրութիւններու առջեւ քաշուած թուրքերուն դէմ, գրաքննութեան դէմ:

Շատ շանցած, իշխանութիւնները ստուգեցին «Ֆենիքս»ի աշխատակիցներուն ինքնութիւնը եւ սկսան ձերբակալութեան: 1967 Յունուար 18-ին բանտարկուեցաւ Մուրի Գալանսկոյը, յաջորդ օր՝ Ալեքսէյ Գորբոլովսկին: Իսկ երեք օր ետք, Մոսկուայի մէջ, Պուշկինի արձանին առջեւ, բանտարկուած գրողներուն ի պաշտպանութիւն կատարուած ցոյցէն ետք, ձերբակալուեցան ցոյցին մասնակցած Ալեքսանդր Կինզպուրկ եւ Նատալիա Լաշկովան:

Այդ ձերբակալութիւններէն ետք, պարզուեցաւ, որ «Ֆենիքս»ի խմբազէրը Կինզպուրկն էր, որ նոյն ատեն, փաստաթուղթերու լայն օգտագործումով մը, տարեկէրքին մէջ պարզած էր Սինեափոկիի եւ Դանիէլի դատաւարութեան կողմնակալ բնոյթը: Պարզուեցաւ նոյնպէս, որ նոյն բանաստեղծը դատապարտուած նոյն գրողներուն արդարութիւն ընող եւ «Սպիտակ գիրք» անուն հատոր մը խմբագրած էր եւ յաջողած անկէ օրինակներ անցնել արտասահման:

Կինզպուրկ եւ իր ընկերները, ամբողջ տարի մը բանա մնալէ ետք, Մոսկուայի քաղաքական դատարանը այս տարուան Յունուար 8-էն մինչեւ 12 դրադեցաւ անոնց հարցերով եւ տուաւ իր վճիռը, որ յաջորդ օրն իսկ հազորդուեցաւ «Վիչերնիանա Մոսկուայ թերթին միջոցով»:

«Վիտներու» եւ մեղադրեայներու, ինչպէս նաեւ իրեղէն վկայաբիւթներու հիման վրայ, դատարանը վերայիշեալ անձնատուրքիւթները յոնցաւոր նկատեց արտասահմանեան հակախօսքերուային կազմակերպութիւթներու հետ կապեր հաստատած ըլլալուն համար: Դատարանը Քայա-նրսովը դատապարտեց եօթը, Կինզպուրկը՝ հինգ, Դորբովսկիին՝ երկու, եւ Լաշովան՝ մէկ տարուան բանտարկութեան:

Հագիւ վճիռը հրապարակուած՝ ստալինեան շրջանի յայտնի դիւա-

նազէս Լիտվինովի թող, Պավէլ Լիտվինով եւ Հինգ տարուան թիապարտութեան դատապարտուած Եուրի Դանիէլի կինը՝ Լարիսա Դանիէլ միացեալ բողոքադրով մը դիմեցին խորհրդային մտաւորականութեան եւ ամբողջ աշխարհին, աշխարհի՝ մտաւորականութեան, որպէսզի ձայն բարձրացնեն եւ մարդուն սպասութիւնը խեղդելու ձգտող «Ստալինի ժառանգորդներուն» այս նոր դաւը օրէնքի կարգ չանցնի կրկին, ձայնող այս անգամ եւ խորհրդային աշխարհի մտաւորականութեան շնչառութեան առիթ արուի այլեւս:

Կինզպուրկի եւ իր ընկերներուն ղէմ արձակուած վճիռը եւ Պավէլ Լիտվինովի ու Լարիսա Դանիէլի ստորագրած բողոքագրիներուն արտասահման անցած պատճենները ուսմբի պէս ու միաժամանակ պայթեցան:

Լիտվինովի եւ Լարիսա Դանիէլի բողոքներուն յաջորդեցին ուրիշ բողոքներ: Խորհրդային Յձ մտաւորականներ՝ Պրեժնեւին, Քոսիկինին եւ Պոսկորնին ուղղուած նամակ մը գրեցին, որով ստորագրեալները արդար ընդվզումով մը կը մերժէին ըլլալ «անցեալի շարքաստիկ մեքանիզմը վերականգնման» վկաները:

Ուրիշ հրեք ղէմքեր, խորհրդային մտաւորականներէն զարձեւել, ի տես «գանդաղ կերպով, բայց անշեղօրէն ընթացող ստալինիզմի վերականգնման գործադրիչներուն», խորհրդային ղիտութեան, մշակութի եւ արուեստի ներկայացուցիչներուն մօտ «խորախոր տեսանկի խօսքերով» ղիմումներ ներկայացուցին, որպէսզի անոնք «յաւուն մեր երկրի նախապայքիմ ու պատուին» բարձրացնեն իրենց բողոքի ձայնը՝ ղընդդէմ նոր Ստալիններու եւ Եժովներու վերահաս վտանգին:

Աւելի ընդհանրական եւ փոթորկալի եղան արտասահմանի մտաւորականութեան ելոյթները:

Արեւմտեան Պերլինի մէջ, աւելի քան շորս հազար ուսանողներ եւ փոթորեւորներ ցոյց մը ըրին եւ բողոքագրի ստորագրեցին տրուած վճիռներուն ղէմ:

Ճրանասալի մէջ, «Ար է փրօկրէ» մախակողմեան կազմակերպութիւնը նոյն նպատակով միթինի մը կազմակերպեց, որուն մաս կը կազմէին երեսունէ աւելի յայտնի մտաւորականներ, ի շարքս որոնց Նոպէլեան մըրցանակաւորներ՝ Ալֆրէտ Քասթէր եւ Փաղ Մօրօ:

Սթոքհօլմի մէջ՝ նորէն ցոյց: Բողոքագրիներով հանդէս եկան նոյնպէս՝ Հոլանտայի գրողներու միութիւնը, Փրանսացի 18 գրողներ: Ու տակաւին Շուէտիոյ մտաւորականներէն 50 հոգի, եւ ուրիշ գրողներ, ուրիշ կազմակերպութիւններ, հարիւրաւոր անհատ մտաւորականներ, հազարաւոր թերթեր, արուեստի ներկայացուցիչներ:

Թէ՛ համայնաւար աշխարհի մտաւորականները եւ թէ՛ ոչ-համայնաւար երկիրներու մտաւորականները անարդար ու խիստ դատապարտելի կը ղանէին երիտասարդ մտաւորականներուն ղէմ կիրարկուած պատժական այդ միջոցները:

Կինզպուրկի եւ իր ընկերներուն դատավարութիւնը նկատուեցաւ Սինեալսկիի եւ Դանիէլի դատավարութեան տեսակ մը շարունակութիւնը, ա՛յն տարրերութեամբ միայն, որ մինչ Սինեալսկիի եւ Դանիէլի դատավարութեանն առաջ ու դատապարտութեանն ետք, խորհրդային թերթերը յայնօրէն անդրադարձան արտասահմանի մէջ ղիբք ու յօդուած հրատարակելու առած ըլլալու անոնց «մեղքերուն», յայնօրէն շահագործեցին երեսօրթը, Կինզպուրկի եւ իր ընկերներու պարագային, սակայն, պահեցին քար լուսթիւն մը:

Յրկու այս կեցուածքներուն երկու շարժառիթները չվրիպեցան դիտողներու ուշադրութենէն:

Դուրսը դիրք ու յօդուած հրատարակել տուող մարդոց դէմ կարելի էր տակաւին ամբողջաբարութիւն ընել ու փոշի ցանել մարդոց աչքերուն, բայց յետ-ստալինեան շրջանին հասակ նետած ու Մոսկուայի սրտին ընդլատակեայ թերթ հրատարակող ազատութեան ծարաւի երիտասարդութեան պարագան տարբեր էր, իշխանութիւններուն համար թիչ մը անյարմար, թիչ մը բարդ: Իշխանութիւնները շուզեցին որ ժողովուրդը, մասնաւորաբար երիտասարդութիւնը տեղեակ ըլլայ ազատութեան եւ արդարութեան ծարաւներ ատարկայացնող երեւոյթներու, կարելիութիւններու, սարսափելով, ի հարկէ, նոր խմորումներու հաւանականութիւններէն:



Ահաւասիկ ճիշդ այդ պատճառով, երիտասարդ գրողներու ձեռքակալութեան բուն շարժառիթները՝ Վենիստը, Վայիտակ գիրքը, կամայականութիւններու դէմ անոնց ընդվզումները, ստեղծագործական ազատութեան բուն տենչը եւ նման բաները անստեղծացան ու մեքենայացուցանու ուրիշ դաւ մը անոնց դէմ և դատապարտուեցան ժարտասանման հսկայ-խորհրդային կազմակերպութիւններու եւ ամերիկեան գործակալութեան հետ անուղղակի կապեր ունեցած ըլլալու՝ երեւակայական յանցանքներով:

Ճշ որովհետեւ դժուար էր երիտասարդ գրողներուն ազատութեան տենչը խնդրոյ ատարկայ դարձրնել, դժուար էր անոնց հակախորհրդային ըլլալու հեջիաթը հիմնաւորել եւ դժուար էր ստալինեան մեթոտներով հրապարակային զիտատմանութիւնները կորզել, իշխանութեան հարկ եղած մեղքերը փաթեթելու համար մեղադրեալներու վզին, դռնբաց յայտարարուած զատակարութիւնը տեղի ունեցաւ դռնփակ խեղկատակութեամբ: Թոյլ չտուին մեղադրեալներու ազգականներուն ներս մտնել, շարտօնեցին արեւտեան թղթակիցներուն ներկայ ըլլալ: Դատեցի՞ն...



Յետո՞յ: Կիրարկուած միջոցները չեն կրնար մարդուն մէջ ընթել ազատութեան տենչը ու յաներժացնել ահաբեկչական մթնոլորտը: Մակընթացութիւնը սկը-աւարեկչական մթնոլորտը: Մակընթացութիւնը սկսած էր շուտով պիտի տիրանայ իր արդար իրաւունքներուն:

ՆԱՐՆԵՐԸ.- Վերէն վար՝ Ալեքանդր Կիմպարիկ, Նատալիա Լաշկովա, Յուրի Կալամակով եւ Ալեքսեյ Դարբովայսիկ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԳԷՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՆՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ Դ Ա Տ Ա Կ Ա Ա Ն Կ Ա Ջ Մ Ի

ԳԷՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՆՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ Դասական Կազմը, որպիսիք համար կը յայտնէ, թէ մրցանակի ներկայացուած գործերէն, հրատարակութեան արժանի համարուած են հետեւեալ հասարակները.

1-- Մ. ԻՇԽԱՆԻ «ՏԱՌԱՊՈՒՅՑ» Բերքուածններու հասարը.

2-- ՀԱՅԿ ՅՈՎՍԷՓԵԱՆԻ «ՀԱՐՍԻ ԿՈՆԻԸ» ուանդավէպը.

3-- ՏԻԿ. ՍՈՆԱ ԶԷՅԹՎԵԱՆԻ «ՀԱՅ ԿԻՆԸ ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՇԱՐՃՄԱՆ ՄԷՋ».

որոնք արդէն լոյս տեսած են Կիլիկիոյ Կաթողիկոսարանի Տպարանէն:

Համաձայն գրական մրցանակի երկնադիր Տիար Գէորգ Մելիտինցի մեջի ժամաբանն եւ Դասական Կազմի մեքէին կանոնագրութեան, կրօնական, կրթական եւ մշակութային բոլոր հաստատութիւնները եւ կազմակերպութիւնները ի մտայ պիտի ստանան այդ հատորներէն մէկական օրինակ:

Ներկայ տարեշրջանին համար, Գ. Մ. Գ. Մ.ի ներկայացուելիք գործերը պէտք է հասած ըլլան Կիլիկիոյ Կաթողիկոսարան, Անթիլիաս, մինչեւ 30 Սեպտեմբեր 1968:

Այս առիթով, Գրական Մրցանակի Դասակազմը, կը յիշեցնէ ԳԷՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՆՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ հետեւեալ գլխաւոր տրամադրութիւնները.~

ՅՕԳՈՒԱՄ 10 -- Մրցանակի համար կրնան ներկայացուիլ բոլոր այն հեղինակութիւնները, հայերէն կամ օտար լեզուներով, որոնք կը վերաբերին ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻՆ՝ գրական, իմաստասիրական, պատմական, եկեղեցագիտական, բանասիրական, լեզուաբանական, հնարանական եւ այլ յարակից կայուածներուն մէջ:

ՅՕԳՈՒԱՄ 13 -- Մրցանակի համար գրուած կամ պատրաստուած երկասիրութիւնները պէտք է ներկայացուին Կիլիկիոյ վեհափառ Կաթողիկոսին մաքար, դիւրընթեռնելի ձեռագրով, նախընտրաբար զըրամեքենագրուած եւ երեք օրինակով, մինչեւ Սեպտեմբեր ամսըւան վերջը:

ՅՕԳՈՒԱՄ 14 -- Մրցանակի արժանացած գործերը միշտ պիտի հրատարակուին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Տպարանին մէջ, Անթիլիաս: Տպագրական բոլոր ծախսերը պիտի հոգացուին Մրցանակին յատկացուած գումարին տնօրոնով:

ՅՕԴՈՒԱԾ 15.- Մրցանակի տիրացած հեղինակը, անկախաբար իր գործի տպագրութեան, պիտի ստանայ հազարէն երկու հազար (1000 - 2000) լիբ. Ոսկիի պարգեւ մը Մրցանակին յատկացուած գումարին տակուէն: Այս պարգեւին քանակը պիտի նշուի ժիւրիին կողմէ, նուազագոյն հազար (1000) լիբ. Ոսկի ըլլալու պայմանով:

ԳէՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ Դատակազմը, պարտք կը համարէ նկատառութեան յանձնել մտեցումի հիմնական սկզբունքները:

ա.- ԳէՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԸ մրցում մը չէ ներկայացուած գործերուն մէջ լատգոյնը ընտրելու եւ պարգեւատրելու համար:

բ.- Մրցանակը կը տրուի այն գոյծին, որ այս կամ կայուածին մէջ - գրական, ստեղծագործական, ուսումնասիրական, եւայլն - կը ընդէ կարեւոր եւ շօշափելի նպատակ մը Հայ Մշակոյթին, եւ յանկեալ բարձր արժէքով մը կը հարստացնէ գայն:

գ.- Կրնայ պատահիլ, որ տարուան մը ընթացքին մրցանակ չտրուի, երբ Դատական կազմը ներկայացուած գործերուն մէջ չգտնէ ԳէՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ պայմաններուն համապատասխան հեղինակութիւն մը:

դ.- Կրնայ պատահիլ, որ մրցանակ տրուի՞ մէկէ աւելի գործերու, երբ անոնք լրացնեն ԳէՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ պայմանները:

ե.- Կրնայ պատահիլ, որ կարգ մը գործեր որոշ արժէքներ կը քերթեն իրենց յատուկ կայուածներուն մէջ, գնահատուին հրատարակութեան համար: Այդ պարագային հրատարակութեան ծախսերը կը հագացուին ԳէՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ նիւթական միջոցներով:

զ.- Ներկայացուած գործերը կը նկատուին վերջնական իրենց ներկայացուած վիճակին մէջ, եւ մրցանակի կամ հրատարակութեան արժանանալու պարագային, կը տպագրուին Գրական Մրցանակի Դատական կազմի որդեգրած հրատարակչական ձեւերուն համաձայն:

է.- Մրցանակին կրնան ներկայացուիլ ոչ միայն անտիպ ձեւագիր գործեր, այլ նաեւ գրութիւններ, որոնք լոյս տեսած են պարբերական մամուլին մէջ, եւ ի մի հաւաքուելով կրնան կազմել մրցանակի ներկայացուելիք հատար մը:

Գ Ի Ի Ա Ն
ԳԵՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ
ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ատենադպիր
ՅԻԻՉԱՆԻ ԵՂԻԱՅԵԱՆ

Ատենապետ
ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ

19 Մարտ 1968
Անթիլիաս - Լիբանան

Կ Ո Չ

ԲԱՑՑԻԻ ՏՈՒՆԸ ՎԵՐԱՎԱՌՈՒՑՈՂ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ

Ժողովուրդներու քաղաքակրթութեան շարժումներն մէկը, իրենց մեծ գաւազնե-
րուն յիշատակները կանգուն պահելու նպատակն մէջ կը կայանայ:

Հայ մեծամուն Վիպասան Բաֆֆիի ծննդավայրն ու հայրենի տունը, որ կը գտնուի
Սալմաստի Փայտուկ գիւղին մէջ, այժմ անբաղկ վիճակի մէջ է, ենթակայ մտայու-
թեան մտանուկու եւ թ սպառ կորսուելու:

Միշտ վերածնունդ եւ քաղաքակրթութեան շահակիր Հայը, չի կրնար մնալ արեւ
մնայ հայկականութեան վերածնունդ սղիթ մարզարէ, Հայ տաղանդի բացառիկ մեծութիւն,
Հայ դրակահուցեան արտան եւ անդերադասեան հայուն՝ Բաֆֆիի ծնած, ազրան, շըն-
յած ու մեծցած վայրի նկատմամբ: Եւ ահա, Քաւրիդի Հայ Մշակութային ԱՐԱՐԱՍ Միու-
թեան, ինչպէս նաեւ Քաւրիդի ԻՌԱՏՈՒ-ԳԱՍՊԱՐ՝ դրապարան-ընթերցարանի Վարչութիւն-
ները, միասնաբար կը նախաձեռնեն Բաֆֆիի Տունը վերակառուցանելու գործին:

Բաֆֆիի վերակառուցումն տունը պիտի դառնայ ուխտավայրը բոլոր Հայ ուղիով
ապրող եւ ներշնչուող հայութեան գաւազններուն, որոնք տարուան մէկ օրը, որ թերեւ
յարժարի Ս. Քաղի ուխտագնացութեան օրերուն նետ, այցելելով Հայկականութեան Բեթ-
լեհեմը, ներշնչուին այն ուղիով, որով ապրեցաւ եւ ստեղծագործեց Բաֆֆին:

Այս աշխատանքը ղեկավարելու համար ընտրուած է յատուկ Յանձնախումբ մը նե-
տեւալ կազմով— Եւրոտարապետ Էմիլ Յակոբեան՝ տաննապետ, առաջ. Գաւազնիկ Կալա-
աքեան՝ փոխ-տաննապետ, պր. Բուլիկ Բարսեղեան՝ ուսննադպիր, պր. Վարուժան Աւա-
րելեան՝ գանձապահ եւ պր. Սամուէլ Սարուխանեան՝ Քեհրանի ներկայացուցիչ:

Սկսուած նուիրատուութիւնները կը շարունակուին, եւ բոլոր անոնք, որ կարգա-
ցած են Բաֆֆին, հպարտ են Բաֆֆիով եւ իրենց սրտին մօտ կը համարին սկսուած աշ-
խատանքը, թող մասնակցին այն նախաձեռնութեան, ինչքանով որ կրնան:

Նուիրատուութիւնները կարելի է ուղարկել Կնդր. Յանձնախումբի հասցեով— Քաւ-
րիդ, Հայոց Առաջնորդարան՝ Եւրոտարապետ Էմիլ Յակոբեանին, կամ Քեհրան, Վերջին
Խմբագրութեան եւ «Նաշիբի» զրատան հասցէին՝ պր. Սամուէլ Սարուխանեանին:

Հանգանակուած գրամները պիտի կեդրոնացուին Քաւրիդի Միլի Գանձի յատուկ
հաշուին մէջ, իսկ կատարուած աշխատանքները, ինչպէս նաեւ նուիրատուութեան ցած-
կները կը յայտարարուին մամուլով:

Աշխատանքի ծրագիրն է, Բաֆֆիի տան սահմաններէն բացի, յարակից եկեղեցին
եւ իր ընդարձակ բակով, բոլորը մէկ ընդհանուր պատերու մէջ առնել, Բաֆֆիի բնա-
կարանը իր առանձին վիճակով վերակառուցել եւ մնացեալ տարածութիւնը պարտէզի վե-
րածել, որպէսզի այցելուները իջեւանելու տեղ ունենան:

Քող աճէն Հայ ազգային, պատուախնդրութիւն համարէ անմասն յիշուլու այս ծը-
րագրի յաջողութեան գործին մէջ:

ԲԱՑՑԻԻ ՅԱՆ ՎԵՐԱՎԱՌՈՒՑՈՂ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ

Քաւրիդ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

- ՈՒՌԿԱՆԸ (պատմաաճֆներ), Յ. Գեղարդ, Պէյրուք, 1968
- ԳԻՍԱԿԱՐԱՆ (խօսք եւ խորհուրդ ի խորաց սրտի), Ա. Ա. Պ., Նիւ
Յարք, 1967
- ՍԻՓԱՆԱՅ ԳԱՋԵՐ (պատմաաճֆներ եւ վիպակներ), Ս. Սիմոնեան, Պէյրուք,
1967
- ՅԵՂԱՍՊԱՆ ԹՈՒՐԳԸ (պատմական), Հայկազն Գ. Ղազարեան, Պէյրուք,
1967
- ՆՇԵԱՐՆԵՐ ՍԻՄՈՆ ՋԱՒԱՐԵԱՆԷՆ (երատ. Հ. Յ. Դաշնույցուքեան), Պէյրուք,
1968
- ԳԻՐՔ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ, Արամ Գառնէ, Թեհրան, 1968
- ԷՋԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ, Վ. Թարսեան, Պէյրուք, 1968
- ԴԱՏԱՎՃԻՌԸ (քառերգութիւն), Գեղարդ Սազնեան, Պէյրուք, 1968

ԱՊՐԻԼԻ ՎԵՐՋԱԻՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ Կ'ԵԼԼԷ

ՆԵՐՍԷՍ ՎԻՐԱՊԵԱՆ

ՆՈՅՆ ԹԱՂԻ ՄԱՐԴԻԿ

(ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ)

Ստամբուլ համար դիւնի «Բազիլե»-ի եւ «Ազգակ»-ի ցրտիչներուն

ՏԱՐԵԳԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻՐԱՆԱՆ 22 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 8 ՏՈՒԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ.—

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban

digitised by A.R.A.R.@